



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L6n

✓1595

1999

ԳԷՈՐԳ ՈՒԱՇԻՆԳՐԵՆ

ԳՈՐԾ ՖԵՐԳԻՆԱՆԻ ՇՄԻԴԹԻ



ԹՍՐԳՄԱՆԵՆՍ

Փ. ՎԱՐԳԱՆԵԱՆ

№ 153

ՏԵՐ ԵՒ ՀՐԵՏԱՐԱԿԸ

ՏԻԳՐԱՆ ԵԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ



ԳՄԻՌՆԻՆ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1874

ԳԵՈՐԳ ՈՒԱՇԻՆԳՐՆ



ԳՈՐԾ ՓԵՐԳԻՆՆԵՐ ԶՄԻՐԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ի ԳԵՐՄԱՆԵՐԵՆԷ

ՆՈՒՐ ԼԱՅՈՑ ԵՐԵՎԱՆԻՍԻՍԻՆ Ի ԹԱՐԳՄԱՆԶԻՆ

ԽՕՍԳ ԹԱՐԳՄԱՆԶԻՆ

Յերդինանդ Շմիդ մեծ անուն կ'զայել: Քերմանիոյ մէջ իբրև վարժապետ եւ մատենագիր: Նորա շարադրութիւնքը նոր 'ի նորոյ տպուելով սիրալիր ընդունելութիւն կ'ստանան ամբողջ ազգէն եւ գրագէտներէն, որք 'ի մի բերան կ'զովն հեղինակի հազուագիտ քանքարը: Սրդէն երկար ժամանակ է որ այս ազնուամիտ մարդը գործով, խօսքով եւ գրչով կ'նկրտի լոյս սիրելի վարժարանի եւ ազգի մէջ: Նորերս նորա արդիւնաւետ գործունէութեան քսանհինգամեակը տօնելիս՝ Քերմանացի հեղինակները արժանի գտան զարդարել նորա շնորհալի գլուխն արձանեայ պսակով եւ դասեցին զնա այն մտաւորական հերոսներու կարգը որով կ'պարծի Քերմանիան:

Մտնուկ սերնդի համար գրչով աշխատող մատենագիրք անթիւ են **Գերմանիոյ մէջ**, բայց նոցանէ ոչ մին կարող է հաւատարիլ **Ե. Ծմիղթին**, որ իրաւամբ կ'իւղչուի **Հեղինակ շնորհօքն Ստոււծոյ**: Իբրեւ փորձառու մանկավարժ եւ խորագէտ հոգեբան՝ նա գտած է երիտասարդութեան հետ պարզ խօսելու գաղտնիքը, որով միանգամայն կ'հրապուրէ նորա միտքն ու սիրտը: Հանձարեղ մատենագիրք չչողօքորժներ, չքծնիր պատանի ընծերցողներու առջեւ, դատարկ ու ծանծրալի քարոզներ չկարողար նոցա զլխուն, պժգալի շինծու խօսքերով եւ դերասանական սուտ զգացմունքներով զուն չգործեր գրաւել նոցա մտադրութիւնը, այլ կ'խօսի հետերնին իբրեւ հասուն մարդոց հետ եւ այնպէս շօշափելի կ'արտայայտէ իր մտքերը, այնպէս ճիշտ կ'ներկայացնէ պատմութեան դէպքերն եւ մարդկութեան զարդ ու պարծանք հանդիսացող նուիրական հերոսներու կեանքը, որ ամէն հասակի ընծերցող դուրաւ կ'ըմբռնէ, գրքի բովանդակութիւնը եւ կ'վառուի նորա մէջէն դուրս շնչող ջերմութեամբ: Հեղինակը ճարտասանական շարականներ չերգեր ազնուութեան վրայ, այլ օրինակով ցոյց կ'տայ նորա բուն արժէքը. չխառաբաներ աշխատասիրութիւնը, այլ մարդկութեան քաջ նահատակներու վսեմ գործերը յանդիման դնելով կ'ստիպէ սիրել աշխատանքը. փրօցուոյց սեծեւեծներ չհնչեր 'ի զովեստ հայրենասիրութեան, այլ որ առաւել լան է՝ 'ի սէր հայրենեաց զոյք, արին եւ կեանք զոհող անմահական մարդոց խօսուն պատկերներով կ'ոգեւորէ զմեզ հետեւիլ նոցա օրինակին: Սուլէքսանդր Հուլբրոլէն սկսեալ մինչև 'ի վերջին ընծերցողն ամէնքը միակերպ ստուգելով Ծմիղթի քանքարաւոր գրուածներու ազդեցութիւնը՝ միաբերան կ'վկայեն թէ նորա պէս դատարարակիչ մանկավարժ չկայ Գերմանիոյ արդի դպրութեան մէջ: Երանի՜ թէ մեր ազգն եւս նոր բանաբնութեամբ արդէն իսպառ դատապարտուած եւ այտուհետեւ անպէտք Տելեմաքներու, Սքէլներու եւ Պոմպիլիոսներու տեղ ընծեռնուր Ծմիղթի նման լուսասփիւռ վարժապետաց սրանչելի գրուածքը: Եր սեսազուիս հայկաբանները կ'սիրեն առաւել մտքընել ազգի մէջ իրենց պէս հնամուլ միջնադարեան բուրմերու սքոլասթիքական շարադրութիւնը, ժեզուիթութեան տիղմով զանգուած մարդկային միտք խաւարեցընող Պոսիւէի ճառերը, քան թէ ծանօծացընել զմեզ հոգի եւ կեանք ազդող նոր գրականութեան հերոսներու հետ, որպիսի են Ռուսօ Աեսսինգ, Հեուտեր, Պեօթէ, Եիլլեր եւ այլ բազումք, որք ոչ թէ սատանաներ ու դեւեր են, ինչպէս կ'կարծեն վանքերու մէջ երազ տեսնող արեղայք, այլ համօրէն մարդկութեան ջահեր, բարունապետք ճշմարտութեան եւ անվեհեր կարապետք դէպի լոյս եւ փրկութիւն: Սյս վսեմ հանձարներու հայերէն թարգմանութիւնը մայրենի լեզուն ուսանելու բախտ ոնեցող քաջ հայազէտներուն թողլով՝ մեր որ միայն անցողաբար, առանց վարժապետի եւ գողունի կերպով սովորած ենք թոթովել եւ եթ հայերէն՝ առ այժմ կ'առաջարկենք Հայոց երիտասարդներուն Ծմիղթի գրքոյկը, եւ շատ կ'իմդրենք շնորհել ներողութիւն մեր տկար գրչի թերութիւններու:

Ա

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Ես կ'զարմանամ՝ ձեր առաքինութեան, ձեր անձնուէր հայրենասիրութեան, ձեր անվկանդ քաջութեան և բարուց պարզութեան վրայ, որով դուք կ'զերացանցէք հնութեան ամենահաշակ մարդիկը:

ԿՈՄՍ ՀԻՐՅՈՒՐԳ, ՆԻՒՐԱՐ ՓԵՒԴԷՒՄԷՒՄ:

Ուաշինգթոն առաջինն էր պատերազմի մէջ, առաջինն էր խաղաղութեան ժամանակ և առաջինը հայրենակիցներու սրտին մէջ:

ՃՕՆ ՈՒՆԲՇԱՆ

«Պատմութեան մէջ մեր մտադրութիւնն ամենէն աւելի դրաւ ողջ ոչ թէ պատերազմներու նկարագիրն է, կ'ըսէ Հեուտեր գերմանացի իմաստասէրը, այլ որպէս ամբողջ ազգաց, նոյնպէս և առանձին մարդոց բարքը, վարքն ու բնաւորութիւնը: Արեւմն հոգեբանական պատմութեան աշխիւ նստատակը լինելու է՝ այլ և այլ վկայութիւններով և համեմատութիւններով՝ այնպէս լուսաւորել մարդկային բարքն, որ նորա կենդանի և խօսուն պատկեր ձևացընեն մեր աչքի առջև:»

Փորձենք հետեւիլ այդ խօսքերուն:

Այն վսեմ ողին, որոյ վրայ կատարելադործուելու հետամուտ ընթերցողի միաբեր կ'ուզենք արդ ուղղել, լոյս տեսաւ հիւսիսային Ամերիկայի Վերջին հեռաւոր անտառներու մէջ՝ 22 փետրուարի 1732:

Գէորգի հայրը՝ Աուգուսթին Աւաշինգթոն՝ հողատէր էր և ծագմամբ անկլիացի: Նորա պապը Անկլիայէն գաղթած էր հիւսիսային Ամերիկա, զոր առաջ հնդկիկները իրենց սեփականութիւնը կ'համարէին: Վերջը «Ամերիկայի ազատ նահանգներ» կոչուած երկիրը դրեթէ բովանդակ Եւրոպայի չափ մեծցաւ: Երկու հարիւր տարի առաջ այս ամբողջ երկիրը ծածկուած էր անհուն անտառներով, թաւուտ մացառներով և տեղ տեղ ահագին ճահիճներով և սափանս ասուած խոտուէտ դաշտերով:

Ռատիաճնօր դեռի արևելեան կողմը շինուած ընչաւեւ տան մէջ, ուր Գէորդ առջի անդամ նշմարեց արևի լոյսը, կ'Թաղաւորէին բարեպաշտութիւն, աշխատասիրութիւն և ազնուութիւն. այս էին այն նախընծայ պարզեաները, զոր երկինք շնորհեցին երեխային:

Զոկ ջոկ կ'ապրէին անկիւիայի նոր դաղթականներն անտաներու մէջ. հարեանները միանալով կ'լինէին եկեղեցիներ և վարժարաններ: Բայց Վերդինիոյ այն ժամանակուայ դպրոցները սակաւին շատ ստորին աստիճանի մէջ էին և կ'աւանդէին միայն կարգաւ, գրել, համբել և հաշուեպահութիւն: Նորեկ դաղթականներու մեծ մասն աւելի բան չէր պահանջեր մանկուոյն համար. իսկ հարուստներու որդիքն Անկիւիայ կ'երթային ուսանելու: Այսպէս Անկիւիա ուղարկուեցաւ և Գէորդի խորթ եղբայրը՝ Լօրենց Ուաշինգթոն: Լօրենց տանտու չորս տարօք աւագ էր Գէորդէն և սա, նորա Անկիւիա գնալու ժամանակ՝ տակաւին գրկի մանուկ լինելով՝ չէր կրնար միտքը բերել եղբօր պատկերը: Երբ Գէորդ ութ տարուայ համբակ էր՝ Լօրենց իբրև գեղեցիկ երիտասարդ վերագարձաւ հայրենիք: Քաջ կրթուած և լաւ դաստիարակուած կտրիճի գալուստն անբաւ ուրախութիւն պատճառեց գերդաստանի բուլոր անդամներուն և Գէորդ նոյն իսկ առջի վայրիեանէն ջերմ համակրութիւն մի զյայ նորա համար. քսանեւեկցամեայ Լօրենց ևս պատասխանեց նորան կենդանի մտերմութեամբ և կարճ միջոցին գորովադու թ սիրով սերտ միացաւ նորաբոյս ու խոհեմ մանկան հետ:

Գարձեալ մի որդի Անկիւիա ուղարկելը չէր անցներ հօր մտքէն. նա կ'ուզէր որ իր մահէն ետքը Լօրենց լինի տան զլուխը և բաւական կը համարէր, որ դէթ աւագ որդին ճոխ ուսում առած կորովի մարդ էր:

Այս պատճառով Գէորդ թաղական վարժարան գրուեցաւ: Ինչ որ ձեռնհաս էր աւանդել այս վարժարանը՝ նա ընդունեց ջերմութեամբ ու սուսնասիրութեամբ և այսպէս հիմ գրաւ իր յետագայ ինքնակրթութեանը: Նորա բնաւորութեան մէկ յատկանիշն այս էր, որ բոլոր դասերն ամենամեծ փութով, խղճի մտօք և մաքրութեամբ կ'պատրաստէր. տառ մի անգամ չէր ելեր նորա գրչի ծայրէն որ անուշագիր թեթեւութեամբ գրուած լինէր: Առ այս ասպոցոյց են նորա աշակերտութեան յստակ տեսարկները, որք պահուած են գեռ մինչև այսօր: Նոյն իսկ ջանասիրութիւնը կ'երև էր և նորան յանձնուած անային գործերու մէջ. ինչ բան որ ապսպրէին՝ կ'աշխատէր կատարել ըստ կարելոյն կատարեալ կերպով — նրբան և ճշին լինէր այն բանը: Թէ ինչ մեծ կարեւորութիւն պիտի ստանար այս սովորութիւնը նորա հոգեկան

զարգացման համար՝ տակաւին չէր հասկերար և կ'առաջնորդուէր միայն վաղ զարթած պարտաւորութեան զգացմամբ, որու աջակից էր արդարութիւն գործելու մարդուղ բարի կամքը: Վերջը միայն ճանաչեց նա աշխատասիրութեան մեծ խորհուրդը, որ է կազդուրել հոգւոյ զօրութիւնը: Չկայ բան մի որ կարելի չլինի գործելու թէ վատ. ժողովեցիք բոլոր այդ և տեսնոր որ գործը կ'աջողի քիչ թէ շատ իմացիք որ այդ գործէն աւելի բան չինած եղբար, զի վաստակեցար ներքին գոյութեանդ վրայ: Ով որ վերահասու է այս բանին՝ նորա համար ըստ երևութին գժուար գործն անգամ կ'կոյրընէ իր կ'ճոզ խայթը:

Այսպէս խճմտարար կ'վարուէր և բարոյականին վերաբերեալ գործերու մէջ. սիրաբ կրթու էր, բայց մտախոհութեամբ և կամքի զօրութեամբ գուն կ'գնէր զսակ բուն զգացմունքը. այդ իմանալով ընկերները վէճերու ժամանակ միշտ նորան կ'զիմէին և կ'հնազանդէին նորա գատաստանին: Ամենուն յայտնի էր որ նա թէև երբեմն կ'խոտորէր զբողոտելով սակայն և այնպէս իսկոյն պատրաստ էր խոստովանիլ յանցանքը, զի նորա համար զլխաւոր բանը արդարութիւնն էր և չէ թէ անձը: Առ նրպէս չհնազանդէին այսպիսի ընկերին:

Վաղ յերեան ելաւ նորա բնաւորութեան և միւս յատկութիւնը. այս էր սրատերազմական ոգին, որ ընդունած էր պապերէն: Նորա պապերը զինուորական քաջութեամբ անուանի մարդիկ եղած էին Անկիւիոյ ասպետական կարգի մէջ. նոյն զինուորական աշխոյժը կ'երեւէր և Լօրենցի վրայ:

Արեւմտեան Հնդկաստանի մէջ Ապահիլայիք յետուակարար շատ վատ կ'հասցընէին Անկիւիայոց առևտուրին. նոցա յանդգնութիւնը պատուհասելու համար Անկիւիան սկսաւ զբահաւոր նաւեր կազմել, և որովհետև հետև Անկիւիան Վերդինիոյ դաղթականներու հին հայրենիքն էր սոցա մէջ ևս հնչեց պատերազմի հրաւերը: Լօրենց իր հակմանը հետեւեալով իբրև կամաւոր զինուոր մտաւ բանակ և ընդունեց հարիւրապետի աստիճանը: Այս դէպքը մի տեսակ վրդովմունք ազդեց Ուաշինգթոնի պաշտօն: Այս դէպքը մի տեսակ վրդովմունք ազդեց Ուաշինգթոնի վրայ: Լօրենցի անուշագիր թեթեւութեամբ գրուած լինէր: Առ այս ասպոցոյց են նորա աշակերտութեան յստակ տեսարկները, որք պահուած են գեռ մինչև այսօր: Նոյն իսկ ջանասիրութիւնը կ'երև էր և նորան յանձնուած անային գործերու մէջ. ինչ բան որ ապսպրէին՝ կ'աշխատէր կատարել ըստ կարելոյն կատարեալ կերպով — նրբան և ճշին լինէր այն բանը: Թէ ինչ մեծ կարեւորութիւն պիտի ստանար այս սովորութիւնը նորա հոգեկան

եղբոր պատկերը՝ յորմէ հետէ սա մեկնեցաւ զինուորական զարդով
 պճնած՝ միշտ կ'ընդար նորա հողոյն առջև, որ նա եղբոր նամակները՝
 հօր շրթամբ ընտանեկան շրջանի մէջ կարդացուէն ետքը՝ խնդրելով
 կ'առնէր հօրէն և կրկին ու վերստին կ'ընթեռնուր, մանաւանդ երբ
 ազդմական գէպքեր յիշուած լինէին մէջը:

Այնուհետև Գէորդ գնտակի և այլ սոյն տեսակ խաղերու տեղ՝ զի-
 նուորական մարզմունք սիրեց. զուտ զուտ բաժնել գասրնկերները,
 պատերազմի կարդ սահմանել, գէնք որոշել, ճակատ կազմել, զօրա-
 հանդէս անել, հրաման տալ — այս էր այժմ նորա զբաղմունքը, և
 փոքրիկ զօրականներէն ոչ ոք չէր բողոքեր նորա անձնիշխան հրամա-
 նատարութեան գէմ: Գարձեալ ոչ ոք չէր գուշակեր թէ այս զբաղ-
 մունքն ևս մասամբ իւրիք նորա սպառնայ կեանքի նախադիմն էր: Ինչ-
 պէս որ առաջ իր փոքրիկ շրջանի մէջ գաստուորի պատիւ, նոյնպէս և
 այժմ հրամանատարի պաշտօն կ'վարէր. սակայն և այս զինուորական
 խաղերու մէջ պարզ կ'նշմարուէր նորա էութեան բուն յատկանիշը, որ
 էր ամէն մի դործ կատարել ամենամեծ ճշտութեամբ: Նա զիտէր զի-
 նուորին պէտք եղած յատկութիւնք և տոկուն եռանդով յառաջ կ'տա-
 նէր մարմնոյն կորովութիւն և ոյժ տուող կրթութիւնքը, որք են՝ վա-
 ղել, ոստնուլ, լողալ, տեղ ձգել, զօտեմարտիլ, և այլն: Փոքրիկ
 վաշտի պետն ու գլուխը՝ կ'ճգնէր իրաւամբ լինիլ պետ և գլուխ և
 կ'ուզէր որ իր ներքին արժէքը լիովին յարմար գայ կրած տիրողսին:

Քարթագէնի պաշարումէն ետքը Լօրենց վերադարձաւ գէպի տուն.
 Թող երևակայէ ընթերցողը, թէ ինչ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր
 Գէորդ նորա բերանացի պատմութիւններուն: Գէորդի զինուորական
 մարզմանց լուրը լսելով աւագ եղբայրն աւելի ևս համոզուեցաւ իր
 կանխիկ դիտաւորութեան մէջ, այսինքն թէ անշուշտ պէտք էր իբրև
 նաւաստի աշակերտ անկլիսական ծառայութեան տալ զԳէորդ. ծնողք
 ևս հաւանութիւն յայտնեցին այս խորհրդին: Իսկ ինքն Լօրենց կ'ուզէր
 նորէն գառնալ բանակը, բայց չկրցաւ մեկնիլ: Նա համակրութիւն
 զգաց Ռւլլիամ Գերֆաքս անուն հարուստ կալուածատիրոջ մի գասեր
 համար և նշանուեցաւ հետը: Հայրն անչափ ուրախ էր որ այս միա-
 ւորութեամբ ազգակցութիւն պիտի ծագէր իր և Գերֆաքսի յարգելի
 ու հարուստ տան մէջ, սակայն չեղաւ արժանի տեսնելու որդւոյ հար-
 սանեաց երանաւէտ օրը, զի յանկարծ հիւանդացաւ և մեկնեցաւ աշ-
 խարհէս:

Գէորդ տասնևմէկ տարեկան էր, երբ թաղուեցաւ նորա պատուա-

կան հայրը. հանդուցեալն իր երկու ամուսնութենէն ծագած զաւակ-
 ներու համար թողուց բաւականին նշանաւոր գոյքեր, այնպէս որ նոցա
 ապրուստը լիովին ապահոված էր: Լօրենց ընդունեց մի աղարակ ֆո-
 թօմէկ գետի եղբքը, ուր և բնակեցաւ նոր ամուսնոյն հետ:

Արտսեր որդւոյ վրայ կտակի մէջ հողաբարձու որոշուած չէր, այլ
 նոքա՝ մինչև իւրեանց չափահաս լինելն՝ յանձնուած էին մօր խնամ-
 քին, յորմէ յայտնի կ'երևի թէ ինչ վարկ ունէր կինը ննջեցեալ ամուսնոյ
 առջև: Ուաշինգթոն Իրվինգ պատմաբանը կ'ըսէ այս տիկնոջ մասին, թէ
 «Պարզ և առողջ մտքով զարդարուած՝ պնդութեամբ, բայց և զթաբար
 կ'խնամէր իր ընտանիքը և մեծարանքի հետ հաւատարմութիւն ևս
 կ'ազդէր սրտերուն»: Նա հանդուցեալ մարդու երկրորդ ամուսինն էր
 և իր սիրելի զաւակն էր անդրանիկ Գէորդը: Սակայն և այնպէս թեր-
 ևս նոյն իսկ պատճառով, պէտք եղած ժամանակ խստիւ կ'վարուէր
 հետը որ զերծ մնայ չարութենէ, և Աստուած կ'օրհնէր մօր բարի
 ջանքը: Այն ժամանակ Վիրգինիոյ կրթուած դաղթականներու մէջ մեծ
 համբաւ կ'վայելէին «Սըր Մէթիւ Հիլսի բարոյական և աստուածա-
 բանական շարադրութիւնքը»: Եւ այս դործը Գէորդի մօր սիրելի
 զիրքն էր, յորմէ նա ոչ թէ միայն իրան համար ոյժ և խրատ կ'քաղէր,
 այլև կ'ընթեռնուր զաւակներուն: Տան բարեկամները ներս մանելով
 յաճախ կ'տեսնէին զնա այն մատեանն՝ ի ձեռին տղայոց մէջ նստած:
 Յիշեալ բարեկամաց և իր յատուկ որդւոց վկայութեամբ՝ չէ թէ միայն
 քաջ հմտութիւն ունէր յօդուածներու ընտրութեան մէջ, այլև զի-
 տէր նաև ազգել մատաղ ունկնդիրներուն այն բարոյական վսեմ զգաց-
 մունքը, որով ինքը կ'համակուէր Հիլսի և կամ որ և է ուրիշ իմաստուն
 մարդու գրքի ընթերցանութեան ժամանակ: Իր սրտի եռանդը կ'թափ-
 անցէր տղայոց մէջ, և զի բայց յայտնանէ բոլոր տան կեանքն ու բարքը
 բարոյականութեան նուրբ ոգով ներշնչուած էր՝ ուստի մանուկներու
 ընդունած տղաւորութիւնքը չէին ջնջուեր, այլ թէ կ'զօրանային մանա-
 ւանդ: Վերոյիշեալ գրքի օրինակը նոյն իսկ մայրենի աջոյ «Մարիամ
 Ուաշինգթոն» վերնագրով մնաց Գէորդի մօտ իբրև մի թանկագին յիշա-
 տակ մինչև նորա վերջին շունչը. և նա ստէպ կ'վկայէր թէ որդեսէր
 մօր ոգեշունչ ընթերցանութեամբ կենդանութիւն առած այն նուիրա-
 կան գրքի խրատներն ամենազօրեղ տղաւորութիւն ունեցան նորա ամ-
 բողջ կեանքի վրայ: Այս զիրքը մինչև այժմ գեռ պահուած է Մօն-
 Ուէրնօնի գրադարանը:

Իր աշակերտական զբաղմունքը Ուաշինգթոն կ'շարունակէր անդու-

աշխատասիրութեամբ. պէտք չէին նորան քաջալերիչ խօսքեր, այլ թերևս զդուշարար խրատներ որ շատ հեռու չմտի իր շափազանց եռանդէն: Անդուսոյ փափաքով նա կ'այրէր ճոխացրնելու իր միտքն այլ և այլ գիտութիւններով և արուեստներով, և յառաջագիմու թեան կենսաբար ողին ուժղին կ'ըռնէր նորա մէջ:

Գէորդի առաջուայ Հոբբի վարժապետէն փոքր ինչ հեռու կ'ընակէր Արլլիաման անուն ուսուցիչը, յորմէ նա շատ բան չէր շահուեր. այս մարդու վարժարանին մէջնա կ'ուսանէր այժմ առևտրական հաշուետաւ հումթիւն: Արբան և չոր լինէր նիւթը՝ սակայն Գէորդ այս ճիւղին ևս ըստ կարելւոյն շուտ սիրելու կամքով զրգուած՝ չտիէ դորս արագ կը մտանար նպատակին: Ասես թէ նա մի յաղթական հերոս լինէր ուսման և գիտութեան ասպարէզի վրայ. նորա զէնքերն էին՝ խելք, կամք և յիշողութիւն, որք որքան և դորժածուէին՝ այնքան աւելի սրուութիւն և փայլ կ'առնէին: Անփոյթ և ծոյլ աշակերտներ նա կ'ատէր, այսպիսիներն անարգ կ'երեւէին նորա աչքին: Այս միջոցին նա կ'հաւաքէր ամէն տեսակ ընտիր յօբուածներ, որք պիտանի էին կեանքի մէջ, և այս ժողովածոյներէն մին կ'կոչուէր «գրաւոր շարագրութիւն» ուր նա շարած էր զանազան նկարապիւրք, փոխանակապիւրք, ընկալապիւրք, վկայապիւրք, վաւերապիւրք, երաշխաւորութեան պիւրք, պայմանապիւրք, վաճառման, վարձման, կապալի և ընկերակցութեան գրեր և կտակներ — և այս ամէնը խնամով և նշանաւոր խօսքերը մեծ մեծ տառերով գրուած:

Մարմնամարդութեան դալով Գէորդ վերջին տարիները շատ յառաջագիմութիւն կ'անէր. փութով կ'շարունակէր վերը յիշուած մարդմունքը՝ մանաւանդ սկսեալ այն բողէն երբ որոշած էին նաւաստի աշակերտ շինել զնա անկլիայոց ծառայութեան մէջ: Զինուորական մարդուն հարկաւոր յատկութիւնքը ճանաչելով նա առաջուց արդէն կ'ըզբացրնէր մարմինը և կ'մարդէր անգամները, նորա հայրնի տան մօտերը սոսոր գեռ ցոյց կ'տան այն տեղը, ուստի Գէորդ մի քար նետած էր Ռափահանօք լայն գետի միւս ափը: Նա վարժ էր և ձի նստելու և յապշուութիւն մեծաւորաց յաճախ կ'ոսանոր ամենհին նժողոյ վրայ և կը վկանդէր զայն քաջութեամբ:

Մինչ այս մինչ այն Լօրենց պատրաստութիւն կ'տեսնէր գիւրացրնելու եղբօր մուտքը նաւատորմի մէջ. Գէորդի համար խնդրած հրախրողիւն արդէն եկած էր և սա կազմ էր ՚ի չու. սակայն մայրը նորէն ծանր կըսէր յորդու վիճակը՝ հաստատ որոշեց այնպէս վաղ չթողուլ

զնա օտար աշխարհ: Մայրական թուլութիւն չէր որ թելադրեց նորան այս վճիռը. նա այնչափ բաներ լրած էր նաւաստեաց կողմիտ ու վայրագ կենցաղաւարութեան վրայ, որ բնաւ պէտք չէ զարմանալ, եթէ վճուողական բողէն սոսկմամբ յետ քաշուեցաւ առաջին խորհրդէն, որոյ կատարումն խարստ հեռացրնելու էր զորդին բարեգութ մօր խրատիչ ձայնէն և արդականներու նորաստարար աչքէն: Վերելի մօր կամքին հնազանդելով Գէորդ առանց դժուարութեան հրաժարեցաւ իր գիտաւորութենէն, և վերջը շատ շնորհակալ էր որ այն միջոցին մայրը չուրջ քննութեան ենթարկած էր իր վիճակը:

Յառաջ քան թէ շարունակենք Գէորդի կենսագրութիւնը՝ յիշենք այս տեղ և նորա մի այլ սովորութիւնը. նա ունէր մի օրապիւր, որոյ մէջ համառօտ կ'արձանագրէր իր մտքերը զանազան խնդիրներու վրայ և այն իմաստալի գաղափարները, զորս գտած էր զրբերու մէջ և կամ կ'լսէր բանիբուն մարդիկներէն: Ահարաւրենք պատանի ընթերցողները՝ այս բանի մէջ ևս հետեւիլ մեր Գէորդին: Նորա յիշատակարանի մէկ մասը կ'կոչուէր հասարակութեան և զբօսանքի օջ տանելու կանոններ, և այս կանոններէն մի քանիսը շատ կարևոր ճշմարտութիւնք են և միւսները ոչ այնքան կարևոր, զորս և կ'ուզենք յառաջ բերել այս տեղ: Այս պիտով նախ աւելի ճիշտ նկարագրած կ'լինինք Գէորդի բնաւորութիւնը և երկրորդ՝ առիթ տուած կ'լինինք որ թերևս մեր պատանի ընթերցողներէն մին կամ միւսը Գէորդի շտեմարանէն քաղուածք անելով խնդրի զրիչ առնէ և — յաւելցրնենք իբրև բարի խորհուրդ — հիմ՝ դնէ իր առաջին յիշարակարանին: Աւասիկ նորա նկատողութիւնքը.

Երբ մանես մարդոց մէջ՝ այնպէս բռնէ զքեզ որ բնաւ չվիրաւորես միւր կամ միւսի սրտիւր:

Մի երգեր ուրիշներու առջև ինքզ քեզ մեմուալով և զզրոց մի հաներ մատերով կամ ոտքերով:

Մի քնանար երբ ուրիշները կ'խօսին, մի կանդնիր երբ ուրիշները նստած են, մի խօսիր երբ հարկ է լուել և մի երթար յառաջ երբ միւսները կանգ կ'առնուն:

Աննդ առ քեզմէ աւազին հանդիպելիս և ճամբոց տուր նրան՝ մանաւանդ դրան և կամ մի նեղ անցքի մէջ:

Աստիճանաւոր և պաշտօնատար անձանց ամէն տեղ վայելէ բարձ ու պատիւ. բայց եթէ նոքա երկտասարդ են՝ պէտք է որ մեծարանք շնորհեն այն մարդոց որք թէև հասարակային պաշտօն չեն վարեր, սակայն պատուելի են ծաղմամբ և ազնիւ բնաւորութեամբ:

Ձքաղենալ և գործի աէր մարդոց հետ կարձ' կտրիր խօսքդ :
Թէ որ բան չզխտես՝ բժշկի դեր մի խաղար հիւանդին այց անելիս :
Քարող մի տար իր բանը քեզմէն լաւ գիտցողին, թէ ոչ արածդ կը
լինի յանդգնութիւն :

Թէ որ կ'ուզես խորհուրդ տալ կամ յանդիմանութիւն ասել ընկերիդ՝
նախ լաւ կըռէ — արդեօք հրապարակաւ պիտի անես թէ դազածի, իս-
կոյն թէ վերջը և ի՞նչ խօսքերով . յանդիմանելու ժամանակ մի ցոյց
տար բարկութեան նշան, այլ հեղութեամբ խօսիր և քաղցրութեամբ :

Վմէն նկատողութիւն՝ երբ և ուր անեն քեզ՝ ընդունի՛ր շնորհակա-
լութեամբ . իսկ եթէ անպարտ կ'համարես զանձդ՝ դիպող ժամ և յար-
մար տեղ դանելուդ պէս՝ յայտնի՛ր զայն կշտամբողիդ :

Մի յանդիմաներ ընկերդ այն բանի մէջ յորում անպարտ չես և
ինքդ . զի օրինակն աւելի ազդու է քան թէ քարողը :

Զգոյշ կաց որ մի վերաւորիչ խօսք և հայհոյանք չսպրդի շրթուն-
քէդ :

Ընկերիդ մնասող շուտափոյթ լուրերուն մի հաւատար :

Պարզուկ հանդերձ հազիր և մի ջանար զարմայրնել շորերովդ . ա-
մէն բան թող չտիտլ լինի ու հանգիստ :

Թէ որ կ'ուզես յարգել պատիւդ՝ բարեկամացի՛ր ազնիւ մարդոց հետ .
զի լաւ է բոլորովին միայնակ մնալ քան թէ մտնել վատ արանց ընկե-
րութեան մէջ :

Երկու հոգի որ վիճին՝ առանց հրաւերի մի անցնիր մինի կամ միւսի
կողմը և մի լինիր կամակոր, անտարբեր բաներու մէջ միացի՛ր մեծա-
դոյն մասին :

Զբօսանքի մէջնախանձ և չարութիւնցոյց մի տար, այլ մեղմ բարու-
թիւն . իսկ եթէ կըբող յուզուիս՝ նայիր որ խելքդ լինի քեզ առաջ-
նորդ :

Մի կշտամբեր այլոց թերութիւնքը, զի այդ վայելէ միայն ծնողնե-
րուն, վարժապետներուն, մեծերուն :

Մտածի՛ր յառաջ քան թէ խօսիս, և պարզ խօսիր . բաւերը շուտով
մի թափեր բերնէդ, այլ որոշ ու մեկին արտասանիր :

Ուշադրութեամբ ինչն զիւր ընկերիդ խօսքին և մի արդիւնք որ
միւսներն ևս լսեն նորան . իսկ եթէ նա կասի կամ շրտնու խօսքի մէջ
մի օգնիւր մինչև որ ինքը չխնդրէ զքեզ . խօսքը մի կտրիր և պատաս-
խանիր երբ որ աւարտէ ասելիքը :

Մի շտապիր պատմելու լսած լուրերդ, եթէ չզխտես որ ստոյգ են :

Խօսելու ժամանակ հանդիստ և զգուշութեամբ խօսիր՝ ուլ և լինի
աւնկնդիրդ — ականաւոր անձն թէ փանաքի ոմն :

Երբ մեծաւորդ ուրիշի հետ խօսքի վրայ լինի՝ դու սուս եղիր և մի
ծիծաղիր :

Շատախօս մի լինիր, մի խորշիր ասելիքէդ և մի կըրկնիր հազար
անգամ մի և նոյն բանը :

Կ'նչ և պատահի սեղանի վրայ՝ մի նեղանար, այլ զսպիր բարկու-
թիւնդ և զուարթ կաց, մանաւանդ երբ հիւրեր լինին տունդ . զի լաւ
է ուրախ և շէն սիրտ քան թէ փարթամ հացիկերոյթ :

Երկիւղածութեամբ և պատկառանք խօսիր Աստուծոյ և նորա
բնութեան վրայ, հնազանդ կաց ծնողներուդ և պատուի՛ր զնոսա՝ թէ և
աղքատ լինին :

Արիական թող լինին զուարձութիւնքդ, բայց անարատ :

Վատ պահիր սրտիդ մէջ այն երկնային փոքրիկ կայծը որ կ'ասուի
խիլձ :

Բ

ԵՐԿՐԱԶԱԳ

Անկիլիական նաւաստի դառնալու մտքէն՝ մօր որոշմամբ հրաժարուե-
լով Գէորդ շարունակեց իր սլարապմունքը Գիլիամսի վարժարանին
մէջ, ուր կ'փափաքէր հիմնուլին ուսանիլ երկրաչափութեան արուեստը :
Այժմ գլխաւորապէս կ'սովորէր երկրաչափութիւն և ուրուագրութիւն :
Աշակերտութեան վերջին տարին նա չափեց դպրոցին պատկանեալ ար-
տերն ու դաշտերը և սահմանեց աղարակները . այս գործը, որ նորա
համար գեւ միայն մարդմունք էր, այնպիսի խնամքով կ'հոգար որ ասես
թէ վերջ 'ի վերջոյ երգմամբ հաշիւ տալու էր ճշտութեան մասին : Ա-
մէն բան ինչպէս են նկարներ, համարներ, ապացոյցներ՝ ուշի ուշով
թղթի կ'անցընէր և այս թղթերու մէջ չէր տեսնուեր ոչ մի յաւելուած
և ոչ մի աւելորդ բիծ, և եթէ մերթ սխալէր՝ այնպէս ճարտար ու
յոտակ գուրս կ'ջնջէր զայն որ յետոյ մանրակրկիտ հետադօտութեամբ
միայն կարելի կ'լինէր նշմարել քերուածքը : Յայտնի բան է որ այս

փութափրութիւնն և ամէն գործի մէջ ճշտութիւն բանեցընելը անհրաժեշտ պիտոյք և երկրորդ ընտրութիւն եղած էր նորա համար — այստով կ'ապրէր: Նուազ չէր նորա խնամքը և կարգապահութեան ու պարզութեան նկատմամբ: Ոչինչ բան, կ'ըսէ Իրվինդ, չէր գործեր նա շտապով, վեր 'ի վերոյ և կիսատ, և այսպէս կըթուած սովորութեանը մինչև կեանքին վերջը հաւատարիմ կ'մնար, և հրքան պրճնկուած լինէին գործերը և որքան հաշող ու ճնշող հոգսերը վտանգաւոր և տաժանելի պաշտօններու մէջ, զորս ստիպուած էր յաճախ վարելու, միշտ ժամանակ կ'գտնէր աւարտելու մէջ բան և լաւ աւարտել. նա գտած էր մեթոտի զաղանիքն և հրաշք կ'գործէր: Սթուաբանութենէն զատ նորա ուսումը թերատ էր, թերևս լեզուի հասարակ կանոններն անգամ չէր սովորած վարժարանի մէջ. զէթ այսպէս կարելի է եղբայրակել նայելով նորա աշակերտական տետրակներուն, ուր ստէպ կ'ընարութիւն քերականութեան սխալներ: Սակայն և այս գործն 'ի կատար հանեց, քանի որ մի անգամ որոշած էր կատարել. և երկայնամիտ աշխատութեամբ, ընտիր զըբերու ընթերցանութեամբ և համեմատութեամբ այն աստիճանն հասաւ, որ կարող էր թէ բերանացի և թէ գրաւոր ոճով մաքուր և ճիշտ արտայայտել իր մտքերը, նաև սքանչելի վսեմութիւն շնորհել լեզուին, որոյ մի քանի օրինակները յետոյ պիտի ցոյց տանք ընթերցողին: Միայն լեզուազիտութեամբ չէր կրնար 'ի հարկէ հասնիլ այն աստիճանին որ նորա գրուածներէն իբրև զլիսաւոր յատկանիշ պարզութիւն, ուղղութիւն և արդարութիւն զուրս փայլէին. այս բաներու նկատմամբ նորա ոճն իր քնութեան հայելին էր:

Գէորդ երջանիկ կ'համարէր զինքը որ աղջակցութեան յօդերով առիթ կ'ստանար մտնել մի քանի կրթութեամբ սներու մէջ. արդէն պատմեցինք որ նորա եղբայրը բարեբաստիկ ամուսնութեամբ նիւթապէս լաւ յարգարուած կեանք կ'վարէր Մօն-Վերնոն կալուածքի վերայ: Սորամէն մի քանի մղոն հեռու կ'գտնուէր Ռիլլիամ Ֆերֆաքսի ազարակը Բեյլուաւ: Այս մարդու կեանքը լիք էր պատահարներով. ծննդեամբ անկլիացի, պաշտօնով զինուորական, մի քանի արշաւանքներու մասնակցելէն ետքը՝ անկլիական կառավարութեան ձեռքով կարգուած էր կուսակալ և բարձրագոյն գատաւոր արևելեան Հնդկաստանի կղզիներէն մինի վրայ և այժմ կ'ընակէր Վիրջինիա, ուր արդէն տարիներով գահերեցութեան պաշտօն կ'վարէր արքունի խորհրդարանի մէջ: Այս փորձաւոր և զուարթամիտ մարդու տունը, որ աւելցը-

նենք՝ շատ սիրարժան և բարեկիրթ ուստերք և գտներք ունէր, նոյնպէս բայ էր Գէորդի առջև: Տարակոյս չկայ որ զիտութեան արժանի ամէն մի բանի համար արթուն աչք և ականջ ունեցող սլառանին շատ բան սովորելու էր Բեյլուաւի մէջ:

Սակայն Գէորդ նոյն միջոցին իսկ մի աւելի նշանաւոր և աւելի հետաքրքրութիւն շարժող մարդ ճանաչեց Ֆերֆաքսի տան մէջ — նա էր մի անկլիացի քաջատոհմիկ ազնուական Ռիլլիամ Ֆերֆաքսին համանուն հօրեղբայրը, որոյ հետ Գէորդ իր եղբոր ամուսնութենէն յետոյ նոյնպէս կասկած էր աղջակցութեամբ: Այս Ֆերֆաքսը գրեթէ վտանգամեայ անձ մ'էր. հասակով վեց կանգուն, նիհար, ջլուտ և սուկորուտ, պարզ գորշագոյն աչքերով, սուր գծադրուած դէմքով և արծուաքիթ: Անկլիոյ մէջ նա թէ սուսերով և թէ գրչով հաւատար անուանի էր: Յաջողակ ամուսնութեամբ անհուն երկիրներ ստացեր էր Վիրջինիոյ մէջ՝ յատկապէս Ռապահուսը և Ֆոթոմեկ գետերու մէջ տեղը դառնուած ամբողջ նահանգը, որոյ սահմանները յետոյ Ալլէգանի լեռներուն հասնելով աւելի ևս լայնացան: Այս ահագին կալուածքի վարչութիւնը Լօրտին հաճութեամբ առ ժամանակ կ'հողար Ռիլլիամ Ֆերֆաքս: Լօրտը տակաւին նոր եկած էր Վիրջինիա՝ տեսնելու առջի անգամ իր հոյակապ, արդարև արքայական հողերը: Անտառախիտ վայրի աշխարհ, բայց որպէս շքեղ:

Մի քանի խօսք Վիրջինիոյ բնութեան վրայ: Այս երկիրը, որ մեծութեամբ գրեթէ Քրանսիոյ կէսին չափ է, Ալլէգանի լեռներով երեք մասն կ'բաժանուի, որք են՝ սարուտ մասն (մեծահամբաւ ժայռի կամուրջով, որոյ բնական կամարի տակ 250 խոր վճի մէջ պարսպաձև ապաւածներու ստորտով յորդան կ'տայ Աետրանեան փրփրադեղ հեղեղը) արևելեան աւաղուտ և մասամբ ճահճային մասն և վերջապէս արևմտեան բարեբեր և կոհակնաձև մասը, որ կ'հասնի ՕՏիո գետին: Երկիրը շատ արգաւանդ է և անչափ դաշտեր և սիգաւէտ արսեր ունի խաշնեցու համար: Վայրի որթերով և ոլորուն բոյսերով պատուած թաւամուր անտառներու մէջ կ'երևին հացիք, ուռիք, կաղնիք, շագանակնիք, բարտիք, կակաշք, թմբիք, կնձնիք, մայրիք, ցախիք, սարոյք մտղնողիկիք, նոճիք, կեռասենիք, սալորիք. վայրի թռչուններն ու երկները կ'վիտան ծառատաններու մէջ, իսկ գետերը լիքն են ձկնով:

Լօրտ Ֆերֆաքս երևակայած անգամ չէր այսպիսի ճոխութիւն գտնելու իր կալուածին մէջ. և նրպէս հրապուրիչ կ'թուէին նորան այս կուսական հողի մշակութեան համար պէտք եղած աշխատանքը:

ըրպէս ունայն և սին կ'երեւին մեծ քաղաքներու մատակարարած փարձ
 թամ զուարճութիւնքը՝ յանդիման այն պարզուկ ուրախութեան, զոր ա-
 ուատ կ'վայելէ Տինորեայ անտառներու մէջ վաստակող ժրջան տանտէ-
 րը: Նորա աչքերը չէին կրնար բնաւ յաղենալ դաշտերու հրաշալի տե-
 սարանէն: Երևի թէ Շաթօրբիան ևս զմայլած էր նորա նման, երբ կը
 գրէր հետեւեալ խօսքերը. «Քրայիսի հմայական խառնուրդ ընկերական
 կենակցութեան և վայրենական վիճակի: Այս փոքրիկ մայրոյ ետեւէն,
 որ հինաուրց խիտ անտառի մի չքնաղ մնացորդն է, կ'նշմարեմ աւա-
 սիկ գեռ նոր սկսուած մշակութեան անդրանիկ դաշտերը. զետնատա-
 պալ կաղնեայ արմատներու մօտ վէտ վէտ կ'շարժին հասկերու ոսկե-
 գոյն ալիքը. արմատախիլ ծառերու տեղը բռնած են լիուլի որայք՝ մի
 միայն մէկ ամառուայ վաստակոց նախընծայ խայրիք. պարարտ մարդե-
 րու վրայ հրկիզուած անտառներէն վեր կ'սլանան ծխի թաւ թաւ ամ-
 պերը. փլատակներու մէջէն յամրաշարժ յառաջ կ'երթայ մշակի խոփը,
 երկրաչափներն աստ և անդ սիւներով կ'որոշեն սահմանները. վայրի
 թռչունները խոյս կ'տան բուններէն և զիշատիչ գազաններու որջերը կը
 դառնան մարդկանն անդորր բնակարան, և տասպարի ամէն մի հարուա-
 ծը հնչմամբ կ'աւետէ այս դաշտերու վրայ ընդ փոյթ իջնելու երկնից
 առատ օրհնութիւնը:»

Այսպէս ուրեմն այլևոր և ժիր Լօրտը վճռեց նստիլ իր երկրի վրայ
 և այլ ևս չվերադառնալ յԱնկլիա: — Առ այժմ նա կ'բնակէր քեռոր-
 գոյ ազարակին մէջ՝ Բերվուառ:

Գետք է ասել որ թէ և Լօրտը մեծ սէր ունէր բուսական աշխարհի
 համար, բայց առաւել աղուէսի որս կ'սիրէր, և որովհետև Ալիզինիոյ
 անտառները զրեթէ լիքն էին խորամանկ աղուէտուկի ընկերներով,
 ուստի Լօրտը աւելի ևս սիրահարուեցաւ իր գետնին. որսի ժամանակ
 անշուշտ պէտք էր մի ուղեկից. ուր գտնէր Լօրտը այնպիսի մի ձիա-
 ւոր, որ գէթ փոքր ինչ հաւասար գար իր պէս քաջ ու զինադրաւ առ-
 պետին, մանաւանդ այն բլրուտ և թփուտ երկրի վրայ, որ գեռ մարդս
 ամբ չէր դրած բնակին:

Ընթերցողիս մտքէն թերևս յուշիկ կ'անցնի որ մեր Գէորգի ար-
 մար որսակից կարող չէր գտնել կայտառ ձերուներն. և իրաւ որսը և
 բռնելու ժամանակը հասածին պէս՝ Լօրտն ու Գէորդ միայն չէին
 ու շնորով ամէն առաւօտ կ'երթային դաշտերը և հազիւ կ'
 որ առանց որսի տուն դային:

Իր անհուն գետններէն Լօրտը մինչև այժմ միայն փոքրագոյն մար

տեսած էր և մտողիւր ևս չէր բնաւ թափառիլ ներսերը՝ ամբողջ կա-
 ռածքը գինելու. սակայն կ'ուզէր չափել տալ զայն, որովհետև լրած
 էր ինչ որ աղթականներէն ոմանք գալով՝ յանիրաւի գրաւած էին մի
 քանի տներ: Եւ պէտք էր շուտ սկսիլ չափուլը, զի այսպիսով միայն
 կարելի էր կանոնաւորել կալուածատիրոջ և նորեկներու փոխադարձ
 արարքները:

Այժմ Լօրտը կ'ուզէր գտնել մի բանիբուն երկրաչափ, յատկաբար
 այնպիսի մի մարդ, որ բաց 'ի հմտութիւն ունենալէն՝ լինէր նաև հա-
 տատարիմ և քաջասիրտ: Երբ լօրտ Ֆերֆաքս և Լօրենց Ուաշինգթօն
 խորհուրդ կ'տեսնէին այս մասին՝ վերջինս յառաջ դրաւ իր ազարակի
 ծրարիքները, հաշիւներն ու պատկերները, որք դեռ նոր քաջուած է-
 ին Գէորդի ձեռքով. և Լօրտը այն աստիճանի հաւանեց պատանու
 աշխատութիւնքը, որ լիակատար վստահութեամբ յանձնեց նորան
 երկրաչափութեան գործը: Գէորդի հաճութեան վրայ նա տարակոյս
 չունէր. և պատանին լաւ հասկընալով որ ծերունոյ առաջարկութիւնն
 իր մանուկ հասակին պատիւ բերող հաւատարմութեան մի նշան էր և
 արհեստին մէջ մարդուելու պատեհ առիթ՝ իրաւ յօժար էր սրտի մտօք
 ընդունիլ Լօրտի հրաւերը: Աւելցընենք թէ այս գործը, զոր նա ար-
 գէն 'ի սէր միայն աշխատութեան պատրաստ էր յանձն առնել, նիւ-
 թապէս ևս շատ ձեռնտու էր, զի իւրաքանչիւր օրուայ աշխատանքի
 համար քառասուն Փրանք պիտի ստանար Լօրտէն: Նա գնաց տուն
 մօր հաւանութիւնը խնդրելու: Ամէն մի յառաջադէմ պատանի զիւրաւ
 կարող է ըմբռնել թէ ինչ զղջմունք կ'յուզուէին նորա սրտին մէջ,
 երբ իրեն վիճակուած պատուոյ և ամենայն մտամբ շահաւէտ յանձն-
 արարութեան լուրը կ'փութար յայտնել կաթողին ծնողին:



Գ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

Ուաշինգթօնի բարձր և յաղթանակ հասակին և զոյն բարբիս նա-
 յելով ոչ ոք չէր կարծեր որ նա գեռ վեշտասանամեայ պատանի էր, և
 ամէնքը պատկառանք կ'վարուէին հետը: Նորա բնաւորութեան էա-

կան ձերքն էին՝ Լըճմուռ թիւն, ազբու թիւն, սիրալիր մտերմութիւն և
հեղութիւն:

1748 թուականին ուղեկից առնելով Ռուսիայի Գերմանիայի երկուս-
սարգ որդին և մի խափշիկ՝ Ռաշինգ թիւն սկսաւ երկրաչափ ուղեորու-
թիւնը: Երեքն ևս ձիաոր էին: Չափելու երկրին հասնելու համար
պէտք էր անցնիլ Ասպոյտ լեռներու գեղեցիկ շղթայէն, որ այն ժամա-
նակ Ալիքիկոյ արևմտեան սահմանը կ'կազմէր: Զիւնն ու սառցոյր
տակաւին հալած չէին սարերու վրայ՝ մինչդեռ հովիտները զարնան
ծաղիկներով կ'երկնէին դոյնդոյն: Ճամբան մերթ թառուս էր, մերթ
քարուտ և մերթ հալեալ սահանքներով միանգամայն ջուր կոխուած:
Գալ ձիաորներն արիւթեամբ յաղթեցին այս բոլոր խութերուն և մի
ձորի միջով հասան քսան հինգ անկլիական մղոնի չափ հեռու գրուած
Ալիքիկոյ գալարագեղ հովիտը, ուր կ'հասէր Հնդկներէն Արեւոյ
գոտի անուանեալ կարկաշտն վտակը:

Գէորդի յիշատակարանը շատ հարուստ է այն երկրի եռանդուն
նկարագրութիւններով. բայց յորմէ հետէ ձեռն արկաւ դործի՞ն նկարա-
գրութեանց հետքն անգամ չերկիր գրքին մէջ. այն օրէն սկսեալ կ'ըզ-
բաղէր միայն պաշտօնին: Անտառաբնակ գաղթականներ սակաւ կ'պա-
տահէին ուղեորներուն, որք օթեան չդանելով՝ կ'ստիպուէին ծառերու
տակ հանգչիլ զիշերները. նոցա սնունդն էր վայրի բազ և այլ
թուշուք, զորս շամփուր զարկած կ'խորովէին կրակի վրայ:

Մեր ձիաորները պինդ զրահաւորուած էին զէնքերով, զի հարկ
էր զգոյշ լինիլ բնիկ հնդկներէն, որք հաշտ աչքով չէին նայեր նորեկ
գաղթականներու վրայ: Երկիրը մեր սեփականութիւնն է, կ'ասէին
նոքա, և յափշտակիչ աւազակ կ'անուանէին զձերմակները: Երկու կող-
մէն ևս փոխադարձ ատելութիւն կ'տիրէր և երկու կողմէն ևս պակաս
չէին անողորմ թշնամութեան օրինակները, և կարելի չէ ուրանալ որ
Եւրոպացոց անդթութիւնը առաւել սաստիկ էր: Սակայն Ռաշինգ թիւնի
ժամանակ Եւրոպացիք վաղուց արդէն ջան կ'ընէին տարածել հիսուսա-
յին Ամերիկայի մէջ մշակութեան բարեբեր արդասիւքը և եթէ հնդկի-
ները հակամտ և բնդունակ լինէին սեփականել զայն՝ անշուշտ կարող
պիտի լինէին ընկերութիւնք կազմելով հետեիլ եկաւորներու զարգաց-
ման օրինակին և իրենց համար ևս հիմնել ջոկ ջոկ վարչական նահանգ-
ներ այն անհուն դաշտերու վրայ, որք ամէնքի բնակութեան համար
ևս հերքէ էին:

ԳՅ
ԵՏ/ԵՄ

Բայց որովհետև նոքա չկամեցան որքան և է մարդակայել կենակցու-
թիւն հաստատել, հետեւաբարցաւալի կ'լինէր եթէ այնպիսի անհաղին
և տարօրինակ բարդաւաճութեամբ զեղուն մի երկիր առ միշտ մնար
քաղաքակրթութեան թշնամի ազդին ձեռքը, որ թուով հաղիւ թէ կը
հասնէր մէկ հարիւր հազարի: Այս ազդը զրեթէ չէր բազմանար,
մինչդեռ Եւրոպացոց անկողութիւնը չափազանց առատ էր: Ասեմք
թէ ինչպէս հնդկի իշխաններէն մին, որոյ անունն էր Փոքրիկ Արիայ,
թէ և այլ բանօրէն, բայց յէականին շատ ուղիղ կ'արտայայտէ այս
տարբերութեան պատճառը: «Չեմ հասկնար ձեր բանը, իմ ձերմակ-
ներ, կ'ըսէր նա, հազիւ թէ երկու սերունդք անցան միայն յորմէ հետէ
ոտք զրեք մեր գետնի վրայ և արդէն աւասիկ մեծոյներու պէս ծածկե-
ցիք զայն, մինչդեռ մեր բնիկներս, որք ուղիտէ ինչ ժամանակէ՞ ՚ի վեր
կանք այս տեղ, գեռ այնպէս նստցանուած ենք ինչպէս մեր եղջերու-
քը, զորս կ'որսաք գաջտերու մէջ: Այս ևս կայ որ գուք փիխ չափ
փոքրիկ հողէն անդամ մեծ մեծ արդիւնք գուրս կ'բերէք և այս սենե-
կէս թերեւս տաս քսան անգամ լայն տեղէն ամբողջ տարուայ հարուստ
ապրուստ կ'հանէք. առ այս կ'առնէք քիչ մի գալարուտ երկիր և այն
սեղ ձեր կողմ բտելով՝ կ'ստանաք կաթն և միս: Այն ինչ մեք կարմիր-
ներս անհուն սահմաններու կարօտ ենք, զի եղջերուն զօր կ'որսանք և
որ հաղիւ թէ երկու ծրուայ սնունդ կ'ոտայ մեզ, լայնածաւալ դաշտեր
կ'ուզէ օրինաւոր հասակ առնելու համար: Եւ եթէ որսանք երկու
կամ երեք հարիւր եզրիկ ասել է թէ ճարակեցինք կերանք այն բոլոր
արօններն ու թուփերը որով նոքա կ'ապրէին: Սպիտակ մարդիկը կը
տարածուին իբրև իւր տակի վրայ, իսկ մեք կ'հալինք որպէս զարնան
ձիւն, և եթէ շուտով մի ուրիշ ճամբայ չբռնենք՝ իսպառ կորչելու է
կարմիրներու սերունդը:» Դժբախտաբար նոքա չբռնեցին այդ ճամ-
բան:

Գէորդ որ մինչև այժմ գեռ հնդկներ տեսած չէր՝ մի օր հանդի-
պեցաւ երեսուն ձիաոր կազմող մի վաշտի, որոյ գլխաւորը զբռնակի
տեղ սպանուած թշնամու դաղաթիւն մորթը կ'տանէր առջեւէն: Մեր
ուղեորները նեղի մէջ էին, վայրենի մարդիկը կարող էին զիւրաւ յար-
ձակիլ վրաները և թերեւս յարձակէին, եթէ մերոնք որ և իցէ երկիւղ
յայտնէին: Բայց նոքա իմանալով որ այս տեսակ հանդամանքերու մէջ
ամէն բանէն գլխաւորն էր արիւթիւնը՝ պինդ քարշեցին նոյններու
սանձը և համարձակ ընթացան հնդկներու հանդէպ: Հնդկներուն
առաջարկուած ուկեր ըմպելին այն աստիճանի հաշտ զգացմունք ազ-

չեց սրտերուն, որ այս պարզելի փոխարէն կամեցան պատերազմական մի պար պարել մեր ուղեորներու համար: Երեկոյ էր. հնդիկները կրակ վառեցին դաշտի վրայ և բազմեցան կրակի շուրջը: Առաջնորդը սկսաւ երգել իրենց վերջին քաջութիւնքը, նախ մեղմ ձայնով և շարժ մունքով և յետոյ արագ արագ: Չինուորները նստած էին զլիսիկոր — ասես թէ կ'երազէին քնոյ մէջ. երդի վառվառուն խօսքերը ազդեցին և յանկարծ մինը վեր թռչելով վայրենի պար մի պարել սկսաւ: Հետո՞ գհետէ ամէնքը ողևորուեցան և զարհուրելի աղաղակով և կատաղի շարժմամբ խարոյկի չորս կողմն ուստոստելով ցոյց տուին թէ ինչ էր պատերազմական պարը: Թմբուկի տեղը կ'ընէր եղնիկի կաշիով պատած ջրով լեցուն մի կամսայ, իսկ միւս երաժշտական գործիքն էր՝ մէջը դնտակներ ունեցող ձիու պոչով զարդարուած շիշածն մի դդում, զոր կ'բախէր զինուորներէն մէկը:

Մէկ ամսուայ մէջ Գէորդ աւարտեց երկրաչափութիւնը և դարձաւ Մօն-Վեռնոն հաշիւ տալու լօրտ ֆերֆաքսին, որ շատ գոհ մնաց նորա աշխատանքէն:

Լօրտի յանձնարարութիւնն ուղիղ կատարելով՝ երիտասարդ Աւաշինգթն ճարտար երկրաչափի համբաւ ստացաւ, և գեռ տանեկեօթ տարու չկար, երբ Վիրգինիոյ վարչութիւնը պտշտօնական երկրաչափի աստիճան տուաւ նորան և վաւերական հաստատեց որոշած սահմանները: Այնուհետև ամէն կողմերէն խնդիր կ'այայնէին Գէորդին որ զայ չափելու երկիրները, և նա երեք տարի զբաղեցաւ այս գործին: Թէ որ աստիճանի ձիշտ կ'վարէր իր պաշտօնը՝ պարզ կ'երեւի այս իրողութենէն որ Վիրգինիոյ բնակիչները գեռ մինչև այսօր տարապայման վարկ կ'ընծայեն նորա անուամբ գիւնական գրքերու մէջ յիշուած սահմաններուն:

Երեք տարուայ մեծագոյն մասը Գէորդ անցուց Վիրգինեան անտառներու այն դեղեցիկ, բայց և վայրենի միայնութեան մէջ. որպէս կ'տարբերէր նորա կեանքը մեծ քաղաքներու մէջ ապրող երիտասարդներու թուլամորթ կեանքէն. բնութեան զօրեղ ազդեցութիւնքը կ'ամբ բացընէին նորա մարմինն ու հոյին. դաշտ ու անտառներու միասնութիւնը կ'զբոյժէին զնա հետեւելու իր ազնիւ զգացմունքներուն: Գործէ ազատ միջոցները մերթ ընդ մերթ կ'երթար եղբոր և կամ՝ նորա աներու ձակի և լօրտ ֆերֆաքսի տունը և այս լուսաւորեալ շրջանին մէջ մտաւորական զարգացում ստանալով կ'ընտելանար նաև բարեկիրթ հասարակութեան վայելուչ ձևերուն, զորս չէին կարող հազրդողել նորան վայրի անտառները:

Բայց ինչ էր գլխաւորապէս այդ երեք տարուայ աշխատութեանց արդիւնքը Աւաշինգթնի համար: — Բաղադրացուց հաւատարմութիւնը, յարգանքը և ի վերջոյ այնքան դրամաւոր շահ, որ բոլոր իր պիտոյքը հոգալէն զինի՝ գեռ աւելորդը կ'պահէր: Այս ամէնը շօշափելի օգուտներ էին. բայց կար և մի այլ տեսակ օգուտ զոր նա տակաւին չէր տեսներ, որ գեռ սքողուած էր նորա առջև: Միշտ եղած է և լիւնելու է, որ եթէ մարդս հաւատարիմ է ի փոքուն՝ ոյժ և միջոց կ'ըստանայ մեծ բան ևս կատարելու: Նա գեռ չէր գուշակել թէ ինչ կարեւոր և վեժմ նշանակութիւն պիտի ստանար իր արդարատէր և փութաջան գործունէութիւնը. և արդարև՝ ով կարող էր գուշակել թէ Վիրգինիան և միւս քոյր նահանգները ընդ փոյթ սև օրերու հանդիպելով պիտի ստիպուէին սուր ի ձեռնին պաշտպան կալազային սուրբ իրաւանց, և ինչպէս կարող էր երիտասարդ Աւաշինգթն մտաբերել որ սար ու ձոր ընկած աշխատելիս՝ նա կ'չափէր և կ'ուսանէր իր ապագայ պատերազմներու ասպարէզը, ուր նորէն պիտի անյնէր յալթական փառօք:



ՊՍԵԿԱՄԱՒՈՐ

Այն մարդը միայն արժանի է ասորելու որ հանապազ բարոյն կը նուիրէ իր կեանքը, ով որ այսպէս չաներ՝ յատկապէս չասրիբ բնաւ, գէթ մարդու նման չասրիբ: Մարդավայել կեանք վարողը հոգի մէջ չթաղեր իր քանքարը, այլ մշակելով կ'արդիւնաւորէ զայն յօգուտ անձին և մարդկան, և այսպիսի գործունէութեամբ միայն պատուոյ կնիք կ'զբոյժէ իր կեանքին:

Թէև Գէորդ Աւաշինգթն գեռ իննևտասանամայ երիտասարդ էր, բայց արիական կորովութեամբ և հանձարով զբաւած էր արդէն հայրենակցաց ջերմ յարգանքը, որ և կ'երեւի հետագայ դէպքէն:

Թշնամի հնդիկներն ու ֆրանսոյիք յարատև ասպատակներով շատ կ'նեղէին Վիրգինիոյ սահմանները. վասն որոյ նահանգի վարչութիւնը սահմանած էր առանձին զօրք կազմել զինակիր քաղաքայիներէն,

շրջաններու բաժնել ամբողջ նահանգը և խրաբանչիւրի վրայ շշանա-
կել ջոկ ջոկ գնդապետներ, որք տարին 150 Փրանք սթէրլինգ թռակ
ստանալով և օգնական զօրապետի անուն վարելով պարտաւոր էին
քաջամարտիկ զինուորներ հրահանգել իրենց ձեռքի տակ:

Ուաշինգթոն ևս արժանի դատաւ այս պաշտօնին՝ որ ինչպէս զիտներ
լիովին կ'յարմարէր իր ակորձակին: Սակայն այս կարևոր պարտաւո-
րութիւնն ընդունելով՝ նա քաջ կ'ըցար վրան գրուած պարտքի խոր-
հուրդը և նոյն ժամայն կ'իտարարէր իր խնայող և սուղաբարեգին պիտանի
հմտութեանց մէջ: Իր եղբոր և միւս զնդապետներու առաջնորդու-
թեամբ, որք արդէն յատուկ փորձով տեղեակ էին պատերազմին կ'ու-
սանէր պատերազմական արուեստը, կ'վարժէր զէնք վարելու և այսպէս
մի նոր հանգէս կ'պարտաստէր իրեն համար, որոյ վրայ ևս քան զնս
հուշակուելու էր նորա համբաւն ու փառքը:

Բայց այս նոր աստղաբեկին վրայ զեռ ոտք չգրած՝ հարկ եղաւ նո-
բան վշտազին սպաս մի մատուցանել եղբորը: Աօրենց հիւանդ էր և
բժիշկները խորհուրդ կ'տային դարման որոնել արևմտեան Հնդկաստա-
նի մեղմօղոյ մէջ: Հիւանդը կ'ուղէր իր հետ ունել զԳեորդ և սա հար-
կաւ կարող չէր հրամարտիլ խանդակաթ սիրով սիրուած եղբոր կամ-
քէն, ուստի 1751 թուականի աշնան միտսին նստան նաւ և յաջորդ ա-
մառուայ կէսին վերադարձան զէպի տուն — Գեորդ նոր հողսերով
վշտազնած, իսկ եղբայրը զէթ հայրենի հողի վրայ հողին փնջելու
փափարով: Իւր արդարեւ տուն զալուն պէս նա հասաւ իր տնայնակին՝
ի գտն սուգ բոլոր բարեկամաց, որք կ'ճանաչէին նորա ազնիւ սիրան
ու բնաւորութիւնը: Նա թողաւ մի այրի կին և մի փորբիկ դուստր,
կտակի զօրութեամբ նորա զեպիններու մէկ մասը ժառանգեց Գեորդ
որ և ինքն էր կտակապահ: Մօնթ-Վեռնօն ազարակը մնաց աղջկան,
այն պայմանով որ եթէ սա վախճանէր և կամ ժառանգ չթողար՝
հասնէր նոյնպէս Գեորդին: Իսկ այրի կինը ունենալու էր իրաւունք
վայելելու կալուածոց հասոյթը:

Ժառանգութեան հանդամանքները անօրինելուն պէս՝ Ուաշինգթոն
խիղի մտաւ իր պաշտօնը: Այդ միջոցին անկլիայի կուսակալը չորս
վիճակի բաժնած էր Վիրջինիան, յորոցմէ մին ընդունեց Ուաշինգթոն
հանդերձ հրամանով որ ինչպէս մեծաւորներու, նոյնպէս և սոսկ զի-
նուորներու մէջ ջան գնէ մշակել զինակիր որերոցն անհրաժեշտ յատկու-
թիւնքը:

Ալէգանի լեռներէն մինչև Օհիօ դետը ձգուած արդաւանդ երկրի

պատճառով վեճ մի փրժած էր անկլիացոց և Փրանսացոց մէջ: Ա-
ռաջիններու կուսակալը՝ Գինդուիդգի՝ Անկլիոյ սեպհակահաւթիւն կը
համարէր զայն, իսկ երկրորդներու զօրավարը՝ Ֆրանսիոյ: Երկու կող-
մէն ևս կ'ջանային դաւել վիճելի սահմաններուն մերձակայ և կամոնո-
ցա մէջ իսկ ասորդ հնդիկները, որպէս զի օգնեն կուռի մէջ:

Իւրաքանչիւր գաս իրաւունք կ'յայտնէր գաւառին վրայ, բայց թէ
որք իրաւունքը աւելի ծանր էր՝ զիւրին չէր որոշել. միայն թէ սոսիւ-
ները հաստատ մտադիր էին տեղի չտալ միմեանց և եթէ հարկ լինի՝
զէնքի թողուլ գատաստանը:

Այս էր ուրեմն Գինդուիդգի կուսակալի զօրը կազմելու հողատա-
րութեան բուն պատճառը: Անկլիայէն հրամայուած էր երկու բերդ-
հաստատել Օհիօի վրայ, բայց մինչդեռ այս հրամանը բերող հրովար-
տակը ծովի վրայ կ'նստէր՝ Փրանսացիք արդէն բռնեցին վիճելի երկ-
րին մէկ մասը: Հաշտութեան վերջին փորձ մի փորձելու և թշնամու-
ոյժն ու զիրքը խմանալու համար՝ կուսակալը որոշեց հրեշտակ առա-
քել Փրանսացոց հրամանատարին:

Նորա կարծիքով ոչ ոք կարող չէր աւելի լաւ միջնորդել այս գործի
մէջ, բայց եթէ Գեորդ Ուաշինգթոն: Գժաւար էր սորա պաշտօնը,
առջևը հինգ հարիւր վաթսուն անգլիական մղոն հեռաւոր ճամբայ և
այս այնպիսի սահմաններու մէջէն, որք կամ խպառ անբնակ էին և
կամ բնակեալ կասկածելի հնդիկներով . . . : Բանակցութեան բուն
խնդիրն ևս զիւրին դործ մի չէր, այս տեղ ևս շրջատես արիւթիւն
պէտք էր: Սակայն Ուաշինգթոն յետ չկեցաւ կուսակալի հրաւերէն և
1753 թուականին ստանաշունչ նոյեմբեր ամսուայ մէջ՝ իր զինամար-
դութեան վարժապետէն ջոկ մէկ թարգմանիչ և չորս սահմանաբնակ
մարդիկ առնելով՝ ընկաւ ՚ի չու: Փորբիկ կարավանը շատ նեղութիւն
ունէր քաշելու ձմեռային հողմերէն և բուքերէն, հեղեղներէն և դե-
տերէն, զորս պէտք էր կտրել անցնիլ ձիով կամ լաստով: Ճամբու նպա-
տակին մօտենալուն պէս նոքա հանդիպեցան անկլիացոց հետ հաշտ
հնդիկներու, որոց զլլաւորը յայտնեց թէ Փրանսացիք բնաւ չունէին
իրաւունք նուաճել երկիրը և թէ նա արդէն ճառով յայտնած է իր
միտքը նոցա հրամանատարին: Այս ճառը թղթի վրայ գրուած չէր ՚ի
հարկէ, բայց և այնպէս իր մտքի մէջ պահելով՝ հնդիկը կարող էր
բաւ առ բաւ կրկնել զայն Ուաշինգթոնին, որ և թարգմանչի միջնոր-
դութեամբ արձանագրեց զայն յիշատակարանին մէջ: «Շայրիկներ —
ատեր է հնդիկը Փրանսացոց հրամանատարին — դուք էք որ կ'արեք

այս աշխարհի խաղաղութիւնը, զի կ'զար տուներ, քաղաքներ կ'շինէք և կ'յափշտակէք մեր երկիրը: Հայրիկներ, երկայն ժամանակէ 'ի վեր մեր Մօն Ռէալի սահմանին վրայ կրակ վառելով՝ ինդրեցինք որ կանգ առնէք այն տեղ, աւելի ներսերը չմտնէք և չկոխէք մեր դեփերը. և արդ դարձեալ կ'աղաչեմ, յետ քաշուեցէք այն սահմանէն: Զի կ'յայտնեմ ձեզ, հայրիկներ, որ մերն է այս երկիրը և ոչ թէ ձերը. կ'աղերսեմ, հայրիկներ, լսեցէք ինձ քաղցրութեամբ, եթէ ոչ — մեզ կը մնայ մտրակով պատուհասել խռովարկութիւնք: Եթէ զայիք հաշտ սիրով, որպէս եկան անկիւսիցիք, ապաքէն ձեզ հետ ևս առեաւոր կ'անէինք ինչպէս որ կ'անենք նոցա հետ: Բայց դուք, հայրիկներ, այս տեղ զաւրով ձեզ համար տուներ կ'շինէք, երկիրը մեր ձեռքէն կ'սլէք — չէ, այս բանին այլ ևս չենք համբերել: Գուք ճերմակ էք, հայրիկներ — ճերմակ են և անկիւսիցիք, իսկ մենք կ'ապրինք նոցա և ձեր մէջ տեղը. ուրեմն մեր երկիրը մեզ կ'սպառնանի և ձեզմէ և ոչ մէկին: Զայն շնորհեց մեզ մեծ ոգին, որպէս զի բնակինք վրան. ուստի, հայրիկներ, կը պաղատիմ, յետ դնայէք. այս ինդիրը ես յայտնեցի և մեր եղբայրակից անդղիացիներուն, որովհետեւ կ'ուզենք որ երկուքդ ևս հեռու կենաք մեզմէ: Արդ՝ ձեր սուշե ևս դնելով այս աղերսանքը՝ կ'ուզեմ իմանալ թէ երկուքեդ արդեօք ո՞րն աւելի հաշտ է մեզ հետ. նորան կ'ընինք դաշակից և նա կ'ընի ամէն բանով մեզ հաւասար: Եղբայր անկիւսիցիքն արդէն լսեցին խօսքերս. եկած եմ նոյնը և ձեզ կրկնելու, զի բնաւ չեմ վախնար վրանել զձեզ այս տեղէն:»

Այնու ամենայնիւ իշխանը յայտնեց որ շատ հնդիկ տոհմեր բոլորովին անցած էին Փրանսացւոց կողմը:

Քանի մը օրէ ետքը Ռաշինգթոն նորէն չոզաւ առաջ. վեց շաբաթ տեւեց այս տաժանելի ճամբորդութիւնը, մինչև հասաւ Փրանսացւոց հրամանատարին, որ նստած էր Օհիօ գաւառի հիւսիսային կողմը: Հրամանատարը սիրով ընկալաւ զնա, բայց առաքելութեան խորհուրդը լրացին պէս՝ միանգամայն հրաժարուեցաւ խօսիլ ընդ վիճով գանուած հարցի վրայ, ասելով թէ չունի իրաւունք ընդունած հրամանին դեմ վարուելու: Ռաշինգթոնին կ'մնար ուրեմն առաւել ևս միտ դարձնել իր պատուիրակութեան երկրորդ մասին, այսինքն գիտել թէ նամու բանակը և բերդերու կազմութիւնը:

Այս բաներու վրայ ստոյգ տեղեկութիւն հաւաքելով՝ նա դարձաւ գէպի յետ: Աւերադարձը նոյնպէս լի էր ամէն տեսակ տառապանքներով: Փրանսացւոց զինակից հնդիկները շատ անգամ որոգայթ կ'լարէ-

ին մեր ուղեորներու գէմ. շաբաթներով նոցա օթեանը բաց երկինքն էր և անկողինը՝ սառ ձիւն: Օր մի քիչ մնաց որ Ռաշինգթոն խեղդուէր ալէկոծ գետի կոհակներու մէջ: «Գետէն անցնելու ուրիշ հնար չկար, կ'զրէ նա, եթէ ոչ լաստի վրայ. միայն մէկ տապարով, որ ունէինք, առաւօտեան ձեռնարկինք դործի և ամբողջ օրուայ չարչարանքէն յետոյ հազիւ թէ արեւի մար մտնելուն կրցանք աւարտել լաստի շինութիւնը: Այնուհետեւ դրինք զայն ջրի մէջ, ելանք վրան և գրդեցինք եղբբէն: Սակայն գեռ գետի կէսին հասած՝ այնպէս ուժղին խռուեցանք սառոյցներու մէջ, որ ամէն բոպէ կ'սպառէինք թէ լաստը ահա կ'ջարդուի և մեք կ'ընկղմինք: Չեռքիս երկայն ձողը յառակի մէջ խթելով՝ ջան կ'ընէի բռնել լաստը, որպէս զի սառոյցի կտորները քերուին անցնին քովէն. բայց կոհակներն այնպիսի բռնութեամբ հորդան տուին ձողիս դէմ՝ որ ես թաւալ զլոր ընկայ ջրի մէջ: Յաջողաբար կրցայ աւարտել բռնել լաստի գերանը և պրծայ վտանգէն: Այնուհետեւ իրքան և աշխատեցանք, այլ չեղաւ հասնիլ ոչ այս և ոչ այն ափին, մինչ հուսկ յետոյ կղզոյ մի վրայ գրդուելով՝ հազիւ գտանք փրկութիւն. իսկ լաստը թողինք որ յառաջ մղուի ալեաց հետ:» Այսպիսի լլկանքէն վերջը մութ դիշեր ամայի կղզուն վրայ և ոչ յոյս ազատութեան գէթ առաւօտուն: Բայց պատահեցաւ որ ինչ բնաւ չէին սպասեր. սառոյցները այնպէս կուտակուեցան կղզոյն մի կողմը որ կամուրջի նման բան մի գոյանալով՝ Ռաշինգթոն ընկերներու հետ յաջողակ անցաւ միւս եղեր-

4734ի կէսին հասաւ հայրենիք և միւսն օրն իսկ դնաց համար սառու կուտակալին:



ՌՆԱՇԻՆԳԹՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՊՍՏԵՐՈՒՄՆԵՐԸ

Պարզ տեսնելով որ Փրանսացիք մտադիր էին զինու զօրութեամբ պաշտպանել իրենց պահանջները՝ կուտակալը որոշեց իսկոյն պատեալազմ բանակ. յապաղանք պէտք չէին, զի թէ նամին կարող էր օգտիլ ժամանակէն: Բայց նախ կոչեց 'ի մի վայր Ալիքիսիոյ երեսփոխանները

և իր նախագիծը յառաջ դնելով յորդորեց որ անմիջապէս ընդունին զայն: Սակայն պատգամաւորները առջի անդամ շատ համակրութիւն չյայտնեցին այս հրահրին: Նորա կ'ըսէին. «Մեր մայր երկրի, Անկլիոյ իրաւունքներն ՕՏիօի դաւառին վրայ արդարեւ տարակուսելի են. բայց եթէ Անկլիոյ թագաւորը կ'ուզէ անշուշտ հաստատ կալ իր որոշման վրայ՝ լնա. միայն թող ինքը զօրք ուղարկէ Անկլիայէն:» Այնուամենայնիւ ժողովը վերջապէս վճռեց տալ տասն հազար սթէրլինգ 'ի նպատակամար զինուորացի:

Ուաշինգթոն այնքան խոհեմութիւնցոյց տուած էր իրեն յանձնուած զժաւարին գործերու մէջ՝ որ կուսակալը սրտի մտօք հրահրեց զնա ընդունիլ նորակալով բանակի հրամանատարութիւնը: Ուաշինգթոն մերժեց այս պատիւը, «զի պատասխանատուութիւնը ծանր կ'ըլար իր երիտասարդական անփորձ հասակին:» Այնուհետեւ կուսակալը զիմաց Ջոնսոն ֆրայ անկլիացի քաջ հաղարթապետին, որ և ընդունեց հրամանատարի պաշտօնը, իսկ Ուաշինգթոն գարձաւ երկրորդ զօրակալ զլիտտոր սեղանակալի կոչմամբ:

Արշաւանքը սկսաւ: Առաջաւոր պահու զօրակալն էր Ուաշինգթոն, որ միայն երեք վաշտ ունէր, այս երեք վաշտով ՕՏիօի սահմանին հասնելուն պէս՝ պէտք եղաւ տալ առաջին հարուածը: Ֆրանսացոց աղաւ գնդերէն մին եկած էր պաշարել զնա. Ուաշինգթոն ընկաւ նորա վրայ և միայն մէկ ֆրանսացի կրցաւ խուսափիլ դաշտէն, իսկ միւսները կամ սարանուեցան և կամ գերի ընկան: Այս կուռի մէջ ֆրանսացոց դէմ էին նոյնպէս և մի քանի հնդիկ տոհմեր: Թէ որպէս յուզուած էր Ուաշինգթոնի պատերազմական աշխոյժը՝ կ'երևի քանի մի օր յետոյ կուսակալին դրած թղթէն. «Չեր վսեմութիւնը կարող է լինիլ վտահ լինիլ որ ես երբեք թող չեմ սար բռնել զիս յանպատրաստից՝ երբ և զար թշնամին. այս է զլիտտոր խոտմունքս, իսկ առաւել քան զայս գործելու չեմ ինայեր 'ի հարկէ իմ ջանքս: Եթէ լսէք որ պարտուեցայ, հաւատարի եմ որ նոյն ժամայն կ'ըսէք նաև թէ մեք կատարելիք մեր պարտքը և մաքառեցանք որչափ ատեն որ յուսոյ մի ստուեր կար:»

Այս միջոցին ֆրայ յանկարծ մեռաւ և կուսակալը վերստին զրեց Ուաշինգթոնին ընդունիլ հրամանատարութիւնը: Նոր յաջողութեամբ ուղևորուած՝ այս անգամ նա դէմ չգրաւ պատուէրին և մեծ արդելքներու յաղթելով՝ յառաջ մղեց արշաւանքը: Նորան միացան շատ հնդիկ տոհմեր, այս մարդիկը պատերազմի մէջ անողովական զինուորներ էին և ճարպիկ զիտակներ:

Բայց օգնութիւն խնդրող վայրենեաց մէջ պակաս չէին և այնպիսի անձինք, որք ինչպէս յետոյ իմացուեցաւ՝ ֆրանսացոց լրտեսներ էին: Չօրքի ճամբան այժմ կ'անցնէր սարուտ նահանգէ. սակաւաթիւ նժոյգները ուժէ թափուելով այլ ևս բանի պէտք չէին դար և բեռներն ու ուսմբերը մարդիկ կ'ստիպուէին յառաջ տանիլ: Չօրպետը բանիւ և զործով խրախոյս կ'տար բանակին և թողնելով որ ձին պաշար տանի՝ յետիոտս կ'երթար զօրքի առջևէն:

Բազմօրեայ չուէն ետքը զօրքը հասաւ վերջապէս մի բանակատեղ, որ արդէն վաղուց ինչ ինչ պատնէշներ ունէր: Չինուորները յետին աստիճանի վատտակած էին, շատ օրերէ 'ի վեր շարունակ կ'անձրեւէր, հայր միանգամայն սպառուած էր: Այս պատճառով Ուաշինգթոն կամեցաւ հանդիլ պատնէշներու մէջ և սպասել պաշարի: Աւասիկ այս տեղ էր որ ֆրանսացիք մէկէն յարձակուեցան վրան, արևը դեռ չէր ծագած, երբ թշնամին մօտակայ անտառէն սկսաւ հուր տեղալ նորա գէմ: Ուաշինգթոն կուսին ընդունելու պատրաստ իսկոյն դաշտ հանեց զօրքը. բայց ֆրանսացիք կ'շարունակէին կրակը ապահով անտառի մէջէն: Աերջը յայտնի եղաւ որ թէև նորա գերազանց էին թուով, բայց չէին ուզեր թողնիլ պատսպարեալ զիբքը, այլ կ'ցանկային յանտառ որսալ զթշնամին: Սակայն Ուաշինգթոն այնքան միամիտ չէր որ խարուէր. նա նորէն մտաւ պատնէշներու մէջ և վառօդը ինայութեամբ գործածելու հրաման տալով՝ պատուիրեց զօրակալին այն ժամանակ միայն հրացան պարպել, երբ կարելի էր անվրէպ դուշիլ նպատակին: Ֆրանսացիք հնդիկ աղդերու հետ թաւուտ բլրոյ մի վրայ կանդնած՝ ամբողջ օր սաստիկ հուր կ'ստեղային վերէն. անձրևը չէր դադարեր, փոսերը կ'ըլցուէին ջրով և թրջուած հրացաններն այլ ևս չէին բաներ: Աերջապէս երեկոյեան դէմ ֆրանսացիք իմաց տուին թէ կ'ուզէին բանակիցի: Ուաշինգթոն կարծելով թէ թշնամու զիտաւորութիւնը իր բանակը լրտեսէն էր՝ մերժեց նոցա խնդիրը: Այլ փոքր ինչ ժամանակէն յետոյ ֆրանսացոց պատգամաւորները նորէն եկան, ասելով թէ բնաւ չէին ուզեր բանակ մտնել, բայց թէ միայն կ'խնդրէին որ մէկ մեծաւոր ուղարկուի իրենց մօտ, և պատուով կ'խոտանային երաշխաւոր կալ նորա ապահովութեանը: Ուաշինգթոն զիջաւ նոցա պայմանին և բանակցութեան հետեանքն այս եղաւ, որ նա զինուորական պատուով թողնելու էր պատնէշները: Հաստատամիտ քաջութեամբ և տոկուն զիմադրութեամբ նա զիտցաւ թաքցընել իր ճշմարիտ վիճակը, որ արգարեւ շատ վատ էր, զի սարէնը դեռ հեռու էր և զօրքի կերակուրն

ու վառօդը միանգամայն հատած: Եթէ Ֆրանսացիք ստոյգ զինանային նորա նեղ դրութիւնը և խրամատներու թշուառ կացութիւնը, զորս անհնարին էր պաշտպանել, հարկաւ չէին յօժարեր այնպիսի պայման դնել, և Ուաշինգթօն՝ քիչ թէ շատ ընդդիմանալէն ետքը թերևս ամբողջ բանակով մահուան ճարակ կ'ըստնար: Հետևեալ օրը զինուորական պատուով ելաւ պատնէ շներէն և Ֆրանսացիք ներս մտան: Ուաշինգթօն արաւ ինչ որ միայն կարելի էր անել ներկայ պարագաներու մէջ և կատարեալ շտորհակալութիւն ընդունեց որպէս իր բանակէն, նոյնպէս և քաղաքացիներէն և կուսակալէն:

Ուաշինգթօն այժմ ձեռքն արկաւ ողորելու անիրաւ օրէնքի մի դէմ, որ արդէն վաղուց կ'ըբաղեցընէր նորա միտքը, այս օրէնքի զօրութեամբ քաղաքացի զինուորները վար դատուած էին անկլիացի զինուորներէն, որ յայտնի արհամարհանք էր վերդինիական քաջ բանակի համար: Բայց որովհետև նորա պահանջները չընդունուեցան և կուսակալը քանի մի ուրիշ խնդիրներու մէջ ևս հակառակ կարծիք ունէր՝ Ուաշինգթօն հրամարտ տուաւ իր պաշտօնէն:

Նորա հանդիստը երկար չտևեց: Մէկ տարիէն ետքը Բրէզզօզի զօրավարի առաջնորդութեամբ երկու լաւ կրթուած անկլիական զօրքեր եկան, և Ուաշինգթօն կառավարութեան հրաւերին տեղի տալով նորէն մտաւ բանակը: Պաշտօն ընդունելու շարժառիթը այսպէս կ'մեկնէր ընկերներէն մէկին. «Թող չզարմանան վրաս եթէ յուսամ որ մասամբ իւրք արժանի եմ զովեստի՝ ի նկատի առնելով որ այս արշաւանքին մասնակցելուս միակ պատճառը՝ իմ հայրենիքիս ծառայելու դժուարի փափաքս է և ոչ թէ պատուասիրութիւնը և կամ շահուց ակնկալութիւնը: Այո՛ւսամ թէ այս հանգամանքը կրնայ վկայ լինիլ խօսքերուս, որ ես կ'երթամ իբրև յօժարակամ զինուոր՝ առանց թոշակի և առանց յուսոյ բարձր տեղ մի ստանալու, զի քաջ զիտեմ որ Բրէզզօզի ազատ չէ տալու ինձ պաշտօն մի, զոր ես հաճէի ընդունիլ:»

Բանակը իսկոյն խաղաղ դէպի ՕՏիօի գաւառը: Այս արշաւանքը թերևս յաջող արդիւնք կ'ունենար, եթէ անկլիացոց զօրավարը դէ Թփոքը ինչ հակամէտ լինէր բարի խորհուրդ լսելու: Նա յառաջ մղեց բանակը կատարեալ վստահութեամբ՝ թմբուկներովու փողով — ասես թէ ամուսական հանդէսի կ'երթար: Առջևէ զիտակներ ուղարկելը ոչ թէ զըուշութեան, այլ երկչոտութեան նշան կ'համարէր. հետևաբար շատ բնական էր որ անհաշտ հնդիկները՝ նորա չորս կողմը պտտելով միշտ հաւաստի լուր կ'հաղորդէին թշնամուրն նորա ընթացքի վրայ:

Այսպէս ուրեմն անկլիացիք յունիսի Պին խրուեցան դարանի մի մէջ, ուր նստած էին Ֆրանսացիք և հնդիկները, նոցա սարսափելի կրակին նոյն ժամայն զոհ եղաւ յառաջապահ գնդի մեծ մասը՝ քսանեվեց զնդապետներով հանդերձ և ուրիշ անթիւ մարդիկ վիրաւորուեցան: Բրէզզօզի զօրավարը մահուամբ կնքեց իր խիզախութիւնը, և զրեթէ հրաշք մի էր որ Ուաշինգթօն կենդանի մնաց այս ջարդի մէջ: Քանի որ Բրէզզօզի կենդանի էր՝ Ուաշինգթօն նորա հրամանը կատարելով մէկ վտանգաւոր տեղէն դէպի միւսը կ'ձեպէր. իսկ հրամանատարի ընկնելէն ետքը՝ կ'նետուէր նախ և առաջ այն տեղ, ուր առաւել սաստիկ էին պատերազմի արհատիւրքը: Թշնամիք կ'որոնէին զնա, զի կ'ուզէին տապալել այն ոտխը որ ձայնով և օրինակով այնպէս ռեզգին խրախոյս կ'ազդէր իր զօրքին: Շատ հնդիկներ երկար ժամանակ շեշտակի հրացան կ'արձակէին նորա դէմ, բայց երբ տեսան որ անվնաս կ'մնայ վերջապէս թողին նետելը, զի համոզուէր էին թէ նա մեծ Ոգույ հովանաւորութեան տակ էր: Հնդիկ իշխաններէն մէկը վերջը ինքն պատմեց այս բանը: Իսկ Ուաշինգթօն կ'ըրէր ընկերներէն միին. «Ամենազօրն Աստուած այնպէս պաշտպանեց զիս որ մարդկային ամէն ակնկալութեանց ներհակ՝ ոչ մի վնաս չգրկաւ ինձ. զի չորս զնտակ անցան զգետես, երկու ձեռք սպանուեցան տակս, բայց այնու ամենայնիւ խօսքաւ անվնաս ելայ վտանգէն, մինչդեռ ընկերներս մահու ճարակ կը դառնային իմ կողքին:» Ուաշինգթօնի անվկանդ քաջութեան շնորհիւն էր որ զօրքի դէմ մէկ մասը կրցաւ փրկուիլ: Ամբողջ երկրի մէջ միայն մի ձայն կ'հնչէր նորա կորովութեան վրայ և քահանաներէն մին այսպէս կ'խօսէր ամսիոնէն. «Այս ճակատամարտի մէջ ակոյտեան հանդիսացող քաջներէն պիտի անուանեմ նաև հակապաշտ երիտասարդ մի՝ Ուաշինգթօն զնդապետը, համոզուած լինելով որ եթէ երկինք այնպէս հրաշքաբար փրկեցին զնա՝ ուրեմն նա զեռ աւելի դերազանց սպաս մատուցանելու է իր հայրենեաց:»

Ուաշինգթօն այնուհետև մեկնեցաւ Մօն-Վերնօն ազարակը, որ եղբոր աղջկայ մահուան պատճառով ժառանգութեամբ իրեն ընկած էր: Բայց զեռ կ'պահէր զնդապետի կոչումը և ամէն տեսակ միջոցներով կ'աշխատէր բարեկարգել իր իշխանութեան ենթակայ զօրքի կազմութիւնը: Բրէզզօզիկ պարտութենէն ետքը քաղաքացիք վերդուելով վերջապէս հասկըցել էին, որ պէտք չէր մարդ և զրամ ինայել սպառնացող թշնամուրն դէմ զնելու համար, և միաբերան կ'ցանակային որ Ուաշինգթօն լինի զլխաւոր հրամանատարը: Ընթերցողին արդէն յայտնի է

որ նորա մայրը այն թուլասիրտ կիներէն չէր, որք ամէն մէկ վտանգէ գողըզալով արիւթեան նշոյլն անգամ կ'ընէն զաւակներու սրտէն սակայն վերջին ռազմի մէջ որդուն սպառնացող զարհուրանքը այնպէս ռժգին ազդել էին վրան, որ այժմ արտասուօք կ'աղերսէր զնա՝ առ միշտ հրաժեշտ տալ ղինուորական պաշտօնին: Ուաշինգթն գորովալից սրտով կ'սփոփէր զմայրը և առ Աստուած ապաւինեցով, որ է տէր կենաց և մահու, կ'յաւելուր: «Եթէ պաշտօն վարելու հրամանը ընդհանուր միաբանութեամբ վրաս դրուի և կառավարութեան կողմէն ընդունելի պայմաններով ինչ առաջարկուի՝ ապաքէն ամօթ կ'լինէր մեզից ղայն, և այս հրաժեշտը անտարակոյս քեզ ևս աւելի թախիծ կ'պատճառէր, քան թէ երբ պատուաւոր պաշտօն զյեցեալ 'ի դաշտ ղիմէի:» Սակայն և այնպէս հրամանատարութեան նման ծանր մի պաշտօն նա չէր ուզեր ընդունիլ առանց պայմանի. նպատակը և միջոցները քաջ կ'ընէր ղնա՝ նա կ'պահանջէր որ հրամանատարը ձայն ունենայ զնոյապետներու ընտրութեան մէջ, որ իր առաջարկած նախագծին յարմար իսպառ նորոգուի պարէնի հայթհայթման եղանակը և որ վերջապէս որոշեալ ժամանակին լրիւ վճարուի զօրքի թողակը: Այս պայմաններն ընդունուեցան և նոցա օգուտը իսկոյն երեան ելաւ հետեւեալ պատերազմին: Քիչ մի ետքը նա ընդունել տուաւ քաղաքական ժողովոյն մէջ այլ ևս մի օրէնք, որով ղինուորական դատարաններուն իրաւունքը կ'տրուէր պատժել սրիկաներն ու գասալիք ղինուորները, նոյնպէս և այն անախտանները, որք թուղթ խաղալով, ղինեմոլութեամբ և լիտի կենցաղավարութեամբ կ'վնասէին բանակին: Եւ անյողզողք Ուաշինգթն չէ թէ միայն սահմանել տուաւ այս օրէնքը, բայց և դործագրեց ղայն ամենայն խստութեամբ:

Այժմ նորա գլխաւոր նպատակն էր՝ վճնտել Ֆրանսայիքը ՕՏիօի մէջ դրուած Գիւքէն ամրոցէն, որ և յաջողեցաւ: Այս յաջողութեամբ միանգամայն վերջ տրուեցաւ նոցա տիրապետութեանը ՕՏիօ նահանգին վրայ և լրացաւ Ուաշինգթնի ամենագծուար գործերէն մին, որոյ վրայ երկար տարիներով այնքան ճիգ ու փոյթ թափած էր — կ'ուզէնք ասել որ թշնամի հնգիկները առ միշտ հաշտուեցան նորա հետ: Այս փառաւոր արդիւնքը ձեռք բերելէն ետքը Ուաշինգթն հրամանատարութիւնը վար դրաւ և մեկուսեցաւ ընտանեաց մէջ ապրելու:



ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՔԸ

Ուաշինգթն քառասուն և եօթ տարեկան էր, երբ զնաց Մօն-Վերնոն խաղաղ տուն մի հաստատելու փափաքով և յուսով: Այս տեղ նա բախտ ունեցաւ սրտով ու մտքով իր բեան հաւասար ընկերուհի մի գտնելու՝ ղՄարթա Քուսթիս, գեղեցիկ և տակաւին նորատի այրին, որ երկու գողորիկ զաւակաց, այն է՝ մէկ վեցամեայ ուստեր և մէկ քառամեայ դստեր մայր էր: Ուաշինգթնի հարստութիւնը, որ նախորդ ժառանգի մահուամբ իւրեան հասած Մօն-Վերնոնի ղիւղոջի արդէն բաւականին նշանաւոր եղած էր, առաւել ևս աճեցաւ կնոջ բերած 400,000 ֆրանք օժիտով: Այս ամուսնութիւնը գժբախտաբար անզաւակ մնաց: Բայց Ուաշինգթն իւր հարազատ տղայոց պէս կ'սիրէր խորթ որդիքը: «Յուսով եմ, կ'դրէր նա պսակէն ետքը ընկերներէն մէկուն, թէ առաւել բախտ գտնելու եմ մեկուսութեանս մէջ, քան զոր երբ և է վայելած էի բազմահոգ մեծ աշխարհում:» Այժմ նա իւր կեանքին նոր ուղղութիւն մի տալու գրաղած էր: Նա կ'ուզէր նախ և առաջ երկրագործութեան և այգեպանութեան պարապիլ, բայց այնպէս որ արուեստից ու ղիտութեանց աղբիւրէն ևս հոգին զովացընելու ժամանակ ունենայ: Սակայն կ'տեսնենք որ ամուսնութեան օրէն տաւ կաւին քանի մի ամիս շանցած՝ նա դարձեալ կ'մտնէ հասարակային գործունէութեան մէջ և յատկապէս յԱրիլլիամսպուրկի ուր ղաղթակաւորութեանց պատգամաւորքը ղումարեալ էին 'ի ժողով: Նա բնաւ հետամուտ եղած չէր երեսփոխանական պաշտօնի և՛ ղաղթակաւորութեանց սովորութեանը հակառակ՝ այս մասին մինչև անգամ միաբանած ևս չէր կանխաւ ընտրողներու հետ. ուստի իւր վայելած անսպայման վտտահութեամբ էր միայն որ յայս պաշտօն կոչուեցաւ: Եթէ նա լոկ իւր անձնական վայելքն 'ի նկատի ունենար՝ անշուշտ իւր սիրուն ազարակէն չէր մններ. բայց պարտուց ղցացումը, զոր ունի իւրաքանչիւր հայրենասէր, թոյլ չէր տար նորան խտրութիւնք անելու: «Նա միայն կարող է, կ'ըսէ բանաստեղծը, իւր անձնական հաճոյից հետեւիլ, որ

ատա սրտով իւր համար եւեթ կ'ապրի աշխարհիս վրայ. բայց ով որ
կ'ուզէ օգուտ բերել մարդկան՝ պարտ է որ նեղութեանց ևս յօժարի:»

Ուաշինգթոնի գերդաստանը գեթ սովաւ կարող էր մխլթարուիլ, որ
պատգամաւորաց ժողովը սովորաբար միայն մի քանի ամիս կ'սեւէր
տարին:

Երբ նորա ընտրուիլը յայտնի եղաւ ժողովին՝ իսկոյն որոշեցին առ-
անձին իմն պատուով ողջունել զնա խորհրդարանի մէջ: Հետեւեալ կեր-
պիւ կ'ըրէ այս մասին Ռ. իրթ. «Պարոն Ռոպինսօն աստեաբանին յանձ-
նուած էր յանուն գաղթականութեանց շնորհակալութիւն յայտնել
Ուաշինգթոնի գնդապետին այն ազնիւ ծառայութեանց փոխարէն, զոր և
մատուցած էր երկրին նորաւարտ պատերազմի մէջ: Այն ինչ Ուա-
շինգթոն բազմեցաւ աթոռի վրայ՝ Ռոպինսօն խորին պատկառանք կա-
տարեց իւր պարտաւորութիւնը, սակայն սրտի ուժովն յուզմունքէն և
զգացումներու զօրեղ թափէն այն աստիճանի ողևորութեան և կրակոտ
ուճի մղուեցաւ, որ շատ շփոթմունք պատճառեց Երիտասարդ դիւցազ-
նին: Նա ոտքի ելաւ շնորհակալութիւն ասելու իւրեան վիճակուած
պատուոյ համար, բայց պաշարումն աւելի ևս սաստկանալով՝ այնպէս
գողի մէջ ընկաւ, որ բառ մի սնդամ՝ չկրցաւ արտասանել: Այս ճիւղա-
ժամին աստեախօսը՝ ողւոյ ներկայութիւն ու յաջողակութիւն մի ցոյց
տալով, որոց նոյն իսկ Նուրդիկոս Թ.Վ. անդամ կարող էր նախանձիլ
իւր փառաց ամենալաւ ըուպէին, օգնութեան հասաւ տաղանայելոյն և
«Նստեցէք, ասաց նորան հանդուցիչ ժպտով, ձեր հեզութիւնը նոյն-
քան մեծ է, որքան և քաջութիւնը, և սա յոյժ 'ի վեր է այն ամեն զո-
ւլասանքէն, զոր ես կարող էի բացատրել բառերով:»

Յաճախ կ'լսուի այս նկատողութիւնս, թէ յատկապէս նշանաւոր
մարդիկ բազմութեան հետ գէմաւ գէմ խօսելու առաջին փորձին մեծ
քժուարութիւնք կրած են: Ակնածելով այն բազմութիւ ունկնդիրներ-
րէն, զոր նոքա կ'տեսնեն իւրեանց առջև, և իւրեանց յատուկ արժա-
նեաց վրայ փանաքի համարում ունենալով՝ նոքա կ'վարանկն առջի բե-
րան. մինչդեռ իւրեանց սեպհական հանճարի վրայ մեծ կարծիք ունե-
ցող և լսողաց ողեկան հանգամանքը խիստ վար գնահատող անձինք
յանդուզն դիւրութեամբ յառաջ կ'մատչին խօսելու: Այն խորունկ
բնաւորութեանց յատուկ տատամսութիւնը հետզհետէ միայն կ'անհե-
տանայ: Այսպէս եղաւ և Ուաշինգթոնի համար. սակայն պերճ ճար-
տարախօսութեան նա չհասաւ երբէք և ստոյղն ասելով բնաւ ճառ մի
անդամ չխօսեց բառիս բուն նշանակութեամբ: Այնու ամենայնիւ չա-

փէ գուրս նշանաւոր էր նորա երեսփոխանական գործունէութիւնը:
Ժողովին մատուցանելու առաջարկութիւնքը նա կ'մշակէր նոյն իսկ
փութով, զոր սովոր էր ցոյց տալ և բոլոր միւս գործերու մէջ. պար-
տաց զջացումէն յառաջ եկող պահանջմունքը իւր գլխաւոր ձգտողու-
թեան հետ միաւորելով անդուլ աշխատանքը հանապաղ հետամուտ կը
լինէր ընդլայնելու իւր մտաւորական հորիզոնը: Եւ որովհետև նորա
դատողական զօրութիւնը շատ սուր էր և միշտ խորին մտադրութիւն
կ'ընծայէր աստեաբանութեանց՝ ուստի նորա բացատրութիւնքը, որք
ըստ մեծի մասին հակիրճ էին, ամեն ժամանակ ծանր չափով կ'ընկնէին
կշռի վրայ: Աճը պարզ էր, զի երբէք զին չէր տար արաքին երևոյ-
թին, այլ բուն գործին: Այս էր պատճառ, որ երբեմն նորա գոյնն այլ
երևական դիտողութիւնքը կ'բաւէին խաղաւ այլ ընթացք տալու քննու-
թեանց: Եթէ նա խօսելու երէք՝ ամենեքեան կ'ըլէին: Պատգամա-
ւորք ստէպ կ'հարցնէին, թէ արդեօք ի՞նչ կ'ասէ Ուաշինգթոն այս
կամ այն խնդրոյ վրայ: Նորա գերագոյն առաջնորդը իւր գործունէու-
թեան այս ասպարիզի վրայ ևս հայրենեաց օգնելու ջերմ փափաքն էր:
Եւ այս փափաքը յարտաքս կ'փայլէր նորա իսկական բնութեան մէջէն,
որ թեթևութեան նշոյլ անդամ չէր բերեր իւր վրայ: Բնաւ չէր յամեր
ժամանակին ներկայ գտնուիլ նստերուն և երբէք չէր թողներ զնոսա ա-
ւարտելն առաջ: Այս բաներու մէջ ևս իւր պարտուց քաջ դիտակ և
միանդամայն ազնիւ մարդոց օրինակ կ'հանդիսանար ամենքին: Եւ այնու
ամենայնիւ որպէս մանկօրէն զուարթ և ուրախ դիտէր լինիլ իւր տան
և կամ մտերիմ ընկերաց շրջանի մէջ:

Յիշատակի արժանի է այս խօսքը, զոր տուաւ Ուաշինգթոն իւր ազ-
գականներն մէկին, երբ սա կ'ցանկար պաշտօն ընդունիլ քաղաքային
խորհրդարանի մէջ: «Թէ որ կ'ուզես գրաւել լսողներու ուշադրութիւ-
նը, ասաց նա, միայն այս խորհուրդը կ'տամ քեզ — քիչ խօսիք և մի-
այն կարևոր նկարներու վրայ խօսիր, 'ի բաց առեալ այն պարագան երբ
խնդիրը քս ընտրողաց կ'վերաբերի. բայց նախ քան զամենայն լիովին
ծանօթացիք բանի հետ: Երբէք թող մի տար, որ անվայել եռանդով
յափշտակուիս, և շատ հաւատ մի ընծայեր յատուկ դատողութեանդ:
Հրամայական եղանակը թէև երբեմն կ'շորթէ մարդոց համոզմունքը,
բայց միշտ տհաճութիւն ազդելով նոցա սրտին:»

Տարուայ մեծագոյն մասը Ուաշինգթոն ազատ էր հետեւիլ իւր ներ-
քին բերմանց, որք, ինչպէս արդէն ասացինք, դիւրական կեանքի հետ
կապուած էին: Եւ Մօն-Վերնօն արդարև սքանչելի դիրք մի ունէր:

Բնակութեան տունը նստած էր վեր դիպողող անտառապսակ բլրոյ վրայ և Փոթժամաք գետի ստորին ու վերին ընթացքի հոյակապ տեսարաններու վրայ կիշխէր: Տունն անմիջապէս շրջապատող պարտէզները դրեթէ անլիական ճաշակով տնկուած էին: Կալուածքը բաժնուած էր այլ և այլ արտերու, որք պէսպէս մշակութեան սահմանուած էին, և իւրաքանչիւրն իւր յատուկ մշակներն ունէր: Սակայն երկրի մեծագոյն մասը տակաւին անտառներով ծածկուած էր, խոր հովիտներով և վտակներով և խորշերով կտրտուած, ուր կ'սիրէր շրջիլ երէն և թագչիլ աղուէոր: Ամբողջ դարաստանը Փոթժամաքի վրայ՝ Մօն-Վերնօնէն սկսեալ մինչև ՚ի Պելլօար — Ուիլլիամ Գերֆարի աւանը — բազմադիրի դբօսանք կ'մատուցանէր մարդուս: Ս. յսպէս կ'գրէ Ուաշինգթոն Իրվինկ: Իւր նամակներէն մինի մէջ մեր Ուաշինգթոն ինքն կ'խօսի դաստարակի վրայ, ցոյց տալով թէ որ աստիճանի հարեալ էր սրտով իւր Մօն-Վերնօնին: «Բովանդակ Միացեալ Նահանգներու մէջ, կ'ընէնա, չկայ աւելի ակտիւ գիրք ունեցող կալուած մի: Սա կ'դառնի բարձրաւանդակ առողջարար երկրի մէջ, ծայրայեղ խորշակի և ցրտի լայնութեան դէն հաւասարապէս հեռացեալ դօտիի և աշխարհիս ամենաչքնաղ գետերէն մինի վրայ, որ տարուայ իւրաքանչիւր եղանակին լի է ամեն տեսակ ձկներով, որսիսի են աւփներ, տարեխներ, ծածաններ, թառափներ, և այլն: Երկրի սահմանները տաս մղոնէն աւելի երկարութեամբ կ'ողողուն գետի ջրերով և հոս են բազմաթիւ ձուկի որսարանք, այնպէս որ մարթ է ասել թէ բոլոր եղբրքը միայն մի մեծ ձկնորսարան կ'կազմէ:»

Այն ժամանակները Ալիքիսիոյ մէջ իւրաքանչիւր մեծ տնկատան (plantage) համարեա թէ ջոկ պետութեան կ'նմանէր: Տանտիրոջ բնակած դիւտաւոր տունը կառավարութեան կեդրոնն էր, մերձաւոր շէնքերէն մինի մէջ կ'պարէր ստրուկներու վերատեսուչը (steward), որ գոյցես պետութեան առաջին պաշտօնեայն էր: Սորա տան հետ միաւորած կային խոհանոցներ, դորձարաններ, գոմեր, ամբարներ, շահմարաններ: Խափշիկներու ամբողջ երամ մը կ'աշխատէր բակի և սննբու մէջ. առաւել մեծ մասը կ'վաստակէր դաշտերու վրայ: Սոցա զուարթ խրճիթները փոքրիկ դիւզ մը կ'կազմէին: Ամեն մին կոկիկ պարտէզ ունէր, դաւիթները լիքն էին ընտանի թռչուններով: Եւ այս խրճիթներու դիմաց արևի սակ կ'ոստոտէր սև մանկային:

Այս թեթև նկարագրէն ետքը ընթերցողը թող ինքն բարեհաճի շրայընել Մօն-Վերնօնի պատկերն իւր հոգւոյ մէջ: Նահանգներու մէջ կային բազում անկարկներ, որք բոլոր վարչութեան գործերը իսպառ տեսուչներուն յանձնելով, որպէս առաջ Մերովլանք կ'յանձնէին՝ ասան հաղարակներուն (majordome), ուրիշ բանի փոյթ չէին տաներ, բայց թէ հասոյթ ստանալու և ըստ կարելոյն հեշտասէր զուարճութեանց հետեւելու աղատօրէն: Ա. յսպէս չէին Մօն-Վերնօնի կարգերը: Ուաշինգթոն իւր փոքրիկ պետութեան մէջ տէր և հայր էր միանգամայն: Ամեն օր ձի նստած կ'երթար տեսնելու արտերը, դաշտերը, որսարանները, աղօրիքը: Այս այցելութեանց ժամանակ սովորաբար ոսկեզօծ կոճակներով գեղին քրտ կ'հաղնէր: Սոյն առթիւ ՚ի դէպ կ'հաւերինք յառաջ բերել հոս Պ. Նոյմանի խօսքերը, որովայս վայելչակազմ մարդոյ պատկերը կ'ներկայացնէ մեզ. «Ուաշինգթոնի պատկառելի շարժման մէջ վէսութիւն չկար, կամքը հաստատ էր, բայց առանց կամակորութեան և ամբարտաւանութեան: Յաղթանդամ մարմինը, որ վեց ոսնէն բարձր էր, ներդաշնակ և գեղեցիկ բարեմասնութեամբ զուգաչափեալ էր. կարելի էր նմանցընել զնա հոյակապ շինուածքի մը, որոյ ջոկ ջոկ մասերու կատարեալ յարմարութիւնն առանձին իմն շուք կ'ընծայէ ամբողջին: Եռանդոտ սիրտը պարզ մտքով սանձեալ էր, կորովի արիւթիւնն բնաւ յանդգնութեան չէր անցներ և նախատեսութիւնը վեհերտութեան տեղի չէր տար: Աստաճ դատողութիւնը սուր յիշողութեան հետ զօգեալ էր. փութաջան էր, երկասէր: Որքան զբաղեալ լինէր՝ դարձեալ կ'պահպանէր իւր բարեհամբոյր ընդելութիւնը և երբէք չէր դժներ:»

Գերդաստանի հետ եկեղեցի յաճախելիս, կամ Ուիլլիամ Գերֆարսին և կամ աղագականներուն և ընկերներուն այցելութիւն անելիս՝ Ուաշինգթոն քառալոյծ կառք կ'նստէր և այն ժամանակ խափշիկ ձիավարն ու սպասաւորը փայլուն հանդերձ հաղած կ'լինէին:

Բայց ինչպէս կ'լինի որ ազնիւ Ուաշինգթոն ևս ստրուկներ պահէր — կ'հարցընէ անշուշտ ընթերցողը: Այս հարցընողէն կ'ինդրենք որ հետեւեալն ՚ի միտ առնէ: Ուաշինգթոն ստրկական պետութեան մէջ լոյս տեսաւ: Որ և է երկրի սովորութիւնքը իւրաքանչիւր բնկի վրայ առանձին իմն կնիք կ'գնեն: Եթէ մի ոք սրտամական անձնաւորութիւն մի քննութեան ենթարկելիս՝ անտես թողնէ ու չի ուշով զննելու նորա ժամանակին սիրապետող սովորութիւնքն ու մտաւորական ուղղութիւնքը, երբէք չկրնար արդար դատաստան հատանել նորա վերայ: Նախ և

անաջ այն ժամանակը պէտք է ուսումնասիրել և ապա թէ հարցընէ՞ր
թէ ո՞ր աստիճանի հաղորդ էր քննելի անձն իւր ժամանակի մտաց և
բարոյց:

Ստրկութիւնը չար ակնտ մի էր պետական կեանքի մէջ, մանաւանդ
այն ստրկութիւնը որ յերեան ելաւ քրիստոնէութեան ժամանակէ
Մարդկային շահասիրութեան պէս խորամանկ և հնարագէտ բան չլի-
նիր: Լուսովիկոս ԺԳ. ամենաքրիստոնէայ թաղաւորին օր մը պատմե-
ցին թէ — խափշիկները քրիստոնէութիւն չեն ընդունիր, ուրեմն ստրկա-
ցընները զնոսա և ապա թէ գիւրին կ'լինի վերածել զնոսա 'ի քրիստո-
նէութիւն: Այլ ևս թէ խափշիկ ազգը իւր գերինները սպաննելու սոս-
վորութիւն ունի, ուրեմն եթէ գաղթականութեանց մէջ ստրկութիւն
մտցընենք՝ այլ ևս չեն սպաններ գերինները, այլ մեզ կ'ծախեն: Այսպի-
սով մեք կ'փրկենք նոցա կեանքը և ստրկութիւնը նոցա համար բարերա-
բութիւն կ'դառնայ: — Թագաւորն հաւանեցաւ այս խօսքերուն, փոր-
թուկէզոց հնարած անիրաւութիւնը ֆրանսացոց մէջ ևս օրէնքի զօ-
րութիւն ստացաւ և այնուհետեւ խափշիկներն իբրև ստրուկ յԱմերիկա
տանին ընդհանուր սովորութիւն դարձաւ Փորթուկալի, Սպանիոյ,
Ֆրանսիոյ և Անկլիոյ գաղթականութեանց համար: Այս եղանակով
յափշտակեալ սևերու թիւը կ'հասնէր քառասուն միլիօնի: Հարց
մեզքը յետոյ շատ ծանր տուժեցին որդիք և մեք գիտենք, որ վերջին
ժամանակներս բազում արեան զոհ պէտք եղաւ խափշիկներէն խլուած
մարդկային իրաւունքը նորէն վերականգնելու համար:

Ուաշինգթոնի պատմութեանը դառնալով մեր պատասխանի մէջ
չվրիպելու համար՝ հարցընենք արդ, թէ ի՞նչ գիւրք կ'ընէր նա իւր
ժամանակին Իրապետող սովորութեանց հանդէպ, որոց մէջ ինքն ևս
սնուած էր: Եւ պատասխանն այս կ'լինի, որ նա խնամակալ հայր էր
իւր ստրուկներուն: Թէ արդեօք ինչէր պործեց յետոյ այս ստրուկներու
համար՝ գրքոյկիս վերջն առիթ կ'ունենանք պատմելու: Նա չէր նեղէր
զնոսա ծանր աշխատանքով, բայց պարսպ նստիլ ևս թոյլ չէր տար,
դատարկ անդործութիւնը ատելի էր նորա աչքին: Ամբողջ բնութիւնը
մեծ գործարան մի է. գործելէ դադարեալ գործարանական մարմին-
ներն անհրաժեշտ մահու կենթարկուին: Օգտաւէտ աշխատութիւնը
մարդկային մարմնոյ և հոգւոյ պահպանողն է, իսկ դատարկութիւնը՝
սկիզբն ոգեկան անկման: Շահաւէտ զբաղմունքէ թափուր մարդոց
գլուխը վատ խորհրդոց օթեան է. ուստի և շատ ճշմարիտ է այս
խօսքս, թէ ծուլութիւնն է մայր չարեաց: Ով որ մարդոց վրայ իշխա-

նութիւն կ'բանեցընէ՝ թող զնոսա պատշաճաւոր կերպիւ դրադեցընելու
հոգ տանի: Իւրաքանչիւր որ դէթ Քէ մարդոց վրայ իշխանութիւն ու-
նի — ի՞նքն իւր վրայ: Ուրեմն պիտի զոյոշ լինի, որ այս մարդը դա-
տարկ չմնայ: Աշխատութեան տեսակներէն գերազանցը՝ մեր յատուկ
անձնաւորութեան վրայ աշխատին է, և մեք այն ատեն միայն իրօք
կ'աշխատինք մեր անձի վրայ, երբ անդու ճգնութեամբ հետզհետե-
կատարելութեան բարձր աստիճանին կ'փութանք հասցընել այն դործը,
զոր կ'վարենք: Այս մտքով իւրաքանչիւր մարդոց հնարին է կատարե-
լութեան դիմելու, ինչ և լինէր նորա գործիքը — թէ ասեղ, թէ ա-
րօր և թէ գրիչ: Որչափ որ մարդս ստիպմամբ միայն աշխատի՝ նա
գեռ մարդկային գոյութեան ստորին աստիճանի վրայ կանգնած է և
անկման վտանգին ենթակայ: Սակայն արտաքին ազդեցութիւնքը գեռ
կ'պահպանեն զնա. ստիպմունքը տակաւին օգտաւէտ է նորա համար,
թէ և չկրնար սովաւ իսկոյն ճարտարութեան բարձր աստիճանին հաս-
նելու:

Սակայն այն բոպէէն սկսեալ, երբ մարդս չէ թէ միայն իւր պաշ-
տօնի պարտաւորութիւնը կատարելու, այլ ինքզինքն ևս ողբպէս զար-
գացընելու պարզ դիտմամբ կ'ձեռնարկէ գործին, այն բոպէէն սկսեալ
նա աւելի բարձր դասու մարդոց շարքը կ'անցնի: Մարդկային սեռի
բոլոր բարերարներն այս վերին դասուն պատկանած են: Քրտամբ ե-
րեսաց վաստակեր են նոքա երջանկանալով այս մտքի մէջ, թէ նոցա
աշխատութիւնը հաւասար չափով օգտաւէտ էր թէ իւրեանց և թէ
այլոց: Այս դասը դարձեալ պէտքէս բաժանումներ ունի. բայց նորան
պատկանող մարդու առջև արդէն բաց է մարդկային երջանկութեան
վերջին սահմանին տանող ճամբան: Ամեն մարդ կարող է ոտք դնել սոյն
ճամբու վրայ, բաւական է որ կատարէ ճշտիւ պաշտօնին պահանջած
պարտաւորութիւնքը: Այն, պարտոց կատարումն է այն կախարդական
միջոցը, որով մարդս կ'հասնի իւր բախտին: — Աշխատանքի ուղիղ
զնահատութեան նկատմամբ Ուաշինգթոնի և նորա ընկերներու օրինա-
կը, որոց մէջ առաջին տեղը կ'ընէ ազնիւ Ֆրանկլին, անհետ չմնաց
Ամերիկայի մէջ: Այս մասին խօսելով Լապուլէյ Ֆրանսացին կ'ըսէ
թէ՝ «Որքան շատ յառաջ երթանք, նոյնքան աւելի վերահասու կ'լի-
նինք, թէ աշխատող մարդն է միայն իրօք ազնիւ մարդը և թէ չաշխա-
տողը՝ որքան և հարուստ լինէր՝ դատապարտելի յանցաւոր է: Ամերի-
կայի Միացեալ Նահանգներու մէջ պարսպ մարդը հասարակութեան
թշնամի կ'համարուի, մայրերը հեռու կ'պահանջեն զնա ազնիւներէն և

ամեն մէկ խելացի անձն կ'զլանայ նորա պատիւը, կ'արհամարհէ զայն պիտին: Ով որ ոչինչ չգործեր՝ վերջապէս վատութիւն կ'գործէ, կ'ըսեն ամերիկացիք, և շատ իրաւամբ:»

Ուաշինգթոն իւր ժամանակի մէկ մասը մշակներու աշխատութիւնը կանոնաւորելու կ'նուիրէր՝ մերթ հսկելով նոցա վրայ և մերթ ամեն մէկին իւր զօրութեանը յարմար գործելու տեղն ցոյց տալով: Գիտենք արդէն, որ նա թէ չափազանց աշխատութենէ և թէ պարատութենէ հաւասար հեռու կ'պահէր զնոսա: Աշխատութեանց ուզիլ չափը գտնելու համար նա ուշադրութեամբ կ'գիտէր ամեն մի գործի ընթացքը որոշեալ միջոցին, ՚ի հաշիւ կ'առնէր սովորաբար յառաջ գալիք արգելքները և այլա թէ չափ կ'դնէր մինին և միւսին:

Սակայն ամենալաւն այս էր, որ նա օտէպ ինքն իւր ձեռքով գործակից կ'լինէր մշակներուն: Ստրկութենէ յառաջեկած պատահասններէն մինն ևս տէրերու մէջ արմատացեալ այն անպիտան կարծիքն է, որ իբր թէ դիւզական աշխատութիւնը և կամ ձեռագործութիւնն անարդբան է: Ստրկները տեսնելով որ ինքեանք միայն ստիպուած էին հոգալ այս անբարեբաղ գործերը, ասեա թէ նզովեալ կ'զգային զիրենք: Այս կարծիքը հասարակաց էր հին ժամանակին, յետոյ դարձեալ յերևան ելաւ Ամերիկայի մէջ: Մեր կ'թողունք որ ամեն մարդ ինքն դատէ, թէ այսօր զինքեանք անխի կոչողներէն արդեօք շատեր կան, որք աւելի ուզիլ հայեացք ունենային այս մասին:

Մօն—Վերսոնի ստրուկները յաճախ կ'տեսնէին զՈւաշինգթոն պարտիզի կամ գաշտի մէջ զբաղած: Անպամ մի նա իւր մշակներու հետ ամբողջ օրերով նոր և աւելի յարմար արօր մը շինելու աշխատեց դարբնոցի մէջ. գործը յաջողեցաւ և խափշիկները տեսան յետոյ, թէ ինչպէս նա խիտ խիտ դալարեօք պատած երկիրը հերկելու կ'շնար: Օր մի ևս աղօրինեղէն մին ջրի յորձանքէն քանդուելու վրայ էր: Չնայելով յորդահոս անձրևին նա ձեպեց դէպի դետը և մշակներու հետ միասին փրկեց շինուածքը:

Ուաշինգթոն սովորաբար շատ կանուխ կ'զարթնէր և ձմեռուայ ժամանակ արդէն մթուն կ'եղնէր տեղէն: Բայց իւր սենեակը տաքցնելու համար ուրիշներու բունը չէր կարձեր: Նա ինքը կ'վառէր կրակարանը և այնուհետև կ'սկսէր կարգալ ու դրել, մինչև որ ընտանեաց նախաձաշը պատրաստ լինէր — սովորաբար ամառը եօթ ժամին, ձմեռը ութ թին: Երկու բաժակ թէյ և մի քանի սիմինտրի շոթ — այս էր նորա նախաձաշը: Երկու ժամին կ'ձաշէր. չնայելով իւր հարստութեանը

տեղանը շատ պարզ էր: Աերակուրի ատեն երկու բաժակ գինի կ'լմայէր, իսկ միւս ժամանակ սովորական ընկերներ էր դարեջուր կամ մրդօղի: Երեկոյեան ինն ժամին կ'երթար ննջելու:

Վայքին վերաբերեալ գործերու համար առանձին հաշուեցիկ կ'պահէր, իսկ նամակներու համար ջոկ ջոկ դրբեր: Եւ այսպէս կարգ պահուանելով ամեն բանի վրայ լիակատար ու պարզ հայեացք կ'ունենար միշտ:

Ուաշինգթոնի դաշտերու վրայ մշակուած բոյսերէն զլիսաւորն էր Բուրդո, որ մեծ քանակութեամբ յԱնկլիա կ'ուղարկուէր: Այս բոյսի համար առանձին շտեմարաններ շինուած էին Փօթոմաքի վրայ: Վարձ միջոցին օտարացիի առևտրական տունները այնպէս վտտահոթ թիւն ստացան Ուաշինգթոնի անուութեան և հաւատարմութեան վրայ, որ թապաք գնելու ժամանակ այլ ևս պէտք չէին համարեր նորա նշանով կնքած հակերը գնելու:

Հիւրասիրութիւն ցոյց տալը նորա անհրաժեշտ պիտոյքներէն մէկն էր, նորա յիշատակարանի մէջ նշանակուած հիւրերն այնպիսի մարդիկ էին, որք յետոյ դրթէ ամենքը հուշակոեցան յԱմերիկա: Նորա տունը որսաէր հարեաններու հաւաքման տեղին էր՝ մանաւանդ աղուէս բռնելու ժամանակ: Որսորդութիւնը նորա քաղցր զբօսանքն էր:

Այցելուաց մէջ, յօրոց մին էր և ալեոորն Ֆերֆաքս, կային պատուական ուսում առած մարդիկ, և սոցա հետ հաղորդակցութիւն ունենալն Ուաշինգթոնի համար նոյնչափ կարևոր էր, որչափ և ընտիր դրբերու ընթերցանութիւնը:

Նորա գործունէութիւնը կալուածքի սահմաններէն դուրս ևս կ'տարածուէր: Այսպէս, օրինակի համար, օր մի նա համաժող մարդոց հետ խորհուրդ տեսաւ ճահիճ մի մշակութեան վերածելու, որ երեսուն անկլիական մղոն երկայնութիւն և տաս մղոն լայնութիւն ունէր, և ձի նստած սկսաւ քննել ճաճիճը: Տաժանելի գործ էր այս և շատ վտանգաւոր. տեղ տեղ պէտք կ'լինէր անցնիլ նոճեայ, եղէնեայ և այլ տերեւախիտ ծառերէ կազմեալ անտառներէն, ուր մամուռը կախ ընկած էր ոստերէն, և այլուրեք պէտք կ'լինէր շաւիղ բանալ մացառներու, փշերու և պատատուկ բաղեղներու մէջէն, որք գրթէ անթափանցելի էին: Նորա ձին յաճախ մինչև փոքր կ'ընկալէր եղիւրի մէջ. այնուհետև հարկ կ'լինէր հետիոտս յառաջ երթալ գողօթուն կեղևի վրայէն և շրջատեսութիւն անելէն ետքը՝ նոյն իսկ վտանգաւոր ճամբով նորէն յետ դալ դէպի ձին: Այսպէս նա զանազան կողմերէն ներս

մտաւ մինչեւ այն ժամանակ մշակութեան անմատչելի սահմաններու մէջ և ապա թէ նոցա վրայ որոշ դադարի մի ստանալով՝ ձեռն արկաւ մօրը շրջընելու և արօրագրելու գծագրին: Եւ արդէն բաւական էր, որ Աւաշինգթն ինքն էր այս գծագրի հեղինակը և որ նա ինքը վստահ էր զործի յաջողութեան վրայ, որպէս զի իսկոյն մի քանի հարուստ մարդիկ ընկերութիւն կազմէին և միջոց տային նորան զայն ՚ի գլուխ հանելու: Շատ տարիներ չանցան և աւասիկ առաջուայ վայրերնի գաւառէն յառաջ եկաւ հոյակապ երկիր մը, որ լի էր բերրի գաշաբերով և սիզաւէտ մարդերով:

Այս զլիսուս մէջնկարագրուած կեանքի եղանակը այն աստիճան զոհոնակութիւն կ'տար պատուական Աւաշինգթնին, որ ոչինչ բանի այնքան չէր փափաքեր որպէս այս կեանքին, զոր նա կ'տեսնէր շարունակելով մինչև ՚ի դերեղման: Բայց այլ էր ճակատագրի վճիռը: Ինչ որ նա ի բրև օրինաց հնազանդ և իւր մայրենի Անկլիային սրտով սիրահար մարդ երազել անդամ չէր կրնար՝ կատարուեցաւ — զաղթականութիւնքը մայրենի երկրի հետ վէճի բռնուեցան, և այս եղաւ պատճառ, որ Աւաշինգթն յանկարծ դուրս նետուեցաւ իւր տան հանդիստ շրջանէն:

Է

ՄԻՆՉՅԻ ՅԸՆԳՆԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Արդ՝ նայինք թէ ինչ էին զաղթականութիւնքը մայր երկրի հետ թշնամացընող պատճառները: — «Այն օրինազանցին:» Թշնամութեան առիթ տուող օրինազանցն էր Անկլիոյ կառավարութիւնը: Անկլիական սահմանադրութեան հիմնական օրինօք երկրի երեսփոխաններու հաճութեամբ միայն կարող էին նոր հարկեր դրուիլ աղքի վրայ: Բայց կառավարութիւնը մէկէն յանդգնեցաւ առանց Խորհրդարանի հաւանութեանը հարկ դնել զաղթականութեանց վրայ, և ասել թէ ակներև մեղանչեց պետական օրինաց պարզ արամադրութիւններու դէմ:

Իւրաքանչիւր ազնիւ մարդ կ'համաձայնի մեզ, թէ ասեմք, որ պատմութեան ամենողբալի տեսարաններէն մէկն է այս, երբ օրինաց ասնդապահի սուտ պաշտօն վարող կառավարութիւն մի՛ օրէնքը

սյահարանելու տեղ՝ ընդհակառակն ինքը զանոնք խորտակելու կ'աշխատի: Սոյն տեսակ եղիլի տեսարանի սրտակեր կ'ներկայացնէր և Անկլո-Ամերիկային վէճը:

Անկլիոյ խորագէտ գիւանագէտներէն ոմանք արդէն առաջուց կը գուշակէին այս անիրաւութեան հետեանքը, և օրինակի համար՝ լօրտ Գրամսն: Սա էր յատկապէս, որ ասաց Քրանկլինին. «Չնայելով ձեր զովասանեալ սիրոյն առ Անկլիան, զիտեմ որ դուք Ամերիկացիք օր մի գձեք նորա հետ միաւորող կապերը թոթափելով՝ պիտի վերջնէք անկախութեան դրօշակը:»

Երբ հուսկ յետոյ այս խօսքերը նորէն մարդոց միտքն ընկան՝ կամեցան իմանալ, թէ արդեօք ի՞նչ էր նորա պատճառը, և հետազօտութիւնքն ապարդիւն չմնացին: Մինչդեռ Ամերիկայի գաղթականութիւնքը օրինապահութեան ամենընտիր օրինակ կ'հանդիսանային՝ նոյն ժամանակի անկլիական կառավարութիւնը ապօրինութեան ողոյ կայան մը կ'ընծայէր. և Քրամսն արդէն կանխաւ կ'տեսներ, որ կառավարութեան անհիմն սահանջմունքն օր մ'անշուշտ զաղթականութեանց ընդդիմութիւնը յարուցանելու էին:

Քրամսնի այն դիտողութեան դէմ Քրանկլին ասած էր թէ, «Ոչ ինչ բան այնքան հեռու չէ ամերիկացի եղբայրներէս, որքան որ մայրենի երկրէն զատուելու և ջոկ պետութիւն մի կազմելու միտքը՝ այս ևս ասելցընելով՝ «Միայն թէ դուք մեր պատուոյն չըսչէիք:» Առ որ լօրտն ևս խորհրդաբար ասած էր. «Իրաւ է, և այս մինն է այն պատճառներէն, որք անշուշտ արագելու են փորձանքը:»

Լօրտ Քրամսնի գուշակութիւնը կատարուեցաւ. Գէորդ թագաւորի պաշտօնեայքը կամայօրէն հարկ դրին զաղթականութեանց քանի մի ապրանքներու վրայ: Այս ապօրինութեան դէմ Ամերիկայի ժողովուրդը սովաւ միայն բողոքեց, որ չդնեց Անկլիայէն բերուած և հարկի ենթարկուած ապրանքը: Հարկի որոշմունքը յետ առնուեցաւ, սակայն ոչ թէ այն պատճառով, որ դարձեալ արդարութիւնը վերականգնել կ'ուզէին, այլ զի մտադիր էին այն տեսակ իրի մը վրայ հարկ դնել, յորմէ ամերիկացիք չկրնային հրաժարուիլ: Կառավարութիւնը կ'ըսէր ինքն իրեն. «Պայմանագիրներն այն ժամանակ միայն օրինաւ որ նշանակութիւն ունին, երբ դրոշմաւոր թղթի վրայ զրուած կ'լինին. և որովհետև զաղթականութեանց առևտրական ժողովրդի մէջ անթիւ պայմանագրութիւնք կ'պատահին, ուստի անշուշտ պիտի ստիպուին դրօշմեալ թուղթ գնելու՝ վճարելով այն հարկը, զոր մեք կ'ընենք այս

Թող լինի վրայ : Սակայն այս բանի մէջ ևս վրիպեցան նպատակէն . ամեն-
րիկացիք բերանացի խոստմամբ և ձեռնառութեամբ միայն կ'շատանա-
յին գործելու մէջ և անկլիական հարկահանները բնաւ գնորդ չէին
զանք գործնադրի համար :

Աստ և անդ յուզուեր էին արդէն սրտերը . ժողովրդին հասած
կոշտ անիրաւութիւնը բունի ապատամբութեան առիթ կ'տար, բայց
խեղացի մարդիկ կ'աշխատէին օրինաւոր ճամբու վրայ պահել ընդհա-
նուր շարժումը : Տակաւին այժմ ևս Ուաշինգթոն 'ի բայ կ'վանէր իրմէն
մայրենի երկրէն զատուելու միտքը : «Իբրև փաստ կարող եմ յայտնել
քեզ, կ'զրէր նա ընկերներէն մէկին, որ անկախութիւնը ոչ զաղթակա-
նութեանց կամքին կ'յարմարի և ոչ շահու : Սակայն, կ'յաւելուր նա,
կարող ես վստահ լինիլ, որ նոցանէ և ոչ մին յօժարելու է տեսնելու
այն թանկագին իրաւանց եղծումը, որք իւրաքանչիւր աղատ պետու-
թեան բախտի էական մասերն են և առանց որոց ոչ աղատութեան ա-
պահովութիւն կայ, ոչ սեպհականութեան և ոչ կեանքի :»

Անկլիոյ խորհրդարանն ևս կոյր էր, որ հաւանութիւն չնորհեց կա-
ռավարութեան ձեռքով զաղթականներու դէմ լարեալ բռնութեանը :
Բայց և այնպէս Ամերիկայի բնակիչներու մեծադոյն մասը կ'ցանկար որ
քանր յայտնի գծաութեան չհասնի : Այս մասին աղօթքներ կ'անէին ե-
կեղեցեաց մէջ, այս փափաքն արտայայտող հանրադիրը կ'առաքուէին
'ի Լծնտոն յանուն թագաւորին և խորհրդարանին : Եւ Ուաշինգթոն կը
զրէր 'նոյն խորհրդարանի անդամներէն մէկին . «Գրողմազբի օրինաց
յետս կոչումը ինչ շարժառիթով և լինէր այդ, միայն ուրախութիւն
կարող էր աղբել մեզ . քանզի եթէ խորհրդարանն անդաւանալի կեր-
պով որոշած լինի 'ի գործ դնել այդ կանոնը, կ'երկնչիմ որ հարստա-
հարութեան հետեանքն թէ մայր երկրի և թէ մեզ համար աւելի չար
պիտի լինին, քան զոր կ'երեակայեն արդիս : Ուստի ամեն մարդ, որ
յետս կոչումի համար ձայնակից գտնուելու յօժարի, իրաւունք պիտի
ստանայ իւրաքանչիւր բրիտանական հպատակի շնորհակալութեան, և
ես կ'նուիրեմ ձեզ զիմբ բոլորով սրտի :»

Արդ՝ դրոշմի հարկն ևս յետ առին, բայց կրկին այն պատճառով, որ
քանր յաջողած չէր : Ամերիկայի դէմ ուղղեալ չար գիտաւորութիւնը
տակաւին կենդանի էր :

Քիչ ժամանակէն ետքը Անկլիոյ խորհրդարանն ու կառավարութիւ-
նը հարկ գրին թէյի, թղթի, ասպակիի և նկարչութեան ներկերու վը-
րայ : Այս բանը նորէն վրդովմունք պատճառեց սրտերուն : Գաղթա-

կանութեանց մէջ կազմուեցան առանձին ընկերութիւնք, որոց անդամ-
ները խօսք կ'տային բնաւ չզնել և չգործածել Անկլիայէն եկած ապ-
րանքը, մինչև որ անհրաժեշտ հարկաւորութիւն չզցան : Այլուսային որ
Անկլիոյ վաճառականները դէթ սովաւ կ'ստիպուին հարկերն վերցնել
աալու : Ուաշինգթոն կ'զրէր ընկերներէն մէկին . «Այս բոպէիս, երբ
մեր գոռող տէրերն ոչ այլ ինչ բանով կ'ուզեն շատանալ, բայց եթէ ա-
մերիկեան աղատութեան կործանմամբ, յոյժ կարևոր կ'թուի ինձ բանի
մի ձեռնարկել, որով կրնայինք 'ի բայ վանել հարուածը և պաշտպա-
նել մեր հայրենաւանդ իրաւունքը : Բայց թէ ինչ — այս է հարցը :
Ներքին համոզմունքս կ'ըսէ ինձ, որ ոչ որ վայրկեան մի զանդիտելու
չէ զէնք առնելու 'ի պահպանութիւն սուրբ իրաւանց . սակայն — կը
ինդրեմ նկատել այս — զէնքը մեր Ֆլէքսն օդնականը թող լինի, Ֆլէքսն
ապաւէնը : Թերևս ասեն . Արդէն տեսանք թէ ինչ կ'լին ունեցան մեր
աղերսանքը դահու և բացատրութիւնքը՝ խորհրդարանի առջև : Բայց
և այնպէս նորէն փորձ մի փորձենք — գուցէ նոցա վաճառականու-
թիւնն ու գործարանները պարզասելով յաջողինք յարդել տալ մեր ի-
րաւունքն ու արտօնութիւնքը : Հիւսիսային նահանգներէն կարծեմ թէ
սկսեր են հետեւիլ այս եղանակին . ես լաւ կ'համարիմ նոցա ընտրած
միջոցը, որ ապարդիւն չպիտի մնայ, եթէ ամեն տեղ 'ի գործ դնենք և
խստիւ պահպանենք զայն :»

Ուաշինգթոնի այս նամակէն պարզ կ'երևի այն ժամանակի ընտիր ա-
մերիկացոց բունած դիրքը Անկլիոյ դրժութեան դէմ : Սակայն Անկ-
լիան մէկ անիրաւութեանէն ետքը ուրիշ մը յղանալով աւելի ես յա-
ռաջ զնաց անդամ մի սկսած չարութեան ճամբու վրայ և բարձրագոյն
դաւաճանութեան մեղապարտ քարոզեց նոր հարկն տալու զլացող
մարդիկը : Եւ երբ Ամերիկայի դատարանները չկամեցան հնազանդել
այս պատուէրին՝ նոր ատեններ հաստատեց ծովային զինուորներէն,
որոց հաւատարմութեան վրայ արդէն կանխաւ վստահ էր, և ապա —
դարձեալ երկրի օրէնքներուն հակառակ — քաղաքային խորհրդարան-
ները լուծելով նորերը կազմեց : Վերջապէս այս ևս որոշեց, որ յա-
պագային բոլոր ծանր յանցանքները ոչ թէ Ամերիկայի, այլ 'նոյն իսկ
Անկլիոյ մէջ գատուելու էին :

Այս բունի վարմունքն աւելի ևս շարժեց ամերիկացոց սրտի մէջ
յուզեալ զառնութիւնը . աստ և անդ սրտմտութեան տրտունջ կը
չտուէր . տեղ տեղ ամերիկայի ամբոխի և անկլիական զինուորներու
մէջ բանը կուրի կ'հասնէր : Վերջինքն էպերանօք Եանսի կ'անուանէին

զամբրիկացիս, որ Իրոքէզներու լեզուով վեհերոտ և վատթար կ'նշաւ նակէ. որոյ փոխարէն ժողովուրդն ևս անկլիացի զինուորներու շառազոյն համադրեստն նշաւակ առնելով խեցզեալին և արիւնուռազ գալիւ կ'անուանէր զնոսա :

Անկլիայէն թէյով եկած նաւերը քանի մի ժամանակ դուրս կ'վարուէին Պոսթօնի նաւահանդատէն. 'ի պատիժ այսորիկ կառավարութիւնը հրամայեց պաշարել նաւահանդիստն անկլիական նաւերով և յայտնեց թէ այսուհետեւ բնաւ չպիտի հանդուրժի թէյարեր նաւերու հալածումն տեսնելու : Պոսթօնի բնակիչներու բարկութիւնը միանգամայն բորբոքեցաւ այս հրամանի դէմ և այնուհետեւ քանի մի ամբրիկացիք՝ իբրև հնդիկ ծպտեալ՝ նաւերը մանելով 342 արկղ թէյ թափեցին ծովի մէջ :

Անկլիացիք իսպառ պաշարեցին նաւահանդիստը. քաղաքը մեծ նեղութեան մէջ ընկաւ, առևտուրը զրեթէ ամենևին չբացաւ :

Այժմ Անկլիոյ կառավարութիւնը առաջարկեց Ամսօնի խորհրդարանին, որ Մասսաչուզէթի բնակիչներն պատժուին իբրև ապստամբ : Խորհրդարանի մէջ 'ի նպատակ ընդդէմ ձայներ լսուեցան : Զօրապետներէն մին, որ անժոյժ ցատամբ կ'յանդիմանէր մանաւանդ Պոսթօնիներու արարքը, կ'յայտնէր թէ իսկոյն պատրաստ է հինգ հետեւալ գնդերով բոլոր ամբրիկացի ապստամբները աշխարհէս մէկ ծայրէն միւտը վանել : Այլք պաշտպան կ'հանդիսանային ամբրիկացոց, և օրինակի համար Ուիլքէնս կ'ապացուցանէր, թէ Անկլիոյ ընթացքը գաղթականներու դէմ միանգամայն անիրաւ և դատապարտելի է : «Մեր պաշտօնեայքն են, կ'ըսէր նա, որ կ'ուզեն քակել զհիւսիսային Ամբրիկան Մեծին Բրիտանիոյ հետ զօրող կապերը և ոչ թէ գաղթականք. վերջինքս այլ ինչ բան չեն կամենար, բայց թէ խաղաղութիւն, ազատութիւն և ապահովութիւն :» Այս ասելով նա կ'աղաչէր զխորհրդարանը աւելի հաշտ միջոց բանեցնել զաղթականներու հետ : «Չեմ երկբայիր, կ'ըսէր նա 'ի վերջոյ, որ դուք կարող կ'լինիք այրել Պոսթօնը և կամ զօրեղ պահակ մը դնել այն տեղ. բայց իմացէք որ այնուհետեւ ամբողջ գաւառը կ'հորչի ձեզ համար : — Այս վայրկեանէն սկսեալ կ'տեսնեմ արդէն Ամբրիկայի անկախութեան ծագումն ու զօրանալը, կ'տեսնեմ թէ ինչպէս իւր ազատութեան վրայ պինդ կալով՝ աշխարհիս ճոխազոյն և հզօրազոյն պետութեանց շարքն կ'անցնի : Կ'ուզէք արդեօք յուսահատութեան հանցընել զնոսա : Օ՛ն ուրեմն Գուք պիտի գտնէք ձեր առջև ազգ մի, որ բռնակալութեան դէմ

քորոքեալ վրէժէն զօրութիւն քաղելով՝ նոյն խկ արիութեամբ պաշտպանելու է իւր ազատութիւնն ու զոյքը, որպէս երբեմն և մեր փառաւոր նախնիք, երբ սոքա իւրեանց վտանգեալ իրաւունքն պահպանելու կ'երնէին :»

Այս աղաբարութիւնը չօգտեց. խորհրդարանի բազմութիւնը կուրացեալ պաշտօնէութեան համամիտ մնաց և բոլոր Մասսաչուզէթ նահանգի բնակիչները ապստամբ քարոզուելով պատերազմական օրինաց ենթարկուեցան :

Կռիւն արդէն սկսած էր :

Հազիւ թէ այս որոշումը յայտնի եղաւ Մասսաչուզէթի մէջ՝ նոյն ժամայն նահանգներու երեսփոխանքը հաւաքուեցան Սալէմ և այս տեղէն հրաւեր կարդացին Ամբրիկայի բոլոր գաղթականութեանց, որպէս զի փութան ընդհանուր ժողով մի կազմելու : Հրաւերն ամեն տեղ ընդունուեցաւ, միայն թէ Գեորգայ պատողամաւորներն էին, որ քիչ մեռչ միացան միւսներուն : Ընդհանուր ժողովը գումարուեցաւ Ֆիլադելֆիա 4 սեպտեմբերի, 1774 :

Լուրջ և պատկառելի մարդիկ էին այս ժողովի յիսուն և մէկ անգամները, որոց մէջ ամենէն նշանաւորն էր Ուաշինգթօն : Քիչ մ'առաջ սա դրած էր ընկերներէն մէկին. «Ի՞նչ բանի դէմ է արդեօք մեր այս երկար վէճը. արդեօք իւրաքանչիւր Ֆրանսի թէյի համար երեք փէնս վճարելու տուրքին դէմ — ոչ. մի միայն մեր իրաւանց պաշտպանութեան համար է որ կ'վիճինք այսպէս երկար : Եթէ ես գէթ սակաւ մի հաւատ ունենայի, որ Բրիտանիոյ խորհրդարանը իրօք կարող է առանց մեր հաճութեան հարկ դնել մեր արտօնութեանց և սահմանադրութեան վրայ՝ այն ժամանակ աղաչանքի, այս մի միայն աղաչանքի մէջ կ'որոնէի մեր օգնութեան միակ միջոցը : Բայց իմ հաստատ համոզմունքս այս է, որ այդ խորհրդարանը բնաւ իրաւունք չունի իւր աջն իմ կրպանիս մէջ դնելու, որպէս և ես ոչ ունիմ իրաւունք զիմը դնելու հարեանիս կրպանի մէջ :»

Ընդհանուր հաւանութեամբ ժողովի նիստն աղօթիւք բացուեցաւ և քարոզիչ քահանայն արդար գործի համար Աստուծոյ հովանաւորութիւնն ինդրելէն առաջ՝ կարդաց Սաղմոսի հետեւեալ խօսքերը.

«Գառտեա Տէր զայնոսիկ՝ ոչք դատեն զիս. մարտիր ընդ այնոսիկ օրք մարտնչին ընդ իս : Առ զզէն և զասպար քո և արի յօղնել ինձ :»

Ժողովն ամեն բանէն առաջ 'ի դիմաց գաղթականութեանց յայտաբարութիւն մի գրեց, յորում համառօտ և պարզ կերպիւ նոցա օրինաւոր

իրաւունքը յիշատակուած էին: Այսուհետեւ որոշեց խապառ չքնել Անկլիայէն եկած ապրանքները՝ մինչև որ անհիմն պահանջմունքը յետս չառնուին, և վերջապէս երեք հատ թուղթ յօրինեց, որք էին՝ հանրագիր մի առ ազգն Անկլիոյ, արձանագիր մի առ ազգն Ամբրիկացոց և ազերսագիր մի առ թագաւորն Անկլիոյ: Նոյն իսկ յետին ճգնաժամին անդամ կ'ուզէին դեռ հաշտ ճամբով չարեաց առաջնք տունուլ:

Հաստատուն և լուրջ էին անկլիական ազգին ուղղեալ խօսքերը: Ձեռք կ'պատմեն, ասած էր հանրագրի մէջ, իբր թէ մեր պատամբներ ենք, որ իշխանութեան հնազանդելէ ձանձրանալով՝ անկախութեան կ'դիմենք: Հաւատացէք, որ միայն զըստարտին այդպէս կ'խօսի: Թոյլ տուէք մեզ ձեզ նման ազատ լինիլ և ձեզ հետ միութիւն պահպանելը ամենամեծ փառք ու բարեբախտութիւն կ'համարինք: Մեր միշտ պատրաստ կ'լինինք ամենայն ինչ որ ունինք զմէջ յօգուտ պետութեան, ձեր թշնամին իբրև մեր թշնամին, ձեր շահերն իբրև մեր շահերը դիտել: Բայց եթէ դուք թոյլ տաք ձեր պաշտօնէից խաղ վարել մարդկային պատուոյ հետ և եթէ ոչարդարութեան ձայնն և ոչօրէնքի պատուէրը, ոչ սահմանադրութեան հիմունքն և ոչ մարդկայնութեան զղացմունքը բաւական լինին յետ նահանջել զձեզ արիւնհեղուածնէն — այն ժամանակ պարտ կ'համարինք յայտնել ձեզ, թէ մեք յաւիտեան չենք նուաստանար ՚ի ծառայութիւն որ և է պաշտօնէի կամ ազգի:»

Խուլ էին թէ թագաւորն և թէ պաշտօնեայք: Ի զուր Անկլիոյ պետական մարդիկներէն ամեներևելին՝ Չաթամ, կ'զուշացընէր հայրենիքը, ՚ի զուր ոգելից խօսքերով կ'փառաբանէր և ամբրիկացոց արդար գործը — լսող չկար: Եթէ Չեր վսեմութիւնքը, կ'ոգէր նա, Ամբրիկայէն առ մեզ եկած թերթերն ու գրքերը տեսնէիք, եթէ ընդհանուր ժողովի զգօնութիւնը, իմաստութիւնն և հաստատամտութիւնն ՚ի միտ առնէիք՝ հարկաւ չէիք յապաղեր յարգելու ամբրիկացոց իրաւունքը և զայն ձերինի պէս պաշտպանելու: Ես իմ կողմէս պարտիմ խոստովանիլ, որ հին աշխարհի ամենամեծ պետութեանց մէջ անդամ չեմ ճանաչեր ազգ մի և կամ պետութիւն մի, որք այսպիսի դժուար հանգամանքներու մէջ առաւել վսեմութիւն ցոյց տուած լինէին քան թէ Ֆիլատել Փիա գումարուած ընդհանուր ժողովի ամբրիկացի պատուամաւորքը: Կնդութեամբ սրտի կ'տեսնեմ, կ'ըսէր նա ուրիշ անգամ, որ Ամբրիկան կ'ընդդիմանայ մեզ: Զի եթէ երեք միլիօն մեզ հաւասար մարդիկ յօժարէին ազատ կամօք ստրուկ դառնալու՝ նորա անշուշտ պատուական

գործիք կ'լինէին բռնակալի ձեռքն նոյնպէս և զմեզ դարձնելու ՚ի ստրկութիւն:»

Ուաշինգթոն ոչ թէ միայն իւր նախնի թաց կեանքով, այլ մանաւանդ և իւր գործունէութեամբ ընդհանուր ժողովի մէջ ազգի տարապայման հաւատարմութիւնը գրաւած էր: Երբ նշանաւոր երեսփոխաններէն մէկը — Պատրիկ Հանրի — տուն վերադառնալիս հարցմունք լսեց, թէ արդեօք ո՞վ էր ընդհանուր ժողովոյ անդամներէն ամեներևելին՝ պատասխան տուաւ. «Եթէ բանը ճարտարախօսութեան դայ՝ Ռուալէշը հարաւային Քառօլինայէն ամենէն գերազանց ճարտասանն է. բայց եթէ հիմնաւոր դիտութիւնք և առողջ դատողութիւն կ'ուզէք՝ տարակոյս չկայ, որ Ուաշինգթոն զնդապետը ամենէն մեծ մարդն է ժողովի մէջ:»

Ամեն մարդու համար, որ համոզուած էր թէ պատերազմի ժամն արդէն մօտ է, միտնալու թիւն էր այս հանգամանքս, որ Ուաշինգթոն իւր դիւանադիտական քանքարի հետ պատերազմական հանձարն ևս վկայած էր արդէն:



ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

Ի դերև աշխատեցան Անկլիոյ լաւազոյն մարդիկը զխառավարութիւնն ու խորհրդարանը յարդարութիւն և ՚ի զգաստութիւն հրաւիրելով: Մասնաշուղէթ նահանգը պատերազմական օրինաց տակ դրուեցաւ և պատուէր ելաւ վերջնելու ամբրիկացոց զինարանները, սկսելով նախ Պոսթօնէն: Սրտմտութեան աղաղակ մի էր որ հնչեց բովանդակ երկրի մէջ: Այլ ևս տարակոյս չկար, որ բռնակալութիւնը միանգամայն ոտնահարել կ'ուզէր զամբրիկացիս: Հայրենասէր անձինք կ'հաւաքուէին ՚ի մի վայր և կ'երդուէին կեանքերն անգամ զո՞հ բերել երկրի իրաւանց համար: Պատերազմը սկիզբ առաւ, երբ երկրորդ զինարանն ևս յափշտակեցին ՚ի Քօնքօրտ: Ուժի գերազանցութիւնն անկլիացոց կողմն էր, զի նորա թուով 800 էին, իսկ ամբրիկացիք՝ 80: Զինարանը պարպելէն ետև անկլիացիք յետ չողան դէպի Պոսթօն, բայց աղէ-

տալի դարձաւ այս շուն: Ամերիկացիք օգնութիւն ստանալով յարձա-
կուեցան նոցա վրայ: Անկլիացիք զարհուրելի կորուստ կ'կրէին և այն
ուր չհարելու թերևս և ոչ մին կարող կ'լինէր Պոսթօն ճողալովը, ե-
թէ նոցա հրամանատարն 'ի դէպ ժամու 1,000 մարդ 'ի թիկունս չա-
ռաքէր նեղեալներուն:

Ամերիկացիք չկրցան փրկել Քօնքօրտի համարանոցը, սակայն վերջ
'ի վերջն ձեռք բերուած յաջողութիւնը մեծ աշխոյժ տուաւ նոցա. զի
մարտնչեցան ընտիր ու վարժ գնդի հետ, մինչդեռ ինքեանք՝ լուկ քա-
ղաքացիք ու զիւղացիք՝ վեր 'ի վերոյ զբահաւորուած անմարդ վաշտեր
կ'կազմէին տակաւին: Բայց և այնպէս քաջորոշներ էին, զիտէին ա-
բազ քարեր ընտրել, թումբեր գտնել, պատնէշ կազմել և այն տեղէն
թշնամու վրայ հուր տեղալ — պատերազմի եղանակ մի, որ յետոյ բո-
լոր զօրքերու մէջ մուտք գտաւ:

«Ի սուր, 'ի դէն:» Այս աղաղակն կ'թնդար զիւղէ 'ի զիւղ, շէնէ
'ի շէն, քաղաքէ 'ի քաղաք: Ով որ սիրտ ունէր պաշտպան կալու հայ-
քնեաց, ով որ արդար ատելութիւն կ'զգար բռնակալութեան դէմ՝
կ'առնէր պատի վրայէն հրացանը և դաշոյնը գօտիին կապելով Բա-
րեաւ մաս կ'ատէր ընտանեաց: Այս հասարակ մարդիկը համազօրեանի
տեղ շապիկ կ'հագնէին շորերու վրայէն, ուստի և շապկամարդ կ'ա-
տուէին. ունևորները սպիտակ կեղծ ծամներով կ'զային: Անկլիացոց
գլխուորները դեռ սակաւ մի առաջ կ'ինդային այս շապկաւոր և ծամա-
ւոր մարդոց վրայ. բայց Քօնքօրտէն 'ի Պոսթօն փակելու ժամանակ
ժողովն 'ի սուր դարձաւ: Ամերիկացիք ամենուտեք կ'արշաւէին դէպի
Պոսթօն, որ թշնամու ձեռքն էր: Քիչ ժամանակէն ետքն արդէն 15,
000 ամերիկացիք պաշարած էին զայն ցամաքի կողմէն: Պաշարողներու
առաջին նպատակն էր զիտել զթշնամին և թոյլ չտալ որ երկրի մէջ
մտնի: Գառն էր քաղքի բնակչաց վիճակը, որք թշնամու ձեռքի տաք
ճնշուած՝ շարժիլ անգամ չէին կրնար: Անկլիացոց հրամանատարն
Գէճ, երկնչելով որ նոքա պատեհ առիթ մի գտնելուն պէս զուցէ
սպատամբելու էին իւր դէմ՝ խոստացեր էր արձակել զնոսա քաղաքէն,
եթէ զէնքերն յետ թողնէին. քաղաքացիք տուին զէնքերը, բայց նա
իւր խօսքը կորեց և պահեց զնոսա իբրև պատանդ:

Թշնամոյն 'ի խնդութիւն, ամերիկացոց 'ի սրտմտութիւն՝ օր մի
յանկարժ անկլիական նաւեր մտան նաւահանգիստ. սոքա բերին 4,
000 զինուոր ընդ վարչութեամբ Էօու զօրապետին, յոխորտամիս
մարդոց մի, որ նոյնպէս կ'երևակայէր թէ իսկոյն կարող պիտի լինէր

զոյգ զոյգ կապել քշել զամերիկացիս: Այս մարդուն յանձնուած էր
անկլիական զօրաց հրամանատարութիւնն Ամերիկայի մէջ: Անկլիացոց
Քօնքօրտէն յետ մղուելու չարագոյժ լուրն երևի թէ քիչ մի խախտեր
էր նորա վտահութիւնը, որ չյանդդնեցաւ իսկոյն յարձակուիլ մտա-
կայ ամերիկացոց վրայ, ինչպէս վայել էր իւր գոռոզ խօսքերուն: Սորա
հակառակ՝ առաջին շարժումն ամերիկացիք արին՝ մէկ գիշերուայ մէջ
պատնէշ արկանելով քաղաքի մօտ: Այս պատնէշներն առնելու համար
Էօու բոլոր իւր զնդերը թշնամու դէմ խալցուց: Երկու կողմէն ևս
ամենամեծ արիւթեամբ կուռեցան: Անկլիացիք արդէն երկու անգամ
յետ մղուած էին ամերիկացի հրացաններէն և սոքա յաջող յարձա-
կուներն ևս յաղթանակով յետ կ'վանէին անշուշտ, եթէ պաշարները
չսպառէին: Այսպէս ուրեմն միայն երրորդ ընդհարումէն ետքը յետ
չոգան քաջերը: Նոքա մնկնեցան կանոնաւոր կարգով. թշնամին ևս
այնպէս խոնջեալ էր, որ այլ ևս չկրցաւ հալածել զնոսա:

Յաղթանակն ամերիկացիք տարին. սակայն հրպէս քաջ մարտնչեցան
աղատութեան նորընտիր զուգադները հմուտ զօրապետներէ վարեալ
կիրթ և կազմ զնդերու հետ: Նոցա կորուստը միայն 453 մարդ էր,
անկլիացոցն՝ 1,054: «Այսպիսի դժնդակ արեան նախճիր այսպիսի
կարճ միջոցին երբէք չէի լսած» զոչեց Էօու:

Այս էր Պուներ Հիլի ճակատամարտը, որոյ ամերիկացի խոյեանս-
ներն արժանի էին հուսկ յետոյ 'ի փառս նոցա նոյն իսկ տեղի վրայ
կանդնեալ կոթողին: Բոլորքեան կ'զգային, որ այսպիսի հողուով վա-
ւեալ զնդեր օր մի անշուշտ ձեռք բերելու էին հայրենեաց անկախու-
թիւնը: «Երկրի աղատութիւնն ապահոված է արդէն» զոչեց Ուա-
շինգթոն շարժեալ սրտի՝ պատերազմի լուրն լսելիս: Պատնէշներն
անկլիացոց ձեռքն անցան, բայց նոքա պաշարումէն դեռ չէին աղա-
տուած:



ՌԻԱՇԻՆԳՐԵՆԻ ՍՊԱՐԱՊԵՏ ԸՆՏՐՈՒՒԸ

կրկին գումարուեցաւ բոլոր նահանգներու համար պաշտպանութեան հնար խորհելու: Այս բանի մէջ ամենէն շատ գործողն էր Ռաշինգթն, որ և նախագահ էր զինուորական սէտքերու զբաղեալ մասնաժողովոյն:

Իրերու վիճակին նայելով անշուշտ հրամանատար մի ընտրել սէտք էր: Ժողովի անդամներէն շատերն արդէն իբրև պաշտօնակալ ծառայած էին Բրիտանիոյ զօրքին մէջ և ՚ի թիւս նոցա կային ոմանք, որք ազատ չէին հրամանատար ընտրուելու թարուհոյսէն: Առաջին կռիւներու մէջ ևս՝ անկլիսացոց հալածման և Պունքը Հիլի արիւնահեղ պատերազմի ժամանակ՝ քաջ զօրավարք հանդէս ելած էին. պակաս չէին և այնպիսիք, որ տենչանօք հետամուտ կ'լինէին նոյն պաշտօնին. մինչդեռ Ռաշինգթն, ինչպէս սովոր էր անել սոյն տեսակ հանդամանքներուն, իսպառ կ'խորշէր որ և է մարդու վրայ ներդրածէլու ՚ի նպատա իւր անձին:

Վերջապէս մայիսի 13 քուէարկութեան ձեռնարկեցին և երբ ձայներն հաճրելու ելան՝ յայտնի եղաւ որ Ռաշինգթն միութեամբ ձայնից ընտրուած էր՝ ՚ի բաց առեալ միայն իւր քուէն: Նա շնորհակալութիւն յայտնեց ժողովին այս հաւատարմութեան համար, ուխտեց անձնուիրութեամբ ծառայել հայրենեաց, բայց այս ևս ՚ի վերայ բերաւ, որ պաշտօնն իւր ուժէն վեր էր: Եւ ապա ասաց. «Եթէ չար բախտն իմ ջանքս ՚ի դերև հանելու լինի՝ կ'ինդրեմ սրահիս մէջ բազմեալակումբէն ՚ի միտ բերել այս իմ անպատրուակ և պարզ խոստովանութիւնս, որ ես հասուն չեմ համարիր զիս այն պաշտօնին, որով կ'մեծարէք զիս:» Նա ընդունեց իւր ընտրութիւնն իբրև նախախնամութեան հրաւեր մի, որում չհնազանդիլը մեղք կ'համարէր, և պատրաստ էր ՚ի գործ գնել բոլոր իւր կարողութիւնքն՝ յուսալով որ Աստուած ևս չէր թողներ զնա առանց իւր օգնութեան, և որովհետև փառասիրութեամբ չէր գրգուեր և ակներև կ'տեսնէր այն խնդրոյն ծանրութիւնը, որոյ լուծումն իրմէ կ'սպասէին, ուստի պաշտօնն ընդունելով մեծ զոհ բերած կ'լինէր հայրենեաց: Այս մարդը, որ ներքին անձկանօք ընտանեկան անդորր կեանքի քաղցրութեանց և պարտէզ ու դաշտի զբաղմանց և եթ կ'բաղձար՝ յանկարծ կ'սպարտաւորէր պարագլուխ կանգնիլ ռազմական շարժման մի, որ, ինչպէս ինքն ևս քաջ զիտէր, նոյն իսկ յաջող դիպուածին անգամ ընդ երկայն աւուրս բաժանելու էր զինքն ընտանիքէն և ծննդեան տեղէն:

Սակայն նորա արիական հողոյ մէջ բոլոր միւս զլայմուսներէն բարեպաշտութիւնն ու պարտուց ճանաչումը դերազանցելով տրամուտեան միայն թեթև շունչ մի կ'լսենք նորա նամակներէն, զորս անմիջապէս իւր ընտրուելէն ետև զրած էր: «Վարդ էս հաւատալ ինձ, կը դրէր նա կաթողին սիրով սիրեցեալ ամուսնոյն, եթէ ամենահանգիստւոր կերպիւ ասեմ քեզ, որ ես հետամուտ չեղայ այս ընտրութեանը և ամենայն հնարիւք աշխատեցայ խորշիլ նոբանէ չէ թէ միայն ՚ի քէն բաժնուելու անյօժարութեանս համար, այլ զի և համոզեալ էի, որ պաշտօնն ՚ի վեր է քան զչափ իմ ընդունակութեանց: Քեզ մօտ մնալով մէկ ամուսայ մէջ առաւել բախտ կարող կ'լինէի վայելել, քան զոր մարթ է ինձ յուսալ զանելու այլուրք:» — «Յոյս կ'գնեմ՝ նախախնամութեան վրայ, որ բարեգութիւնելով առ իս պահեց զիս մինչև յայսօր, և չեմ տարակուսիր որ աշնան ողջանդամ կ'վերադառնամ քեզ մօտ: Արշաւանքի նեղութիւնքը բնաւ վիշտ չպիտի ազդեն ինձ. իմ ախուր զգայմունքս սխալ ծաղին միայն այն թախծէն, զոր զիտեմ որ զլալու ես, երբ որ միայնակ մնաս: Աստի կ'աղաչեմ զքեզ՝ զօտևորիլ որ սնդութեամբ և զուարթ սրտով անցուր ժամանակդ: Աշինչ բան այնքան սիրտանք շնորհելու չէ ինձ, որքան որ յատկապէս այդ՝ քո զբշով ինձ հաղորդեալ:» — Մէկ րնկերի մ'ևս հետևեալն կ'դրէր. «Հայրենեաց գործը դժուարին և վտանգաւոր սպարտաւորութիւն կ'գնէ վրաս, սակայն յուսով եմ որ զիւր արարածներն իմաստութեամբ խնամող Տեսչութիւնն վերին ինձ ևս զօրութիւն կ'տայ կատարելու զայն ճշտիւ և յաջողութեամբ:»

Ռաշինգթն իբրև սպարապետ հինգ հարիւր տօլլար ամսական տոսնալու էր. բայց նա մերժեց ամեն տեսակ վարձատրութիւն, ասելով որ հասարակային պաշտօնի մէջ անելիք ծախքերու վրայ յետոյ հաշիւ կ'ներկայացունէ և թէ հաճին փոխարինել զայն առելի ոչինչ չպիտի ցանկայ: Ժողովի ակնհասուոր անդամներէն մինքն քաջուսումն ճին Ատամն՝ կ'դրէր ընկերի մը. «Ըստ իս՝ թով չական բան մի կայ Ռաշինգթնի բարուց մէջ. նա մեր երկրի ամենաճոխ տոհմիկներէն մինն է, բայց և այնպէս իւր քաղցրիկ մնտութիւնը, իւր ընտանիքն ու ընկերքը կ'թողնէ, կ'զօհէ իւր հանդիստը, այս ամենը վտանգի մէջ գնելով ՚ի սէր հայրենեաց:» Հնորհատուր հրովարտակիւն մէջ, զոր մատուցին նորան յունիսի 20ին, նորա հայրենասիրութիւնն ու քաջութիւնն և ամեն հանդամանքներու մէջ վկայած ազնուութիւնն ու հաւատարմութիւնը և վերջապէս նորա մաքուր բարքն զովասանօք յիշուած

էին: Արովհետեւ նորա 'ի դաշտ չուելու օրն արդէն մերձ էր, ամեն մարդ որ տակաւին չէր տեսած զնա՝ դէթ անդամ մի կ'ուզէր տեսնել զնա աչօքը: Ուաշինդ թն դնդպետներու խնդրոյն զիջանելով հրամայած էր քանի մի վաշտերէ զօրահանդէս կաղմել իւր առջև: Բոլոր աշխարհ կ'զմայէր նորա տեսքէն: «Հազիւ կ'պատահի, կ'ըսէ Ուաշինդ թն Իրվինդ, որ ժողովրդի զարգացումը հրամանատարի մը վրայ իւրեան աւելի պատշաճող իսկութիւն մի գտած լինէր: Ուաշինդ թն այժմ իւր արիական զօրութիւնքը լիովին ծառայած քառասուն և երեք տարեկան մարդ էր՝ անձնեայ և թիկնաւէտ տեսլեամբ, ազնիւ ձևերով, հանդարտ և պատկառելի շարժմամբ: Նորա վայելուչ կորուզութեամբ ձի նստիչն տեսնելիս ամենքն կ'զմայէին զինուորական քաջ պատկերի վրայ և ուր որ երևէր՝ գրուատիք կ' թնդային օդի մէջ:» Ճօն Ատամնի շորհալի ամուսինն հետեւեալը կ'զրէր սպարապետի մասին. «Ուաշինդ թնի մէջ տոհմիկ մարդու և հասարակ զօրականի, ակնածելի ծանրութեան և հաճոյական բարուց ախորժ խառնուրդ մի կ'երևի, որոյ նմանն բնաւ չեմ տեսած: Այս ազնիւ և արդարեւ վեհական երևոյթի ամեն մի դժէն համեստութիւն կ'շողայ:»



ՈՒԱՇԻՆԳԹՆ ԳՈՍԹՕՆԻ ԱՌՋԵՆԷ

Այս վճռահաստական ժամուն ժողովը նորէն թագաւորին սիրտն աւժորելու փորձ կ'փորձէր մեծարիչ խօսքերով յօրինեալ աղերսադրով մի, ուր կ'ըսէին. «Թոյլտուութիւն կ'հայցենք հաւասարակցիւնելու գլխեր մեծութիւնը, որ չնայելով արդի երկպառակութեան մէջ ձեր հաւատարիմ գաղթականաց կրեալ վշտերուն, մեր սրտերն տակաւին այնչափ լիքն են ակնածութեամբ առ պետութիւնն, որում պարտիք մեր ծագումը, որ բնաւ չենք կամիր մեր սիրելի մայր երկրի բարօրութեան և պատուոյն հետ անզուգելի վճիռ մի հատանել:» Ուրեմն դարձեալ անդամ մի հաշտութեան միջոց բնտրելու առիթ կ'տրուէր պետութեան, բայց նա մերժեց զայն և Աճնտօնի մէջ ուշադրութիւն անդամ չընծայեցին ժողովին: Այս տեղ կ'մտածէին Հօալի սուսերներով պատասխանել ամերիկացւոց և չէին երկբայեր որ անկլիայի հրամանա-

տարն ընդ հուպ աւետելու էր նոցա ապստամբութեան խորտակումը — որպէս կ'անուանէին նոքա այն իրաւացի ընդդիմութիւնը:

Մինչ այս մինչ այն Ուաշինդ թն հասաւ Պոսթօնի առջև: Հետեւալ կերպիւր կ'նկարագրէ ամերիկացւոց բանակը նոցա հարիւրապետներն մին. «Վարանները տարբեր են, որպէս և տէրերն իւրեանց հաղուստով, և իւրաքանչիւրն իւր բնակաւորի բարուց և ճաշակի պատկերն կ'ներկայացընէ: Մի քանիսն այս վրաններէն տախտակէ շինուած են և միւսներն սուղաքառէ, այլք՝ մասամբ այս և մասամբ այն նիւթէն, են և այնպիսիք որ քարէ, դալարէ, աղիւսէ և ոստերէ կազմած են, են դարձեալ և այնպիսիք որ երկրի մէջ իսկ փորուած են և կամ վերջապէս ձողերէ և պատաստուկ բաղեղէ յօրինուած են ճարտարութեամբ:» Ի տրտմութիւն իւր Ուաշինդ թն չգտաւ ինչ որ կ'յուսար, ամերիկացւոց զօրքը 20,000 չէր, ինչպէս որ կանխաւ որոշուած էր, այլ 16,000, յորոց դարձեալ միայն 14,000 մարդիկ ընդունակ էին զինուորական ծառայութեան. նա դտաւ քաջ մարդիկ, բայց ոչ թէ միաձոյլ զօրք, դտաւ մանաւանդ մեծ ու փոքր վաշտեր, որք իրարմէ թէ գէնքով տարբեր էին և թէ վարչութեամբ անկախ: Ոչ թնդանութիւն կային բանակի մէջ և ոչ անհրաժեշտ պատերազմական կազմութիւնք:

Ուաշինդ թնի առջևն ելնող առաջին խնդիրն էր՝ միահաղոյն զօրք կազմել այս անկարգ բազմութենէն — խնդիր մի, որոյ լուծման չափազանց դժուարութիւնքը նա արդէն կանխաւ կ'տեսնէր: Ընտիր ընտիր քաջեր էին նորան յանձնուած անտառարնակ մարդիկը, սակայն ինչօգուտ, երբ անկախութեան սիրով վառեալ ամեն տեսակ զինուորական կարգերու ռիւերիմ թշնամի կ'հանդիսանային: Սակաւ օրերու, շաբաթներու մէջ լրացընելու բան չէր այն խնդիրը. մինչդեռ քաղաքի մէջ պատուական կազմութեամբ և ամեն պաշարներով լիովին հայթհայթեալ 11,000 համրող սպառազէն զօրք կանգնուած էր:

Եյսպէս ուրեմն բանակ մանելու առջի օրն իսկ լիարուստ գործ դտաւ Ուաշինդ թն. աւստիկ այս տեղ օդնեց նորան իւր մանկութեան սովորութիւնը, որով ամեն մի բան կանոնաւոր կերպիւր, որոշեալ ժամուն և որոշեալ տեղին սկսելու և իւր բոլոր ջանքը գործի ընթացքին նուիրելով անընդհատ ուշադրութեամբ նորան հետեւելու վարժած էր: ճրպիտի աշխատութիւն, ինչ ոյժ, ինչ տոկոսութիւն և համբերութիւն պէտք էին նորան բանակի մէջ այն հոգին յարուցանելու համար, առանց որոց ոչ մի զօրք կարող չէ տեւական յաջողութիւն գտնել դաշտի վրայ:

Ա. Երոյիչեալ Հանդամանքներու մէջ նորան ոչինչ չէր մնար անել, բայց թէ հետեիլ Փարիսո Յասարալչի պատերազմական օրինակին: Տարին անցաւ առանց որ և է շարժողութեան այս կամ այն կողմէն: Գեկտեմբեր ամսին ամբրիկոյի գնդերու մէկ մասը, որ միայն ներկայ տարւոյս համար զինուորական ծառայութեան սլաքատուրած էր, կամեցաւ տուն վերադառնալ. մարդիկ ունէին իրաւունք առ այս — և Աւաշինոյթն թողաւ որ գնան: Պոսթմոնտ արքայութեան բանակի մէջ մնաց միայն 10,000 մարդ, այն ինչ նոյն իսկ միջոցին քաղաքի թշնամին նորէն օժանդակ վաշտեր ընդունած էր Անկլիայէն:

Երկրի հայրենասէր անձինքն դուշակ անգամ չէին այն դժուարութեանց, որոց հետ ստիպեալ էր մաքառիլ Աւաշինոյթն. շատերը կ'կարծէին, թէ նորա սպարապետութեան առջի օրն իսկ յաղթութեան աւետիք բերելու էին լրագիրք. բայց առտիկ տարին անցաւ, և գեոռչինչ չէր պատահած: Աւաշինոյթնի երկու նամակները, երկու քն ևս Ռայդ հաղարայտին դրած, բաւականին կ'սլաքէն իրերու վիճակը: «Յոյժ կ'տարակուսիմ, կ'ըսէ նա առաջին նամակում, թէ արդեօք ամբողջ պատմութեան մէջ եղած է գէպք մը մերինն հանդոյն, ուր առտիկ բուխնդակ վեց ամիս առանց վառօդի մեր կայսնը բրիտանական զորութեան գէմ հաստատուն կ'պահէնք և ուր մեզ պէտք կ'լինի լուծել բանակն և զայն նորէն վերակազմել նոյն իսկ թշնամու գէմ յանդիման: Թէ ի՞նչ ելք կ'ունենայ այս բանը — ապաղաչին կ'իմանանք. իսկ այժմուս ես կ'ընակայի որ մեք գէթ մէկ ամսով ձեր լինէնք:» Երկրորդ նամակը գրուած է յաջորդ սարուայ (1776) փետրուար ամսին: «Ես ինքս գիտեմ որ շնորհքն լաւ, կ'ըսէ նա, այն ողորմելի գրութիւնը յորում կ'գտնուիմ. գիտեմ այն ամենը ինչ որ կը պահանջեն ինձմէ. սակայն գիտեմ նոյնպէս, որ առանց զինուորի, առանց զէնքի, առանց պաշարի — առանց այն ամեն իրերու, որք անշուշտ կարեւոր են զօրականին — ոչինչ բան չյառաջանար: Սակայն ամեն բանէն աւելի զիս տաղնապօղն այս հանդամանքն է, որ ես չեմ կրնար արդարացընել զիս աշխարհի գիմաց՝ առանց մեր թերութիւնքն յերևան հանելու և մեր գործին փետուր: Առան որոց հաստատուրած եմ իմ պիտոյքս յայտնելու ժամանակ այնչափ և եթ յայտնել, որչափ որ ստիպուած լինիմ անհրաժեշտ հարկէն: Իմ վիճակս երբեմն այն աստիճանի տաժանելի կ'լինի, որ եթէ ես բնդհանուրի շահն աւելի նուազ յարդէի քան թէ իմ յատուկ բաւականութիւնս, վաղուց արդէն թողած կ'լինէի ամեն բան: Փոխանակ 20,000 այրընտիր զե-

նուորի այս թուի կէսէն քիչ մարդիկ ունիմ ձեռքիս տակ, ընդ որս կը հաշուեմ նաև այնպիսիք, որք կամ հիւանդ են, կամ արձակուրդ առած, կամ բանի առաքուած և կամ վերջապէս վատ զբահտուրած են: Գրութիւնս այնպէս գէշ է, որ արուեստական միջոցներու զիմել կ'ստիպուիմ՝ զայն գնդապետներէն սրահելու համար:» Բայց և այնպէս անխոնջ կ'վատակէր Աւաշինոյթն բանակի նորակազմութեան վերայ չէ թէ միայն արտաքին գործերու զբաղելով, որպիսի են զէնք, պարէն, և այլն, այլև բանակի ներքին վերաշինութեան վրայ հոգ տանելով: Նորա զնդերու մէջ ևս կային պարզ և զազիր որեալք, որք միայն զայթակողութիւն էին զօրականին. ուստի Աւաշինոյթն հետեւեալ օրական պատուէրն արձակեց. «Այս ընդհանուր ներքութեան օրերուն փոխանակ շուայտութեան հետամուտ լինելու՝ ամեն մարդ կարող է բաւականին դորձ գտնել ՚ի սպաս Աստուծոյ և հայրենեաց: Առաքիչնութեան և մարդկութեան դորձ է այս, որոց համար կ'մարանչիրք. մեր սերնդոց ժառանգութիւնը կախուած է մեր ճգտնքէն, և այս ժառանգութիւնս կամ ազատութիւնս պիտի լինի կամ ստրկութիւն: Անուուութեան թեւակոխելու քան զայս զօրաւոր շարժառիթ միթէ կարող է լինել այր մարդոց համար: Արդ՝ թեղ յայտնի լինի գնդերուն, որ իւրաքանչիւր ոք որ յանդոյն յետ մնալ կուտէն, առանց հարկ բապետի պատուէրին տեղի տալ թշնամուն, թաքչիլ և կամ դատուիլ լինիլ — այս տեսակ անարի վատութեան համար նոյնամանայ սպանուելու է զիտապատճ յօրինակ այլոց, զի վատարիք ստեպ ամենավաթ զօրքերն անգամ կ'ըփութեն իւրեանց խայտառակ վեհերատութեամբ:»

Այս հրովարտակէն շատերն կ'հեռացընէին, որ Աւաշինոյթն վերջապէս ՚ի գէպ կ'համարէր հարուած տալու ոստիին — և իրաւ այսպէս էր: Նա կ'ուղէր առնել քաղաքին մերձակայ Տօրչեսթրի բարձունքը, ուստի թշնամու մտադրութիւնն թիւրելու համար հրամայեց մարտի 3 զիշերուայ գէմ ուժղին ուրակոծել քաղաքը, և մինչդեռ անկլիկոյիք շփոթման մէջ էին Աւաշինոյթնի գնդերը բարձունքն առին և ամբարցուցին: Այնպիսի եռանդով և փութով յառաջ տարին նոքա այս ամբարկալութեան գործը, որ Հօու զօրապետն լուսու գէմ բարձանց վրայ նայելիս ապշութիւնը չկրցաւ թաքցընել և դուչեց հիացմամբ. «Ապտամբները մէկ զիշերուայ մէջ աւելի գործ են տեսեր, քան թէ ամբողջ ամսուայ մէջ կրնալու էր տեսնել մեր բանակը:» Աւաշինոյթն այժմ թշնամու ամենազայրաղին յարձակման գէմ պատրաստ կ'ենայով, զի Տօրչեսթրի բարձունքը քաղաքի վրայ կ'իշխէին — կ'կարծէր թէ

վերստին Պուերթը—Հիլի մնալովն պէս բան մի ծայելու էր : Բայց յաջորդ օրերու անձրևն ու մրրիկը թող չտուին անկլիացի զօրապետին յարձակման ձեռնարկելու , իսկ ամբիկացիք աւելի ևս պատսպարեցին բլուրները : Եւ երբ փոթորիկ հանդստանալէն ետև Հօու նորէն թշնամու կազմութիւնքն ՚ի նկատի առաւ այլ ևս անհնարին համարեց յարձակման զիմելու և սրտի դառնութեամբ քաղաքն թողնելով նաւասու զօրաց հետ , իսկ Ռաշինդթն՝ Պոսթօն :

Այս դէպքի լուրն ամենամեծ ուրախութիւն պատճառեց երկրին : Ի յիշատակ ազատութեան Պոսթօնի ընդհանուր ժողովը սահմանեց Ռաշինդթնի պատկերով ոսկի դրամ մի քանդակել : Նա խոնարհ սրախ գոհութիւն կ'մատուցանէր Աստուծոյ և կ'մխիթարուէր այս մտքով , որ նոր անցքը նոր իմն աշխոյժ տալու էր հայրենասէր սրտերուն , իսկ իւրեան վիճակուած մեծարանքէն յօժար էր և իսպառ զերծ մնալ , նա մանաւանդ զի ամենէն լաւ կ'տեսնէր , որ զեռ երկար պիտի տևէր կատարեալ ազատութեան տանող փշոտ ճամբան :

ԺԱ

ԱԶՍՏՈՒԹԵԱՆ ԵՍՍԵԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երբ ամերիկացիք սլարդ տեսան , որ իւրեանց բոլոր ինդիներն և առաջարկութիւնքը , որով արդարութիւն կ'աղբաւէին , ՚ի դերև ելան , վերջապէս հասեալ համարեցին այն ժամը , յորում պէտք էր յայտ առնել ՚ի լուր բովանդակ աշխարհի , թէ նոքա բոլոր պարտաւորութիւններէն առ Անկլիան այսուհետև ազատ կ'ձանաչեն զինքեանք և ջոկ պետութիւն կ'ցանկան հիմնել իւրեանց համար :

Հատ խորհրդաւոր ժամ էր այն ժամը , երբ 4 յուլիսի 1776 ամի ընդհանուր ժողովի առջև դումարուած ժողովրդին աւետեցին թէ Ամերիկայի բոլոր տասն և երեք նահանգները միաբան յօժար են անկախութեան և հնչեց զանդակը , որոյ վերնագիրն էր՝ «Ազատութիւն ամբողջ երկրին և իւր ամեն բնակչաց» : Այս զանգակի բարբառին արձագանք տուին մերձաւոր զանգակները . սոցա հնչումը կրկնեցին հեռաւորք և այսպէս զիւղէ ՚ի զիւղ և քաղաքէ ՚ի քաղաք նոցա ձայնը թնդալով ազգ արաւ նոյն օրուայ նշանաւոր խորհրդին նախաձեռնութ

թողովրդեան , որ մայրենի երկրէն բոլորովին և առ միշտ զատուելու ծանր քայլն , առ որ ստիպուած էին Անկլիոյ բռնակալութեամբ , արդէն առնուած էր :

Ամենայն տեղ ժողովուրդը կ'փութար տօնական հանդէսներով համակրութիւն յայանել այս պետական մեծ գործին : Սովանայի բնակիչներն ՚ի Գէորդայ մեռելահանդէս մի կազմելով քաղաքային խորհրդարանի առջև թաղեցին Գէորդ Գ. թագաւորի սպտիկերը : Մարգիկներէն մին ելաւ օրինաւ որ դամբանական ճառ կարգալու դերեզմանի վրայ և ասաց . «Գէորդ թագաւորն անամօթ կերպիւ ստեց թագազրուութեան երգման և մեր երկրի սահմանագրութիւնն ու մարդկային սուրբ ազատութիւնքը յերկիր տապալեց . վասն որոյ նորա քաղաքական ղոյտութիւնը դերեզման կ'դնենք — ապականութեան կ'մասնենք որ ինչ ապականեալն էր — այս վտոսհ և անուտ յուսով , որ նա այլ ևս երբէք , ոչ մի ժամանակ և յախտեան չպիտի յառնի կրկին իշխելու Ամերիկայի այս ազատ և անկախ նահանգներու վրայ» :

Եւրոպայի բոլոր ազատամիտ մարդիկը համակրութեամբ կ'նայէին յայնկոյս ուլկիանու լոյս տեսնող գործին . վեհերոտ անձինք կ'երկնչէին հարկաւ , որ ամերիկացոց օրինակը թերևս ամենուրեք մրրիկ յարուցանելու էր պետութեանց դէմ . սակայն միթէ նոքա համբերութեան օրինակ ևս ցոյց չտուին և միթէ նոքա չէին որ անձնուէր հպատակութեամբ միապետական ձևը պահպանելու ջանային : Ինչ կը խնդրէին նոքա թագաւորէն — սուրբ պահել երկրի օրէնքը . օրէնքը ամեն պետական կեանքի , նոյնպէս և ինքնակալութեան հիմնաւոր սիւներն են : Ով որ չցանկար իսպառ ապտակ զարնել ճշմարտութեան երեսին՝ պարտ է խոստովանիլ , թէ Գէորդ Գ. թագաւորն և նորա պաշտօնեայքն էին որ զյաղթականութիւնքն Անկլիոյ հետ շարկապող յօդերն կարեցին և ոչ թէ զաղթականք . զի սոքա այն ժամանակ միայն անկախ պետութիւն հռչակեցին զինքեանք , երբ իւրեանց բոլոր ազնիւ նկատուները օրինաց յարող վերականգնելու՝ ՚ի չլք դարձան Անկլիոյ կամակորութեանը զարնուելով , երբ հաշտութեան ասպարիզի վրայ հաստատեալ օրինապահութեան հացի փոխարէն՝ զոր կ'ինդրեն , բռնակալութեան քար տուին նոցա և նոցա արդար ինդիներու դէմ կապարով և վառօդով պատասխանեցին :

Անկախութեան յայտարարութիւնը դեղեցկութեան տիպար մի է թէ ըստ ձևի և թէ ըստ բովանդակութեան : Ամերիկացիք չէ թէ չեն յորդորեր իւրեանց օրինակին հետեւելու , այլ և խորհուրդ կ'տան ճշմարտել

վարեմի պետութիւնըը դիւրանցուի ու թեթե պատճառներով՝ և ապա թէ պետական կեանքի բուն խորհուրդը յիշելէ ետե՛ք բովանդակ աշխարհի գիմաց իւրեանց քայլերն արդարացրնելու գուն կ'գործեն :

« Եե՛ծին Բրիտանիոյ այժմեան թագաւորի պատմութիւնը , կ'ըսեն նոքա յայտարարութեան մէջ , անընդհատ անիրաւութեանց և յանդուգն պահանջմանց պատմութիւն մի է , որք ամենքն միասին մեր նահանգներու վրայ բռնակալութեան լուծ գնելու դիտաւորութեամբ կ'գործուէին , և յայսպէս այսօրի թողնելու մեղ ճետեկալ իրողութիւնքն յերեւան հանել 'ի դիտութիւն անխաւարանց ամբողջ աշխարհի :

« Կա միաբանեցաւ միւսներու հետ՝ մեր սահմանադրութեան օտար և մեր օրէնքներէն չընդունուած դատաստանի ենթարկելու զմեզ և հասանութիւն տուաւ այն սպօրէն վճիռներուն , որով կ'ուզէին առանց մեր համաձայնութեան հարկ գնել մեր վրայ . զրկել զմեզ երգուեալ դատաստանի օգուտներէն , տարադրել զմեզ յայնկոյ ծովու՝ սուտ սուտ յանցանաց համար դատելու մարով : վերջինս մեր հարեան նահանգի մէջ աղատ սահմանադրութիւնը՝ անձնիշխան բռնութիւն հաստատելով այն սեղ . բնաջինջ առնել մեր ազատութեան թղթերը , ապաւել մեր օրէնքները , հիմն 'ի վեր փոփոխել մեր վարչութեան ատեանները , բաւնալ մեր յատուկ օրէնադրական ժողովները և անձամբ անձին օրէնքներ հնարել մեր գլխուն :

« Զմեզ օրինաց պաշտպանութենէն զրկելով և մեր երկրի գէմ՝ պատերազմ քարոզելով՝ նա հրաժարուեցաւ այս սեղ կառավարելու իշխանութենէն :

« Կա կողմակցեց մեր ծովերը , ամայացուց մեր եղբրը , յաճին դարձուց մեր քաղաքները , աւերեց մեր քաղաքացիներու կեանքը :

« Արձական դեղեր հաւաքեց նա՝ մահու , թշուառութեան և բռնութեան գործն յաւարտ հանելու :

« Արձակ ծովի վրայ մեր քաղաքացիներն բռնելով՝ ստիպեց զնոսա գէնք վերջընել հայրենեաց գէմ , դահլիճ դաւնալ եղբարց և կամ մեռնիլ իսկ նոցա ձեռքէն :

« Կերբին ազնուի յարուց մեր մէջ և մեր վրայ արձակեց վայրագ Հնդիկները , որոց պատերազմական սովորութիւնն է կործանել ամեն բան՝ առանց խարութեան հասակի , սեռի և կարգի :

« Այս բռնադրօսութեանց ամեն մի քայլին ամենախոնարհ աղերսանօք օգնութիւն խնդրեցինք . բայց մեր յոյժակի պաղատանաց գէմ՝ յուրով անդամ անիրաւութեամբ պատասխանեցին մեզ :

« Իշխան մի , որոց բնութիւնն ամեն մի գործով իւր բռնակալ լինելն կ'արտայայտէ , արժանի չէ իշխելու ազատ ազգի մը վրայ :

« Երբ բրիտանացի եղբայրներն ևս անթախանձ չժողովցինք . սասկայն նոցա ականջն ևս փակ էր իրաւանց և արեան ձայնի համար :

« Այս պատճառով մեք կ'պարտինք 'ի հերձու մտանող հարկին մէջ տեսնել զմեզ և կ'ստիպուինք , որպէս զայլ մարդիկ — խաղաղութեան մէջ ընկեր , իսկ պատերազմի մէջ թշնամի ճանաչել զնոսա :

« Ասան որոյ մեք , յԸնդհանուր ժողով գումարեալ պատգամաւորքս Ամերիկայի Միացեալ Նահանգաց , տիեզերաց դերացոյն Գատաւորն մեր խորհրդներու մարտութեանը վկայ կ'օրէնելով՝ որ զաղթականութեանց բարի ժողովրդեան անուամբ և իբաւամբ հանդիսաւոր կերպիւ կ'ծանուցանենք և կ'յայտենք , որ այս միացեալ զաղթականութիւնքն ազատ և անկախ պետութիւնք են և պիտի լինին իբաւամբ . որ սոքա Բրիտանիոյ գահուն հպատակելու պարտքէն զերծ են , և թէ վերջապէս սոցա քաղաքական յօդաւորութիւնը Մե՛ծին Բրիտանիոյ տէրութեան հետ ամենին լուծեալ է և պիտի լինի : Եւ 'ի հաստատութիւն այս յայտարարութեան՝ անյողողոյ յուսով 'ի նպատ Աստուածային նախախնամութեան՝ մեր փոխարձ երաշխաւորութեամբ 'ի գրու կը գնենք միմեանց մեր կեանքը , մեր զոյքը և մեր սրբազան պատիւը :»

Այս ազատութեան յայտարարութիւնն և ժողովոյ ամբողջ վարմունքը հիացումն աղբեցին Եւրոպայի լուսաւորեալ մտքերուն , մինչև անգամ և այնպիսի արանց , որք իշխանութեան գահու վրայ բաղման էին և անաչառ սրտով գործի ընթացք կ'դիտէին : Յիշենք , օրինակի համար , զմե՛ծն Յրեգրիկոս , որ իւր « Գիտողութիւնք 'ի վերայ վիճակի քաղաքական մարմնոց Եւրոպայի » անուն գրքի մէջ արդէն պետութեան նպատակի վրայօք բազում մտքեր արտայայտած էր , որք այժմ Ամերիկայի անտառներու մէջ յերեւան ելնող մաքերուն յար և նման էին լիովին :

ԺԲ

ՆԱՆՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Աստղագրօշք , որոյ վրայ 'ի նշան տասն և երեք Ամերիկայի նա-

Հանգաց տանն և երեք աստղեր կ'փայլէին, արդէն պարզուած էր : այժմ պէտք էր կամ յաղթութիւն գրաւել այս գրօշին և կամ պատուով մեռնիլ նորա տակ :

Գժուար բաներ ձեռք բերուած էին, բայց դեռ աւելի դժուարներն կային անելիք : Անկլիան հաւաքեց բոլոր իւր ոյժն երևակայեալ ապստամբներն սպառսպուռ ջարդելու համար և ուղարկեց Հօու զօրապետին նոր նոր զօրքեր, նաև գերմանացի զինուորներ, որք արծաթի գնով գնուած էին ամբիկացոյ ող դէմ գահճի պաշտօն վարելու :

Հայրենեաց զաւակներն ծախելու վատթար սովորութիւնը հանդէպ կ'ենէն մեղ գերմանական փոքրիշխանութեան բողոքօղբու միջոցին : Այսպիսի առևտրի մասնակից էին Հէսսէնի, Պայրօյթ-Անսխաքի, Պրատենշվայդի և Անհալթ Զերբսթի իշխանները . սակայն ամենէն շատ մարդ վաճառողն էր Հէսսէնիւն, որոյ համար և ծախուած գերմանացիք Ամբրիկայի մէջ ըստ մեծի մասին Հէսսէն կ'իջուռէին : Ով որ նորա դքսութեան մէջ վտանգէն ազատելու համար փախչէր և գ.բսի արբանեակներու ձեռքն ընկնէր՝ իսկոյն շղթաներով կ'կապէին զայնպիսին : Եթէ ծնողք տրանջէին՝ նոքա ևս կաշկանդուելով կ'բանտարկուէին : Անկլիացի գործակալները Գասսելի հրապարակի վրայ Հէսսէնի բնակիչները կ'գնէին, և ամեն միտի գինն էր հարիւր թալէր՝ այսինքն չորս հարիւր ֆրանք : Մեծն Գրիգորիոս դառնութեամբ կ'նշաւակէր այս բանը . «Թող չմոռնան դէթ անասնի մարնն ևս պահանջել հայրենեաց հայրերն» կ'ըսէր նա : «Ոչ ոք, կ'որէր մեծահամբաւն Զօյմէ,* որ նոյնպէս վաճառուած էր, կարող էր ապահով մնալ հոգեծախի (գ.բսի) ձեռքէն . հրապոյր, նենդութիւն, խաբէութիւն — ամեն բան ձեռքէն կ'զար, ամեն բանի ընդունակ էր : Ոչ թէ միայն բնիկները, այլև օտարք ձերբակալ կ'լինէին նորա հրամանով, կ'բանտարկուէին և 'ի վաճառ կ'մղուէին :» Երբ ստակի գնով մասնեալ հպատակները նաև նստելու կ'երթային՝ Պայրօյթ-Անսխաքի դուքսը լցուած հրացանով Մայն դետի եղբրը կ'կանգնէր և կ'սպառնար յերկիր տապալել այն մարդիկը, որք փորձ փորձէին փախչելու : Այս կերպով ընդ ամենը 29,000 գերմանացիք վաճառուեցան անկլիացիներուն «'ի սնունդ թնդանօթաց :» — «Մտածող ճամբորդը, կ'ըսէ անկլիացի լօրտ մի,

* Հայրենեաց ջերմ սիրով եւ ոյսերիմ՝ ատելութեամբ առ բռնակալութիւնն ներշնչուած ոտանաւորներու եւ ծամբորդութիւններու անուանի հեղինակ մի, որոյ կեանքի արկածները չափազանց հետաքրքրելի են (1763—1810) : Ծ. Բարդ.

չկրնար առանց յողոց հանելու. դիտել Ալիշէլմնհեօէի փառահեղ պարտէզները Գասսելի քով, որք բնակիչներու զաւակաց արեան գնով անկրուած են :»

Աւերն ասինք, թէ Հօու զօրապետն ստիպուած էր իւր գնդերով հանդերձ նաև նստիլ Պոսթօնի նաւահանգստի մէջ : Նորա զխառնորութիւնն էր Ամբրիկայի մէկ ուրիշ տեղի մի ոտք գնել . Ուաշինգթոն իսկոյն գուշակեց, որ նա Նիւ-Եօրքն ունէր 'ի նկատի, ուստի իւր զօրքերու երկրորդ հրամանատարն այն տեղ առաքելով՝ ինքն ևս արագ չողաւ ետևէն :

Հօուի նաւատորմին այդ միջոցին միւս զինուորական ճաւերու հետ միացած լինելով՝ թշնամու գնդերու թիւն այժմ ամբրիկացիներէն շատ գերազանց էր : Հօու 'ի ցամաք ելաւ Լօնկ-Խալանտի վրայ, մերձ առ Նիւ-Եօրք . նա կ'ուզէր նուաճել քաղաքն և անտի դուրս արշաւելով խափանել հարաւային և հիւսիսային ամբրիկացոց միաւորութիւնը : Աւաթիկ այս տեղ բանը ճակատամարտի հասաւ, յորում մանուանդ Հէսսէնցիք զարմանալի իմն քաջութիւն ցոյց տուին — յանգուզն խիզախ մամբ ամբրիկացոց վրայ նետուելով՝ ասես թէ իւրեանց հայրենիքէն յափշտակուելուն համար մեռնիլ կ'տենչային : Ամբրիկացիք պարտուեցան և յաջորդ օրն մինչև անգամ կղզու վրայ պաշարուելու և գերի բռնուելու վտանդի մէջ էին : Այն ժամանակ Ուաշինգթոն որոշեց գիշերուայ մթին նաւ նստեցնել իւր փոքրիկ բանակը . սակայն մինչդեռ նա երկրչեան պահուն իւր միտքն գործադրելու վրայ էր և զթշնամին խաբելու համար բանակի կրակները վառ պահելու հրաման կ'տար՝ ոչ ոք չէր մտածեր որ նոյն ժամուն դաւաճանութիւնն որոզայթ կ'լարէր 'ի կորուստ նորա զօրքին : Անկլիացոց համակրող կին մի իւր խափշիկ սպասաւորի ձեռքով Ուաշինգթոնի շարժումը կ'ուզէր իմացնել նոցա . սակայն այս տղասաւորը գիշերապահ Հէսսիցոց ձեռքն ընկաւ : Ինչ օգուտ որ նա կ'երգուէր թէ շատ կարևոր լուր ունի հաղորդելու Հօու զօրապետին — Հէսսէնցիք ոչ մի բառ չէին հասկընար խելադարի պէս կոտորուող սևի շրթուներէն, և կարծելով թէ նա լրտես մի էր՝ լաւ համարեցին կապել փակիլ գնա, և միայն առաւօտեան տարին զօրավարի մօտ : Սակայն այդ ժամանակ նորա բերած լուրը, որ գիշերուայ դէմ ոսկիի գին ունենալու էր, զօրավարի համար այլ ևս բնաւ գին չուներ, զի Ուաշինգթոնի զօրքն նաև մտած էր և արդէն թակարդեալ կարծուած թշնամու հետքն անգամ կորած էր :

Արդի հանդամանաց նայելով քան զայս լաւ ոչինչ չէր կրնար անել

Ռաշինդ թն . և շատ խոհեմութեամբ յաւարտ հանեց այս գործը և մինչև ՚ի յետին ժամը զինուորներու նաւ մտնելուն վրայ հսկելով՝ գրեթէ երկու օր և երկու զիշեր վայր չիջաւ նժողկէն :

Այսպէս ուրեմն ամբիկացոց զօրութեան ամենընտիր մասը փրկուեցաւ . սակայն որպէս նուազ էին սոքա թշնամու առջև : Շատ հայրենասէր անձինք վշտահար սրտով կ'նայէին ներկայի վրայ , և Ռաշինդ թն ինքնին այնպէս տրտում օրեր ու ժամեր կ'ունենար մերթ ընդ մերթ , որ բարի գործի ծանրութեան տակ ճնշուելու երկիր զ կը տիրէր հողոյն : Սակայն նորա հաստատուն կամքն էր ցլերջին ժամ հաւատարիմ մնալ գործին , թէև այս հաւատարմութեան համար կեանքն անգամ զոհելու պէտք լինէր :

Ջինքեանք հայրենեաց սպասաւորութեանը նուիրեալ անձինք առաւել ևս հաւատարիմ կ'լինին նորան յատկապէս նեղութեան ժամին : Լօնկ-Իսլանտի չարբասայիկ կուռէն ետքը ամբիկացոց համար դժուար օրեր ծագեցան , ինչպէս որ պարզ կ'երևի Ռաշինդ թնի նամակներէն : «Մեր վիճակն իրաւ որ բաւականին ողբալի է , կ'դրէր նա ընդհանուր ժողովոյ նախապահին . Լօնկ-Իսլանտի պատահարն ամբողջգործը վճատեցուց , բանակիս ամենաբազմ զինուորքն անդամ՝ սլարտութեան փոխարէնը հատուցանելու համար նորէն սիրտ առնելու տեղ՝ յուսահատ են և կ'ուզեն տուն վերադառնալ . արդէն շատերն գնացին , կէս կէս և լէք լէք գնդեր թողին զմեզ , մինչև անգամ ամբողջ դասակներ մնինցան : Կնչսլիտի լինի սորա վերջը մանաւանդ այս անկարգ դրութեան մէջ այնպիսի քաջամարդիկ և սքանչելապէս զինեալ ոսոխի դէմ յանդիման : Վասն որոյ ես դարձեալ կ'վերադառնամ արդէն յառաջագոյն քանիցս անգամ՝ յայտնած մտքիս , թէ մեր աղատութիւնն վտանգի մէջ պիտի մնայ՝ քանի որ սուղ ժամանակով ընտրուած գուդաղներն լինին նորա պահապանքը . մեզ այնպիսի զօրք հարկաւոր է , որ մինչև յաւարտ պատերազմին զէնքի տակ մնար . միայն այս տեսակ զօրքի մէջ կարելի է ներածել կարգ , օրէնք և հնազանդութիւն» : Երկու օրէն ետև կ'յաւելուր . «Մեր գրութիւնն աւելի ևս վատցաւ . ամբողջ ջոկատներ զատուեցան բուն բանակէն , և ես չեմ տարակուսիր , որ մնացեալքն ևս հետզհետէ նուազելու են» : Սակայն և այնպէս Ռաշինդ թն դեռ այնքան հոգւոյ հանդատութիւն պահպանած էր , որ մինչև անգամ ՚ի նպատակ վճատելոց կարելիցութեան խօսքեր կ'դանէր — նա կ'դրէր . «Ջէնքի գործածութեան անտոյր և զինուորակաւ մարդմունքէ՛ զուրկ մարդիկ , որք դեռ նոր դուրս խլուած

են ընտանեկան հանգիստ շրջանէն , կիրթ և վարժ զինուորներու հանգիտելով՝ զիւրաւ կ'վճատին և զի բանակի մէջ ընկնելով իւրեանց սովորականէն միանդամայն տարբեր կեանք կ'վարեն , ուստի և շատ բնական է որ առն վերագառնալու անզուսպ փափաք կ'զգան» : Այնու ամենայնիւ քանի մի օր ետև իւր ամենալու դատակներն Հէստէնցլիներէն ՚ի փախուստ վարեալ տեսնելիս՝ Ռաշինդ թն վերջապէս կորուց երկայնամիտ համբերութիւնը , սլացաւ փախստականներու վրայ , հանեց հրացաններն և իւր իսկ զօրականներու զլիսուն կրակ պարպելով գոչեց զայրազին . «Ուրեմն սոցն հետ պաշտպանեմ ես Ամբիկան» : Սպարապետը յուսահատած էր . ասեն թէ մահ կ'իսնդրէր անշարժ մնալով իւր տեղի վրայ , մինչդեռ զինուորներն թողած էին զնա և թշնամին միայն յիսուն քայլ հեռու էր : Նա անշուշտ գերուելու էր , եթէ համհարզը նորա նժոյգի սանձին բուռն չարկանէր ու գրեթէ ստիպմամբ չփրկէր զնա :

Ռաշինդ թնի զօրքը շարունակեց յետ նահանջել . ընդհանուր ժողովը կրկին տեղեկութիւն ստացաւ իրերու վիճակին վրայ և ասպ թէ հրամայեց նոր զօրաժողով անելու : Բայց այս հրամանի գործադրութիւնն ժամանակ կ'ուղէր . իսկոյն առ ձեռն պատրաստ մարդիկ չկային և թէ լինէին ևս՝ դարձեալ դէթ փոքր ինչ մարդիկ պէտք էր զնոսա . այն ինչ վերջին յաղթում թնէն վերատին ողևորած թշնամին ըստ կարելոյն շուտով մահուան հարուած տալու կ'մտածէր : Ուրիշ հանդամանք մի ևս ամբիկացոց բանակի նեղութիւնքն կ'յաւելուր : Միացեալ Նահանգներու մէջ անկիւացոց կառավարութիւնը տակաւին շատ զաղտնի կուսակիցներ ունէր . այժմ սոքա զլուիններն վերցընելով պատահ չառիթ դտածներուն պէս՝ դուռ կ'գործէին օդնել անկիւական զօրքին , այն , կային նաև այնպիսի նահանգներ , որք մինչև անգամ օժանդակ վաշտեր կ'ստաքէին Հօու զօրապետին :

Կնչաներ սպարապետն այսպիսի պարագաներու մէջ , եթէ ոչնորէն Փարիսի գերն խաղալ և խորշելով ոսոխէն աւելի զիպող ժամանակի մը թողուլ գործի վախճանը : Սոյն տրտում կացութեան հետևանքն էր նոյնպէս , որ թէև ընդհանուր ժողովոյն կուսակից , բայց նոյն ժամանակի պատերազմական իրերուն ոչ հիմնովին տեղեակ անձինք ոմանք — նա մանաւանդ զի հրապարակային պարզ յայտարարութիւնն ևս կարող էր միայն վճատեցընել զհայրենասէրքն և խրախուսել զթշնամին — զժկամակ կ'լինէին Ռաշինդ թնի ընթացքէն . և այս ազնիւ հոգին կ'ստիպուէր տեսնել , որ փառասէր և գործին անհմուտ մարդիկ իւր եւ

աւէն միարանելով՝ հնար կ'նիւթէին դահաւիժելու գնա և ուրիշի մը տալու իւր իշխանութիւնն ու պատիւը : Ի սէր հայրենեաց այս վշտին ևս համբերեց նա և երբէք մտքէ չանցուց թշնամանք հատուցանելու ոտիններուն , այլ մանաւանդ շարունակեց աւելի մեծ փութով ևս քան զևս վաստակելու ազատութեան գործի վրայ : Զի բանակամիջի (quartier général) բոլոր գործերը գրեթէ առանց որ և է օգնութեան ինքնին կ'հոգար : Միայն ընդհանուր ժողովոյ հետ թղթակցելն արդէն բաւականին ժամանակ կ'պահանջէր , ինչ որ այն տեղ որոշուած լինէր՝ պէտք էր յետոյ յայտնել իւրաքանչիւր նահանգի վարչութեան , և գործելու այս տեսակ ընթացքը տասն և երեք աստաններէն ամեն մինի հետ նորէն հաղորդակցելու հարկ կ'յարուցանէր : Ուրեմն կարող ենք երևակայել , թէ իր աստիճանի բարդուելու էին այս պերպով սպարապետի պարապմունքը և թէ ինչ անձանձրոյթ գործունէութիւն , ինչ տոկոսութիւն , ինչ համբերութիւն պէտք էին նորան յառաջադիր նպատակէն չվրիպելու և թէ խուճապումէ և թէ որ և է զանցառութենէ հաւասար ազատ մնալու համար : Թէ իրապէս ընդարձակ էր նորա թղթակցութիւնը պատերազմի և խաղաղ ժամանակի ատեն՝ պարզ կ'երևի , երբ ասնք , որ յատուկ իւր ձեռքով գրուած նամակներն միայն պատասխաններով հանդերձ առատել քան երկու հարիւր ստուարահատոր գրքեր կ'կազմեն : Այս նամականին ամբիկացոց համար այն մեծ մարդէն մնացեալ թանկագին ժառանգութիւն կ'համարուի այսօր : « Ով որ կամենայ ուսումնասիրել , կ'ըսէ նորա սիրահարներէն մին , այս հայրենեաց Տօր իսկական մեծութիւնը , նորա վնասմ պարզութիւնն և ծանրութիւնը , նորա անյղլի նպատակներն և հակայական զօրութիւնը — թող քաղէ՝ նորա նամակներու և տեղեկագիրներու բուն աղբիւրէն : »

Այս էին միայն զբասեղանի զբաղմունք , բայց դեռ իրքան հոգսեր կային բայց յայտնանէ . անվերջէին նորա խորհրդածութիւնքը գործունէութեան բազմադիմի ճիւղերու մասնագէտ անձանց հետ — ամեն տեղ օգնութեան հասնելու պէտք կար : Երբեմն հրաշք կ'թուէր , որ միայնակ մարդ մի այլքան բան մի և նոյն ժամանակին՝ ի զլուխ հանելու կ'զօրէր , որ նա ոչ ապիրատութենէ կ'խուովէր և ոչ իւր տաժանելի վիճակէն կ'վհատէր : Նիւ-Եօրք թշնամու ձեռքն ընկաւ , նոյնպէս և Ուաշինգթոն անուն բերողը . սպարապետը կ'ստիպուէր աւելի ևս յետ քաշել իւր գնդերը , և ի զօրավարը , որ նորա հետ միանալ կ'ուզէր , գերի բռնուեցաւ :

ԺԳ

ՏԵԼԱՎԱՐԷՆ ԱՆՅՆԻԸ

ԹԲԷՆԹՆԻ ԵՒ ՓՐԻՆՔԸՆԹՆԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Իւրաքանչիւր ազգի պատմութեան մէջ կան այնպիսի ժամանակներ , երբ « շատերու սիրտը կ'բացուի » երբ մինչև անդ թաքուն պահուած մտքերն ու զգացմունքները յանկարծ արտաքս կ'ենեն : Այսպիսի խորհրդաւոր ժամանակի մէջ էր Ամբիկայի մանուկ պետութիւնը : Ասնք թէ ինչ կ'ըսէ այս մասին Թոմաս Բէն (Paine) , ամբիկացոց ազատութեանը գրչով նպատող հանձարներէն մին : « Արդի ժամանակս մարդկային սրտերը փորձելու ժամանակ մի է , կ'ըսէր նա . այս վճռահատական ժամուս ամառնային զինուորը , շարեւթ հայրենասէրը կ'ուրանայ իւր պարտքն առ հայրենիս : Արդարև ամեն մի տղայ մարդոյ և ամեն մի կնոջ շնորհակալութեան և սիրոյն արժանի է նա , որ այժմ հաստատ կ'մնայ : Զարմանալի բան է , թէ իրպէս արագ կ'ծագի սարսափը , իրպէս շուտ կ'ծառայի ամբողջ երկրի մէջ : Իւրաքանչիւր ազգ մերթ ընդ մերթ կ'սլաշարուի այսպիսի տաղնապիչ սարսափով . բայց սա ևս իւր բարի արդիւնքն ունի : Սարսափը կարճատե է — շուտ կ'անցնի և այնուհետև սիրտերն աւելի կ'սղոյն , կ'զօրանան : Այս տեսակ արհաւիրքը կեղծաւորութեան և աղնութեան փորձաքար են : Եւ իրաւ՝ չար ժամանակը և սովաւ արդէն բաւականին օգուտ բերաւ ազգին , որ նորա շնորհիւ երկդիմի , խիթալի , տարակուսելի մարդիկը միանգամայն զատուեցան , և առաւել յայտնի եղան ճշմարտիւ հայրենասէր անձինքը :

Ի նշան կրկին ամբացեալ հաւատարմութեան դէպի արժանիքն Ուաշինգթոնի Ընդհանուր ժողովը վեցամսեայ ժամանակով ինքնակախ հրամանապետի (dictateur) իշխանութիւն տուաւ նորան : Սակայն այս հաւատարմութեան զրի լուրն դեռ չընդունած՝ Ուաշինգթոն արդէն որոշած էր ձեռնարկել յանդուգն գործի մը , որոյ յաջողութեամբ ոմանց արիւթիւնը բորբոքելու և այլոց փոքրոզութեանը վերջ տալու կ'յուսար :

Գեկտեմբեր ամսի սառնամանիքն արդէն սկսուեր էին . օդն այնպէս դառնաշունչ էր , որ անկլիաղիք այլ ևս աշխոյժ չէին զդար իսկոյն զԹնամին հալածելով օգուտ քաղելու իւրեանց նոր յաղթանակէն : Հօու արդէն տեղաւորեր էր իւր դնդերն ձմերոցի մէջ և կ'ուզէր դարնան թողուլ շիջանող ընդդիմութեան վերջին խորտակումը : Կնչպէս որ յարձակման ժամանակ միշտ կ'պատահէր , նոյնպէս և այժմ ձմերոցի մէջ դաստորուելու ժամանակ՝ Հէստէնցիք ստացան յառաջապահի տեղը : Աւաշինդ թն թնամու գրից վրայ տեղեկութիւնք հաւաքելով գիտէր , որ Հէստէնցիք Տեւալարի միւս կողմը նստած էին , և յատկապէս գետեզրէն չորս կամ հինգ մղոն հեռուորութեամբ — Թրէնթնի մէջ և սորա շուրջը կ'գտնուէին : Աւաշինդ թնի ամբողջ բանակը 7,000 մարդ ունէր միայն . նա բաժնեց զայն երեք դասի , որք մի և նոյն ժամանակին երեք զանազան տեղերէ Տեւալարէն անցնելով՝ Թնամու վրայ յարձակուելու էին : Այս գործի համար Ծննդեան գիշերն ընտրուած էր : Գիշերուայ մութն արդէն իջած էր , երբ Աւաշինդ թն անմիջապէս իւր առաջնորդութեան տակ 2,400 մարդ վարելով հասաւ Տեւալարին : Հիւսիսային բուն հողմը բուք և տարաի կ'տեղար ամբիկացուց երեսին , գետի վրայ սաստիկ պաղ կ'ընթանար . այս հանդամանքներու մէջ ջրէն անցնիլը չէ թէ միայն դժուարին գործ էր , այլև չափազանց վտանգաւոր : Աւաշինդ թն որոշած էր արդէն կէս գիշերին գետի միւս ափն գտնուիլ . բայց անհնարին եղաւ սառի շարժման և ուժիկն փոթորիկի պատճառով . ուստի գիշերուայ երրորդ պահուն միայն կրցաւ իւր թևի հետ ոտք դնել միւս եզերքի վրայ , ուր նաև 20 հատ թնդանոթ պէտք էր անցնիլ : Չորրորդ ժամին արդէն ամեն բան կարգի բերուելով՝ հրաման ելաւ խաղալ դէպի Թրէնթն : Հողմակոծ փոթորիկն առաջնուայ կատաղութեամբ կ'շահէր . բայց ուր կ'դիմէր Աւաշինդ թնի խմբակը — Խրմէն տանապատիկ զօրեղ թնամու դէմ , որ , եթէ նորա մօտենալու լուրն լսած լինէր , արդէն հարկաւ ճակատ կազմած պիտի լինէր զամբիկացիս ընդունելու համար : Գարձեալ և յայտնի չէր հաւաստեօք , թէ միւս երկու թևերն ևս արդէն կրցնէր են անցնիլ գետէն թէ ոչ — յետոյ յայտնի եղաւ , որ նոքա ժամերով ուշ անցեր էին : Աթերորդ ժամու դէմ առաջին թևի առաջապահքը հրացաններով ողջ ջուրուեցան և Հէստէնցուց ջուրաւ , որ Թրէնթն էր , աղմկեցաւ : Սոքա գետ գումարուելու վրայ էին , երբ Աւաշինդ թն քաղաքի առջև հասնելով բուն արկաւ յարձակման :

Հէստէնցիք ի սկզբանէ մեծ քաջութեամբ կ'ողորէին , բայց իւրեանց զօրավարի սպանուելէն ետև զէնքերն վար դրին և անձնատուր եղան , որով իբրև 1,000 զօրականք և 23 հարկաւոր ամբիկացուց ձեռքն գերի ընկան : Քանի մը հարիւր մարդիկ գասալիք լինելով խոյս տուին վտանգէն , զոր բնաւ չսկիտի կրնային անել , եթէ միւս երկու թևերն ևս քիչ մի վաղ անցնէին յայն կոյս և Աւաշինդ թնի պատուէրին յարմար պահակ գրած լինէին կամուրջներու վրայ :

Չգուշու թիւնը կ'սպահանջէր շատանալ առ այժմ ձեռք բերուած յաջողութեամբ : Թնամու գլխաւոր բանակը տակաւին մերձ էր և պէտք էր սպասել , որ նա իսկոյն պատրաստուելու էր պարտութեան վրէժն հանելու : Աւաշինդ թն յետ չողաւ յայս կոյս Տեւալարի :

Այս յանդուգն գործը — Տեւալարի անցքն ու Թրէնթնի յաղթանակը — ասես թէ հրաշքով իմն աշխոյժ տուաւ հաղթաներու : Աւր որ տարուէին գերեալ Հէստէնցիք՝ ժողովորդը խուռն բազմութեամբ նոցա վրայ նայելու կ'վազէր : Պատերազմներու մէջ մինչև այժմ նորա ամբիկացուց չարադոյն թնամիքը հանդիսացած էին և ուզմական կենցաղափառութեամբ վայրենացեալ՝ երբեմն բռնութիւնք ևս գործած էին քաղաքներու և գիւղերու մէջ , ուստի իւրեանց և կամ ընկերներու ոճրագործութեան փոխարէն այժմ զայրազին ժողովորդի վրէժխնդրութեան զոհ գառնալու վտանգին ենթակայ էին : Աւաշինդ թն աղաքաբու թիւն մի հրատարակից , որով կ'յայտնէր , թէ այս մարդիկն ազատ կամօք չէին եկած յԱմբիկա՝ աղջային իրաւանց դէմ մարտնչելու , այլ թէ եղիկի զոհեր էին անաղորոյն բռնակալի մը , որ դրաստի տեղ վաճառած էր դնոսս , և թէ ուրեմն առաւել մարդկային կարեկցութեան արժանի էին , քան թէ վրիժու : Եւ այս խօսքերն աղղկեցին :

Այս միջոցին Աւաշինդ թն լսելով , որ անկլիաղիք փոխանակ զինքը հալածելու՝ յետ քաջուած էին , որոշեց երկրորդ հարուած մի ևս սալ նոցա , և առաջի անցքէն չորս օր զինի նորէն անցաւ Տեւալարէն : Հօու զօրասկտը 800 մարդ առաքեց նորա դէմ Քօրնվալիս լօրաի վարչութեամբ : Աւաշինդ թն ամուր ճակատ կաղմելով քանիցս անգամ յետ մղեց անկլիաղուց յարձակումը , բայց լօրաւ ոչ թէ կ'վհատէր , այլև ուրախ էր , զի և թուով արդէն շատ գերազանց էր ոսոխէն — այս մէկ . երկրորդ՝ դեռ ուրիշ զօրաբաժին մի ևս ստանալու էր շուտով : Վասն որոյ և չէր տարակուսեր բնաւ , որ — ինչպէս կ'ըսէր — արդէն նոյն իսկ թակարթի մէջ բռնելու էր զաղուէսը : Բայց թէ արդեօք Աւաշինդ թն յօժար էր այնքան ժամանակ կանդնած մնալ իւր կա-

յանի վրայ , մինչև որ նորին վեմամասայլու թիւնը՝ լօրսն Քօրնվալիւ նորոգ ու ժերով բարեհաճէր յարձակուիլ վրան — այս յայտնի չէր լօրսին : Բանակի խարոյկներն արդարեւ լոյսէ լոյս կ'վառուէին նոյն իսկ տեղի վրայ , ուր օր մի առաջ կանգնած էր թշնամին , բայց երբ 'ի ծագիլ առտօտուն լօրոր դիտակն 'ի վեր ամբառնալով յայնկոյս նա յեցաւ՝ ապշու թեամբ և դառնութեամբ տեսաւ , որ « թակարթը » դատարկ էր : Ուաշինդթն քանի մի մղոն շրջան տալով նորա ետեւ կանգնած էր Փրինքընթնի մօտ : Այն տեղ նա նախադբաւ յառաջամբ հորդան տուաւ լօրտին 'ի նպաստ արշաւող օժանդակի զօրքի վրայ , որք երբ անկլիական գնդեր էին , և ուժգին ուղմ սկսաւ : Անկլիացիք մտ լեզնարար կ'մարսնչէին — և յաղթութիւնը մերթ այս , մերթ այն կողմը կ'տատանէր երկար ատեն : Ամերիկացոց վտանգը կ'աւելնար . առաւօտեան դատարկ գտնուած բանակն ու թնդանութիւնը որտան արդէն վաղուց լօրտի աչքը բացած պիտի լինէին թշնամու ձեռնարկութեան վրայ , և միթէ Քօրնվալիս , որ նաև այրուձի ունէր իւր մօտ , կարող չէր ամերիկացոց վրայ ընկնիլ քամակէն , մինչդեռ նոքա ոտոխի հետ գուպարելու վրայ էին : Ուրեմն պէտք էր յաղթել և շուտ յաղթել : Ամերիկացիք Թրենթնի մօտ չորս օր առաջ զբաւեալ յաղթանակով ողևորած՝ անասելի կորովութեամբ կ'շահատակէին , սպարապետի օրինակն ևս կ'վառէր զնոսա , զի ուր որ աւելի սաստիկ էր ուղմը — այն տեղ կ'տեսնէին զնա : Սքանչելի էր այն ժամանակ պատերազմական եռանդով բորբոքած նորա յաղթանդամ պատկերը : Սպարապետը յաճախ կ'անհետանար իսպառ վառօղի թուխ ամպերու մէջ իւր կեանքի համար երկիւղ քաշող զինուորներու աչքէն , որք կ'սարսափէին մտածելով , թէ ինչ լինելու էր նոցա գործը , եթէ մահը յափշտակէր զնա իւրեանց միջէն : Արեւի չէր , որ այս դիւցազնական երկունքն արժանաւոր յաջողութեամբ չարակուէին : Թշնամին դարձաւ ընդ կրունկն դաշտի վրայ 500 սպանեալ և վիրաւորեալ մարդ և յաղթողի ձեռքը 300 զերի թողնելով : Ուաշինդթնի զօրականքը կը ցնծային : Պատերազմակիցներէն մին այս գէպքէն քիչ մի յետոյ կը գրէր . « Արդէս յարուցեալք 'ի մեռելոց կ'ղցանք մեք զմեզ . գունդ գունդ դուգազներ կ'գան առ մեզ — հին զինուորները նորէն բանակ կ'դիմեն : » Իսկ զինակից մի հետեւալն կ'գրէր Ուաշինդթնի վրայ . « Զօրքն ուժիկն սիրով կ'սիրէ զիւր սպարապետը , սակայն և այնպէս ասելիք մ'ունի նորա գէմ , այսինքն թէ նա շատ սակաւ հող կ'տանի իւր յատուկ անձի վրայ — և այս ամեն մի ճակատամարտի մէջ : Իւր

անձնական քաջութիւնն և իւր օրինակով զօրականի սիրան վառելու փափաքն ամեն բան մոռցրնել կ'տան իւրեան : » Ուաշինդթն չողաւ ձմեռելու Մօրրիսթօունի լեռնոտ շրջակայքը և այն տեղ անմատչելի կայան հաստատելով այն աստիճանի նեղել սկսաւ զթշնամին , որ սա այլ ևս չլրցաւ դիմենալ նորա յարատե արշաւանքներուն և վերջապէս իսպառ մարքեց մերձաւոր նահանգները :

Իւրոպայի մէջ ևս Ամերիկայի դատը Տելավարի անցքէն առաջ միանդամայն կորսուած կ'համարուէր . իսկ այժմ յայնկոյս և յայնկոյս ուղկիանու նորէն սկսեր էին հաւատալ , որ Ամերիկան չպիտի խոնարհի Անկլիոյ առջև : Ֆրանսիոյ մէջ եռանդոտ համաձայնութիւն ծագած էր ամերիկացոց ազգի և նորա դիւցազնական սպարապետի համար . Անկլիոյ մէջ անդամ Ամերիկայի Փարիոս կ'անուանէին զնա մեծարանօք :

ԺԴ

ՂԱՅՍԵՒԹ — ԲՕՍԹԻՒՇԻՐՕ — ՇԹՕՅՊԸՆ

Ամերիկայի ազատութեան համար բորբոքած հուրն ոչ մի տեղ այնպիսի հզօր ու պայծառ լուսով չէր վառուած , որպէս Ֆրանսիոյ մէջ : Ղլանն ազատութեան մարտնչող ազգի մը նահատակութիւնն առաւել համակրութիւն գտաւ Ֆրանսացոց կողմէն մանաւանդ և այս պատճառով , օր նոքա ևս երկար ժամանակ դառն լիկանք կրած էին Պուպօններու վատթար վարչութեան ներքեւ և զի իրենց մէջ ևս լիքն էր այն բարկութիւնը , որ քիչ ժամանակէն յետոյ որոտընդոտ շտապամբ արտաքս ժայթքելու էր :

Ոմանք Ամերիկայի անկախութեան պատերազմն և Ֆրանսիոյ յեղաշարժութիւնը հաւասար գծի վրայ կ'գտնեն . սակայն մեծ անջրպետ կայ այս երկու պատմական դէպքերու մէջ : Աստ և անդ իրողութեան պատճառն մի էր — իշխանաց բռնակալութիւնը , բայց տարբեր էին ընթացքը , նպատակն ու հետեւանքը , ինչպէս որ տարբեր են առ հասարակ գերմանական բնութիւնն ու ուսմանականը : Ի միտ բերնդ դարձեալ մի անգամ , որ ամերիկացիք երկար ժամանակ ջան դրին վերստին օրինաւորութեան հիմանց վրայ ամրապնդելու բռնակալութեան ձեռքով յիմարաբար քակտեալ կապերը և թէ այն ատեն միայն նոր կարգ

մի հաստատելու ձեռն արկին , երբ արդէն ճարերն հատած էր և օրէնքներու դուռն միանգամայն փակուած : Ազատութեան շարքի վրայ յառաջ գիմելով՝ նորա երբէք այն աստիճանի չլուրացան , որ կրօնի շնորհն ուրանային . ընդ հակառակին կրօնն էր որ օծումն կ'տար նոցա գործին , կրօնն էր նոցա պետական վերակազմութեան առաջնորդն ու չափը : Արդէս այլ էին Ֆրանսացիք , որք ստրկութեան շղթաներն քայքայելիս՝ կրօնի սեղանն ևս տապալեցին : Ամբիկան գրաւեց զազատութիւնը տաժանելի աշխատութեան ճամբով և առ Աստուած ուղղեալ մտօք , մինչեւ Ֆրանսան մոլեղնաբար ինքզինքն յօշոտելով՝ բռնակալութեան ճանկերէն չազատեցաւ երբէք , թէև կ'շանայ խաբել զինքն և զայլս իւր վիճակին մեծ մեծ մակդիրներ ընծայելով : Բնչ է այս հակառակ երևոյթներու պատճառը : — Ամբիկացիք կ'սպտկանին զերմանական ցեղի մեծ ընտանիքին , որ նշանաւոր է խորին կրօնական դիպրամբ . այս ցեղի համար պետական օրէնքը նշոյլ են յախտեանական օրինաց , որոք արտայայտութիւնը կրօնի մէջ կ'ամփոփուի : Գերմանական ազգերն կ'շանան միաւորել պետութեան օրէնքները կրօնի պահանջմանց հետ , որպէս զի սորա կենարար լոյսը պետական կեանքի վրայ ևս ազդէ շարունակ : Այսպէս ուրեմն զերկրայինը ձեռք բերելու համար նոքա սուրբ ալքիւրի կ'գիմեն : Բայց այսպէս չեն Ռօմանք . սոքա խորին կրօնական եռանդ չունին , և այս ամենէն պարզ Ֆրանսական ազգի վրայ կ'նշմարտի : Ֆրանսացիք շատ քաղաքական նեղութիւնք և տառապանք կրեցին , սակայն և այնպէս չկրցան բնաւ օրինական վիճակի մը հասնելու և թերևս ընդ երկար չպիտի հասնին՝ ցոյց տալով աշխարհի , որ ազգ մի — սրբան և շնորհալի լինէր մի քանի ասպարիզներու վրայ , այնու ամենայնիւ անզօր է բարեկարգ վիճակի անբոյթ նաւահանգիստն ժամանելու , մինչև որ ներքին խորատուգամը հանապաղ գուն չգործէ մարբելու և սրբելու իւր բարոյական կեանքը :

Այս վերջին դատողութիւնը ֆրանսական ազգի ամբողջութեանը կը վերաբերի . բայց ոչ ոք չուրանար , որ նոցա մէջ ևս պատուական մարդիկ եղած են . այս վերջին գասէն էին այն Ֆրանսացիքն , որք Ամբիկացի անտառներու մէջ մըլուած ազատութեան պատերազմի համար կ'ողակորուէին : Ազնուազոյններէն մէկն էր , օրինակի համար իննետասնամեայ հարկւրապետն Վաֆայեթ — զեղեցիկ , հարուստ , երջանիկ ամուսնութեամբ բախտաւոր և Ֆրանսիոյ ամենաճոխ տոհմէ մը սերեալ քաջազն պատանին : Նորա առջև ամենաշքեղ ասպազայ մը կ'իյայլէր արքունեաց մէջ . բայց նա պալատի փարթամ կեանքն ատելով ,

ճնշեալ ազգէն առնուած հարկերու չարաչար վատնութեան վրայ զայրանալով և փարիզցոց թեթև ու խառնակ վարքէն ևս պծրալով՝ գլխաւորութեամբ կ'խորէր պալատէն և իւր շէնեղէն մինի մշնտտած՝ ամենավեհ երջանկութեան օրեր կ'վայելէր զեղանի , առարինի և քաջասուսն ամուսնոյ հետ : Յակայն ազատութեան սէրն հանդիստ չէր տար սրտին և նա կ'տեսնար զինակից լինիլ այն քաջերուն , որք կ'նահատակուէին Ամբիկա : Երբ շնչուած այն հզօր եռանդով , կ'ըսէ Պօթթա , զոր մեծ գէպքերն սովոր են ազդել ազնիւ սրտերու , Վաֆայեթ ամբիկացոց գործը՝ նոյն ժամանակի գրեթէ բոլոր մարդիկներուն և մանաւանդ Ֆրանսացիներու յատուկ ջերմութեամբ՝ իբրև իւր սեպհական գործը կ'գիտէր : Պատմական գէպքերուն մասնակցելու փափաքով գրգեալ՝ նա յայնեց Փարիզ գտնուող ամբիկացի զեսպաններուն նոցա հայրենիքն երթալու դիտաւորութիւնը : Ի սկզբան սոքա շատ հաւան էին այս բանին . բայց յետոյ երբ Աճնի-Իսլանտի ողորմ պատահարի լուրն առնելով զերթէ յուսահատած էին իրերու յաջողեքէն , այնքան ուղղամտ էին որ կամեցան շրջել զնա երթալու խորհրդէն , յառաջ բերելով թէ արդի վատ գրութեան մէջ ճամբորդութեան համար նաւ մի անդամ կազմելու միջոց չունէին : Անվահեր պատանին պատասխանած կ'լինի առ այս , թէ յատկապէս այժմ էր նոցա գործին օգնելու բուպէն , թէ քանի շատ վճատած լինին ազգերն՝ այնքան աւելի խրատաւոր էր նաւ մի շինելու , եթէ նոքա չէին մարթեր ճարելու զվին : Արքունի գուռն — թերևս չուզելով վերադառնալ զԱնկլիան և կամայս արշաւանքին չհասնելով արդիւնց մարքիղի չուն , և կ'ըսեն մինչև անդամ , որ կանխաւ նաւեր արձակեց Անթիլեան օվկիանոս վրայ , որպէս զի բունեն զնա : Այնու ամենայնիւ երկուսարդ կարիճն հրամշտ առաւ իւր նորափթիթ ամուսնոյ գրկէն և նաւատեց : Նա յաջողութեամբ հասաւ յԱմբիկա և անմիջապէս ընկերացաւ ընդհանուր ժողովոյ նախագահին : Ամբիկայի վարչութիւնը քիչ մի առաջ շիլ չաքով սկսած էր նայիլ Ֆրանսական պաշտօնաւորներու վրայ , զի սոքա անյարգ պահանջումներ կ'ընէին աստիճանի և թողակի մասին : Վաֆայեթ յայնեց թէ յօժար էր ծառայել իբրև սոսկ զօրական և անթուշակ : Նորա երևոյթն , նորա ամբողջ բարքն ու վարքը ժողովի սիրան գրաւեցին և նա զօրապետի պաշտօն ստացաւ : Ուաշինգթոնի զրկախառն սիրով ընդունեց զնա բանակում և այնուհետև այս երկու մարդոց մէջ ծաղած մտերիմ բարեկամութեան և սիրոյ կապերը տևեցին մինչև ի

մահ : Լաֆայէթ բազմիցս առիթ դտաւ ցոյց տալու իւր քաջութիւնը պատերազմի դաշտին վրայ :

Թադէուս Քօսթիւշքօ անուն հռչակաւոր և անխլ լեհացին ևս նուիրեց իւր սուրն Ամերիկայի ազատութեան պատերազմին : Նորա սրտի վեճմութիւնն մանկութեան հասակէն արդէն կիերէր : Վարսօվայի զինուորական վարժարանի մէջ բարեջան երկափրութեամբ բոլոր քնկերներէն զերազանց էր : Հարիւրապետի աստիճան ընդունելէն ետև ծանօթացաւ Լիթովայի Յովսէփ Սոնսովսքի անուն հարուստ և մեծատուն սպարապետի դատեր հետ և կարճ միջոցին անշէջ սիրով սիրեց զնա : Երկուքն ևս նորահաս, բոբբոջուն, շնորհալի և բարույն ու զեղեցկին սիրով վառեալ պատանիք՝ ասես թէ իրարու համար ստեղծուած էին : Սակայն այլ էին հօր կարծիքը . սա կ'ուզէր ճոխ և տոհմիկ փեսայ գտնել : Քօսթիւշքօ ծնկերու վրայ ընկած կ'աղաչէր սպարապետին որ օրհնէ իւր սէրը . բայց նա խորիտ բանիւք կ'սաստէր : Գուտսրն ու մայրն ևս նորա ոտքն ընկան , այլ 'ի զուր . հայրը կ'ըստպառնար վանք գնել իւր աղջիկը : Կաթողին սիրահարներն որոշեցին փախչիլ և փախան իսկ մութ դիշերով : այս բանը մասնեցին սպարապետին և սա իսկոյն սպառազէն ձիաւորք արձակեց փախտականներու ետևէն : Բանը հասաւ տաք մարտի . Քօսթիւշքօն կարելի էր խոցեալ գետին ընկաւ : Թալուկէն զարթնելով տեսաւ որ իւր արեան մէջ կ'ըտաւալէր և մի տղիտակ շաշմարեց գետնի վրայ , որ տաղնապալից ժամուն սիրուհւոյ իրանէն վայր ընկած էր . նա վերուց այս շաշն և այնուհետև բոլոր պատերազմներու մէջ իւր հետն կ'տանէր զայն իբրև մի սուրբ նշխար : Այս դժբախտ գէպքէն ետև Քօսթիւշքօն չուեց յԱմերիկա կամյայթելու և կամ մեռնելու ազատութեան մարտի մէջ : «Առանց որ և է նիւթական միջոցի , կ'ըսէ Մ. Բ. Ժիւլիէն , և առանց որ և է յանձնարարական նամակի նա շիտակ ներկայացաւ Ուաշինգթօն սպարապետին : — Ի՞նչ բանի եկած էք , հարցուց զնա սպարապետն համառօտ : — Եկած եմ մարտնչելու Ամերիկայի ազատութեան համար , պատասխանեց նոյնպէս հակիրճ անվեհեր պատանին : — Ի՞նչ բանի ձեռնհաս էք , հարցուց կրկին առաջինը , և Քօսթիւշքօն իւր ընդարդս պարզութեամբ ոչ այլ ինչ տուաւ պատասխանի , բայց թէ այս բառերս — Գրէք զիս փորձի : — Գրին , և Ուաշինգթօն ստուգեց որ արդարև քաջ ոմն էր անխլ լեհացին : Հազարապետի աստիճան ընդունելով նա շատ զօրավարներու մօտ համհարզի պաշտօն վարեց : Երբ անկլիացիք Ֆիլադելֆիայէն յետ մղուեցան Քօսթիւշքօն կամաւ

ւոր զինուորներու զլուին անցած արիութեան հրաշքներ կ'որոճէր : Լաֆայէթ , որ զթշնամին հալածող զնդի զօրավարն էր , տաք կռուի երեկոյն կամ լույլ իմանալ թէ ո՞ր էր այն կամաւորներու առաջնորդը՝ սրտասխան ընկալաւ թէ «Երիտասարդ լեհացի մը , աղնուական տոհմէ , բայց աղքատ , և անունն է — եթէ չեմ սխալիր — Քօսթիւշքօ :» Նոյն զիշերն կամաւորները բուն բանակէն կէս ժամ հեռու իջեանած էին : Լաֆայէթ իսկոյն սլացաւ այն տեղ , հրամայեց ցոյց տալ Քօսթիւշքօյի վրանը , ներս մտաւ և տեսաւ անք զկտրիճը , որ տակաւին իսպառ արիւնոտ ու փոշուտ , գլուխն արմուկներու վրայ յեցեալ , սեղանի մօտ նստած՝ աշխարհադրական քարթէզի մը վրայ կը նայէր ուշադիր : Այս տեղ նստաւ առաջին անգամ զիրար ճանաչեցին և ամենասերտ ընկերութեամբ զուրուեցան առ միշտ :

Ամերիկայի ազատութեան պատերազմի մէջ նշանաւոր գեր կատարողներէն մինն էր և բառօն Շթօյպըն գերմանացին , որ Բրուսիոյ զինուորական բանակէն ելած էր — Եւրոպայի առաջին բանակէն , ինչպէս որ կ'ըսէր Ուաշինգթօն : Իբրև զօրավար զինուորները հրահանգելով նա շատ մեծ ծառայութիւն մատուց Ամերիկայի : Առանց բառ մի անկլիերէն հասկընալու յանձն առաւ իւրեան առաջարկուած ընդհանուր տեսչի պաշտօնը և կարճ միջոցին այնպէս մարդեց այն ազատութեան , որ խօսք մի , ակնարկ մի հերիք էր որ անպայման հնազանդէին իւր կամքին : «Պատերազմին յետոյ վարչութիւնը 16,000 աքր գետին շնորհեց նորան Վլանայն այն բազմադիւն ծառայութեան , զոր պատերազմի ժամանակ մատուցած էր Միացեալ Նահանգներուն :» Այլ գերմանացիք ևս Շթօյպընի նման եկած էին բռնութեան լուծի գեմ վարուած ազգի մը ազատութեան սուրբ դործին նպաստելու : Գաղութեալ գերմանացիք և սոցանէ սերեալ ամերիկացիք ամբողջ զնդեր կը կազմէին , և յատկապէս սորա էին , որոց վրայ ամենէն շատ յոյս կ'դնէր Ուաշինգթօն :

ԺԵ

ՄԻՆՉԵՒԻ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԻՒԸ

Եթէն տարի տեւց Ամերիկայի սրբազան պատերազմը : Նեղութեան

տրերն դեռ չէին անցած, օրերն երբ Ամբրիկայի ամենալաւ մարդիկն անգամ պատերազմի յաջող ելքէն կ'յուսահատէին: Չինուորական կար- կարգապահութիւնը տակաւին շատ թերի էր, բառն Շթոյպընի խո- հեմ անօրէնութիւնքն այս մասին չէին կրնար խտրոյն տարածուիլ բո- վանդակ զօրքի մէջ: Ամբողջ պատերազմական կարգը դեռ լինելու- թեան մէջ էր. պաշարի և զէնքի հայթհայթումն վատ, ուտելիքն և հազուստը պակասաւոր. այս պատճառով չափազանց տոկոսութիւն կը պահանջուէր զօրականէն: Ընդհանուր ժողովը ստիպուած էր թղթա- դրամ մտցընել երկրի մէջ. բայց անկլիսայիք առատ առատ կեղծ ստակ բերելով՝ նոցա արժէքն միանգամայն կտրեցին: Առևտուրն շիջած էր, զի թշնամին ծովի վրայ զօրեղ լինելով մերթ այս մերթ այն ե- դերքն կ'ասպատակէր, ինչ որ դանէր կ'յտոխշատակէր. ժողովրդի մէջ ևս ամեն անսակ նեղութիւնք ու տառապանք կ'իշխէին: Եւ դեռ իրաւիք չարիք չարիքի գային, եթէ աղցն Ռաշինգթնի պէս սպարապետ մը չունենար, որոյ օրինակն ամենքի դիմաց կ'փայլէր, որոյ իմաստուն խօսքերն ամենքի գլուխն ու սիրտը կ'թափանցէին հանապաղ: Չօրա- կանը պատերազմի ժամանակ զիւրամէտ է ամեն բան ինչ որ հաւանէ բռնութեամբ սեպհականելու, և յաճախ կ'պատահին այնպիսի պատե- բազմներ, երբ հանդարտ ժողովուրդը թէ ընկերի և թէ ոսոխի ձեռ- քէն հաւասար կ'նեղուի: Ընդհանուր ժողովն անգամ մէկ աչքը կ'փա- կէր, երբ ամբրիկայի զնդերէն մի քանիք հարստահարութեամբ պա- րէն կ'ճարէին. սակայն ոչ Ռաշինգթն, զի սա այս բանի մէջ ևս նպա- տակին յարմար և ուղիղ միջոցներու գիմնելով՝ համոզակեր բանիւք կը յորդորէր զժողովը, որ աւելի փոյթ տարուի պարէնի հոգատարու- թեան վրայ և յանդիման կ'առնէր այն չար հետեանքն որ անշուշտ ծագելու էին, եթէ առօրեայ պիտոյքն բռնութեամբ ճարելու սովու- րութիւնն արմատանար զօրքի մէջ: «Այս սովորութիւնը, կ'ըսէր նա, միայն վաղանցուկ դիւրութիւն կ'տայ ցաւին և շատ վատ հետեանք կ'ունենայ վերջը, զի տհաճութիւն, ատելութիւն և երկիւղ կ'սերմանէ ազգի մէջ և ամենալաւ զնդերն անգամ գէպի զեղծութիւն, յափշտա- կութիւն, հուղիկահարութիւն կ'գրդէ, որք յետոյ զժուարաւ կ'զսպուին և չէ թէ միայն ժողովրդի, այլ և նոյն իսկ բանակի համար մահաբեր կ'դառնան: Ամենամեծ աղէտը պիտի հասնին մեր վրայ, եթէ անհրա- ժեշտ հարկն այս տեսակ միջոցներ բանեցընելու ստիպէ զմեզ:» Բայց և այնպէս զրպարտութեան խայթէն ազատ չէր մնար Ռաշինգթն. յի- մար մարդիկ նորա արժէքն կ'որսնային, իսկ փառասէրք նորա տեղը

անցնիլ կ'ուզէին, որպէս, օրինակի համար Գաթէս զօրավարը: Այլ և այլ զնդերու մէջ ստահակ ըմբոստութիւնք կ'ծաղկէին — և սոցա պատ- ճառն էր դառն քաղցը, զօրականի կրած նեղութիւնք: Հետևի շնորու դէմ ընդհանուր ժողովը խիստ պատիժներ կ'ուզէր բանեցընել, սակայն Ռաշինգթն «Ի միտ առէք, կ'ըսէր ժողովին, որ զինուորները քարի կամ փայտի կտոր չեն որ կրնան դիմանալ քաղց ու ծարաւի, ցրտի ու բուքի:» Չմեն անգամ զինուորներն անկոշիկ կ'մնային և երբեմն կը պատահէր որ ձիւնի վրայ թողուած արխնոտ հետքերէն նոցա ճամ- բան կ'իմացուէր: Այս վիճակի մէջ սպարապետը սրտառու յորդորնե- րով կ'ջանար ամբարսնդել բանակի սիրտը և յանուն հայրենեաց կ'համո- յէր տոկալ վշտերուն. ապա թէ զօրականի կոչման վսեմութիւնը յան- զիման զնեղով կ'ըսէր. «Սուրբ է մեր կոչումը, թերութեան ստուերն անգամ կարող է նսեմացընել մեր փառաւոր զործերու փայլը:» Խստու- թեան սեղ Ռաշինգթն կ'գիտէր մարդկային սրտի լաւադոյն տարերքին և կ'ուրախանար անսնելով որ իւր հոգատարութիւնքն բարի արդեամբ կ'սպակուէին: Երկաթի խտուրթիւնն և սորան զուգակց ահարկութիւ- նը կ'թողըր միայն արտաքոյ կարգի դէպքերու համար և այն ժամա- նակ արդէն անողք պնդութեամբ ազատ ընթացք կ'տար պատերազմա- կան օրէնքին, որ ըմբոստներուն զնդակ կ'սպառնար և մասնիչներուն — կախազան:

Աշնան 1777ին զէնքերու յաջողութիւնը Պրանսուինի և շերմըն- թուրնի կռիւներու մէջ հետզհետէ երկու անգամ անկլիսացոց կողմն անցան: Պուրոյնի առաջնորդութեամբ դարձեալ անկլիական զօրք մի գալու վրայ էր Քանստայէն: Սորա դէմ Ռաշինգթն խաղցոց առ- անձին դուռը մի, որոյ զօրապետքն էին Գաթէս և Աննօլա: Թշնամիք ճակատեցան և առաջին նուազին զործն անորոշ մնաց. բայց քիչ մի յե- տոյ անկլիսացոց զօրավարը ստիպուեցաւ անձնատուր լինիլ Քարթա- գոյի մօտ, և Ռաշինգթն հետեւեալ լուրն հաղորդեց ընդհանուր ժո- ղովոյն. «Այս բարեբաստիկ օրն 6 զօրավար, 5,000 զինուոր, 5,000 հրացան և 27 ուսմբ անցոց մեր ձեռքը՝ թշնամաց բանակի բու- լոր մթերքովն հանդերձ. բաց յայսմանէ արշաւանքի ժամանակ բռնած ենք 2,000 զերի, ընդ որս են բազում ատիճանաւորք:»

Այս յաջողութիւնէն ետև Պրանսիոյ հետ դաշնակցելու գործը, ու- թոյ վրայ շատ խնամ կ'տարուէր, լրման հասաւ. սակայն դաշն հաս- տատելու ժամանակ Պրանսիոյ կառավարութիւնը չէ թէ նոր պետու- թեան համար ունեցած սիրովն կ'առաջնորդուէր, այլ վրէժ ժխդիլ

Թշնամութեամբ առ Անկլիան, զոր կ'ուզէր յողիս ապաստան առնել — տկարացընել հրչափ որ կարելի լինէր: Ամերիկացիք արդարեւ շատ ուրախ էին այս զինակցութեան վրայ, բայց Ֆրանսիոյ չափաւոր օգնութիւնը նոցա ուրախութեանը չհամարատասխանեց և նոքա վերջ 'ե վերջոյ ստուգեցին, որ չէ թէ օտարի թոյլ նպաստին, որ գեռ առանձին նահանգով զինքն վարձատրել կ'ուզէր, այլ իւրեանց յատուկ ճգնութեանը և ուժոյն պարտ էին ապաւինիլ:

Այժմ երկու թշնամաց հետ դործ ունենալով Անկլիան բոլոր իւր զօրութիւնն 'ի դործ դրաւ: Հօռ զօրավարը, որ տարիներէ 'ի վեր այնքան կ'սարժենար թէ աւստիկ շուտով իսպառ ջարդելու էր զըմբոսաները և այնու ամենայնիւ գեռ իւր նպատակին չէր հասած, յետ կոչուեցաւ և նորան յաջորդեց Քլինթոն զօրապետը: Անկլիացի դործակալներն այժմ աւելի ևս կ'դրդէին զհնդիկ ցեղերն, որպիսի են Իրօքեզներն ու Քրիքները, մահաբեր ասպատակով խուժելու Ամերիկայի նահանգներու վրայ և մինչև անգամ ինքեանք այս մարդասպան հրոսակներուն առաջնորդ կանդնելով հօռ և սուր կ'սփռէին իւր և զօրէին: Երբ անկլիացիք մարդատու շարիկաներու ձեռքով երկիրն աւերելու ետեւէ ընկած՝ հէք կիներու և օրիորդներու վրայ անգամ անլուր վայրագութեան չարիք կ'դործէին — ամերիկացոց ընդդիմութիւնն ևս քան զևս կ'բորբոքէր. կանոյք անգամ հայրենասիրութեամբ կ'վառուէին և նախատինք կ'հասնէր այն մարդուն կամ պատանուոյն որ իսկոյն պատրաստ չլինէր ծառայելու հայրենեաց:

Այնուհետև գեռ շատ պատերազմներ եղան, որոց ելքն մերթ այս, մերթ այն կողմն կ'հակէր, և Քօրնվալիս անկլիացի զօրավարը մի քանի մանր յաջողութեաներէ յանդդնելով կուրօրէն յառաջ կ'մղուէր և չղիտէր որ պաշարուելու էր Յօրթթօմոնի մէջ: Ուաշինգթոն, որ նաև Ֆրանսական դնդի առաջնորդն էր, ճարտար շարժումներով կրցեր էր խարել թէ զՔօրնվալիս և թէ զՔլինթոն հրամանատարն, այնպէս որ վերջինս շատ զարմացաւ, երբ լուր ընդունեց Քօրնվալիսէն, թէ «Ինձ անհնարին է ընդ երկար դիմանալ Յօրթթօմոնի մէջ. եթէ չէք կրնար փրկել զիս՝ ուրեմն պատրաստ եղէք ամենավատ լուր լսելու իմ մասին»: Ուժոյն ճակատամարտէն յետոյ — 19 հոկտեմբերի 1781 — Քօրնվալիս զինաթափ եղաւ. մօտ 8,000 անկլիացիք զերուեցան և 200 ումբ ամերիկացոց ձեռքն անցաւ: Գերիներէն ոչ ոք զրկանք չկրցեց, թէև յայտնի էր, որ քիչ մի առաջ ամերիկացոց զերիները չարաչար սպանուած էին անկլիացոց ձեռքով:

Այժմ ամեն տեղ համոզուեցան որ Ամերիկայի անկախութիւնն որոշուած բան էր: Վաֆայէթ, որ վերջին ուզով մէջ սքանչելի արեւու թեան փառք դրաւած էր, կ'զրէր Մօռէփա կոմսին. «Ողբերգութիւնն աւարտեցաւ. հինգերորդ արարուածն այս բուսէիս լինեցաւ:» Ֆրանկլին ևս այս բերկրաւիթ լուրն լսելով զօչեց. «Հնորհակալութիւն 'ի սրտէ այս փառաւոր աւետեաց համար. երկրորդ օձն ևս խեղդեց իւր որորանի մէջ պատանին Հերկուլէս:»

Հուսկ յետոյ Անկլիան ևս համոզուեցաւ որ այնուհետև կարելի չէր նուաճել զղաղթականները. հին նախարարներուն յաջորդեցին նորերը և 3 սեպտեմբերի 1783ին Անկլիոյ և Ամերիկայի ազատ նահանգներու մէջ հաշտութեան դաշն դրուեցաւ, որով Անկլիան վերջապէս նոցա հարաբերութեան ինքեան ընդունելու կ'ստիպուէր:

ԺԶ

ՌԱՆԱԿԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԱՌՆԵԼԸ

Հերոսական ճգնութեամբ Ամերիկան դրաւեց իւր ազատութիւնը. այժմ պէտք էր որ ժառանգած բարիքն իմաստօրէն 'ի դործ դնէր: Այլ որ պատերազմի ծագման և շարունակութեան ժամանակ ուշի ուշով դիտած էր ամերիկացոց ազգի որոշ յատկութիւնքը՝ հարկաւ ասելու էր, որ այսպէս բնաւորեալ ազգէ մը նաև խոհեմ ու հաստատուն յառաջադիմութիւն պէտք էր սպասել նոր դրաւած ասպարիզի վրայ:

Ի վերայ այսր ամենայնի իսկոյն պատերազմէն ետև մեծ վտանգ մի ելաւ ազատ նահանգներու դիմաց: Բանակի բուն կազմողքը այնպիսի մարդիկներ էին, որք արդէն տարիներէ 'ի վեր չղիտէին թէ ինչ առել է հանդիստ աշխատութիւնը: Ընդհանուր ժողովն որոշած էր տակաւին քանի մի տարի վարձատրել զնոսա, այնուհետև պէտք էին տուն վերադառնալ և նորէն զբաղիլ ընտանի գործերով: Նոքա հաւան չէին այս բանին և կ'ուզէին ապրիլ Ֆրանսական զինուորներու պէս, որոց զլինակը շատ նախանձելի էր: Ֆրանսական բանակն ասես թէ ինամուծութեան տուն մի էր տոհմիկներու համար, աղնուական երիտասարդներու գրեթէ մեծագոյն մասը հարստանալու և լաւ կեանք վարելու

յուսով բանակ կ'մանէր: Արսէս կ'խոցէին այս ոսկեփայլ ու զարդա-
 բուն մարքիզներն, կոմսներն ու քաղաքներն ամբիկացի անշուք պաշտօ-
 նաւորաց աչքը: այս վերջինքս իւրեանց պարզօ կ'երևու թով Ֆրանսա-
 սական սոսկ հրացանախիռներու և կրքաբլէնէրո՝ հետ անդամ չէին
 կրնար մրցիլ: Այսպէս ուրեմն ամբիկացի զօրականները Ֆրանսացոց
 վարժամ կեանքին հետամուտ լինելով կ'մոռային հասարակաց օրու-
 տը և կարծելով թէ զինուորներու վրայ աւելի փոյթ կ'ստարուի, երբ
 որ երկրի մէջ թագաւոր մի իշխելու լինի — պատերազմի ժամանակ
 ձեռք բերուած ազատ վարչութիւնն խորտակել կ'ուզէին և միաստա-
 կան իշխանութիւն հաստատել նորա տեղ: Եթէ այս խորհուրդն ընդ-
 հանուր կամքի արտայայտութիւնն լինէր՝ բնաւ բան մի չէր մնար ա-
 սելու սորա դէմ: Աւելորդ է վիճաբանիլ թէ կառավարութեան ո՞ր
 ձևն նախադասելի է — հանրապետականը թէ միաստականը,* զի
 ժողովրդոց բարօրութիւնը վարչութեան ձևէն չծաղիր, այլ օրինաց
 պահպանութենէն և խրաքանչիւր մարդոց անձնուէր ծառայութենէն
 յօգուտ ամբողջութեան: Բայց վերոյիշեալ խորհուրդը ազդի ընդհա-
 նուր փափաքէն չէր ելեր, այլ միայն ջոկ դատու շահասիրական հաշիւ-
 ներէն: Շատ բնական է որ այս դատը իւր զիտաւորութիւնն իրազոր-
 ծելու համար նշանաւոր մարդոց մը վրայ պարտ էր ուղղել աչքերն, և
 ո՞վ կարող լինէր այս մարդը, եթէ ոչ Աւաշինգթոն: Զօրքիցանկութիւ-
 նը սպարապետին յայննելու համար ընտրուած էր Ալուիս Նիքօլա ա-
 նուն հռչակաւոր հաղարապետը, որ և վարպետ ճարտարութեամբ
 կատարեց այս պատգամն զբաւոր կերպիւ: Սահմանադրութիւն մը մէկ
 թագաւորով իւր գլխին կառավարութեան ամենալաւ ձևն է Ամբիկա-
 յի համար, կ'զգէր նա, միայն թէ այս նպատակին հասնելու համար
 Աւաշինգթոն յօժարէր համետ տխորոս մի ընդունելու:

Աւաշինգթոնի տեղ շատերն 'ի հարկէ չէին զօրեր դէմ կենալ այս
 համբարուի երզին. բաւ էր միայն հաւանութեան նշան մը տալ
 գլխով — և զօրքն խկոցն թագաւոր կ'համբարուէր զիւր սպարապետը:
 Զօրականի բացական թեմամբ յաթոռ ամբառնալով նա կ'ստիպուէր
 անշուշտ շահիլ զինուորներու սիրան և աւելի տեղի տալ նոցա ազա-
 հութեանը: Եթէ Աւաշինգթոն հետեւէր այն երզին՝ նորա փառքն առ-
 միշտ կ'արատուէր և 'ի շնորհուկս մէկ դատու ամբողջ ազդն կ'զնա-
 սուէր: Պետութեան հիմնական օրէնքներն՝ որպէս համօրէն կամքի

* Այս մտքին Թարգմանիչը կարող չէ համաձայնիլ:

արտայայտութիւն՝ արդէն սպարապետ էին, պատերազմով ձեռք բե-
 բուած և ազդի արեամբ կնքուած էին, և այս օրէնքներու մէջ թագա-
 ւորի համար խօսք չկար: Արեմն Աւաշինգթոնէն պահանջուած բանը
 պարզ խօսելով ոչ այլ ինչ էր բայց եթէ ծանր պետական յանցանք: Քիչ
 մի առաջ Անկլիոյ բռնակալութիւնն էր որ ազդային սահմանադրու-
 թիւնը տապալել կ'ուզէր. այժմ կ'ինդրէին որ Աւաշինգթոն ևս նոյն
 զարշէլի վատութիւնն դործէ — Աւաշինգթոն, որ նոյն իսկ բռնակա-
 լութեան դէմ այսքան մարանչելով իւր կեանքն անդամ պատրաստ էր
 զոհել ազդային իրաւանց համար:

Ինչպէս որ վճուկներն ոսկի պտակ մը կ'ըղայունէին Մաքսիթի զի-
 մաց, նոյնպէս և Աւաշինգթոնի առջև ոսկեճաճանչ աղբայական թագ մի
 կ'ըղայունէին հիմակ: Բայց Աւաշինգթոն Մաքսիթ չէր և փառասիրու-
 թեան համար տեղ չկար նորա սուրբ ու վսեմ հոգւոյ մէջ: — Տես թէ
 ինչ կ'տամ քեզ, միայն թէ մեղանչիր, բախտիդ մեծութիւնը հաւա-
 սար կ'լինի յանցանքիդ: — Այսպէս կ'հնչէին սքոզեալ ձևով մարդկա-
 յին երջանկութեան թշնամու, տարե որ խաբեբայի, ինքնասիրութեան
 թիւնարկու օձին խօսքերը: Այս փորձութենէն վայրկեան մի անգամ
 չըղայթակղեցու Աւաշինգթոն և հետեւեալ գիրն արձակեց հաղարապետին.
 «Անակնկալ ապշութեամբ և վրդովմամբ ուշի ուշով կարդայի ձեր հաղոր-
 դած մտքերը: Հաւաստի եղէք որ երբեք ամբողջ պատերազմին սիրտս
 այնչափ չէր վշտացած, որչափ սոյն բոպէիս, երբ կ'իմանամ թէ այդ
 տեսակ մտքեր կ'ըջին զօրքի մէջ: Ամենախորին ստեղծութեամբ կ'նա-
 խատեմ և ծայրագոյն իստութեամբ կ'յանդիմանեմ այդ մտքերը: Առ-
 այժմ կ'ուզեմ որ սրտիս մէջ թաղեալ մնայ ձեր հաղորդածը. սակայն ե-
 թէ այս բանի նկատմամբ առաւել ևս յառաջ գիմնելու լինիք՝ իմացէք որ
 անհրաժեշտ պիտի լինի 'ի վեր հանել զեղելութիւնը: Անհարկն է
 ինձ հասկնալ, թէ արդեօք ինչո՞վ քաջալերած էի զձեզ առ այդպիսի
 խնդիր մը, որ ըստ իս մինչև ցարդ եղած վտանգներէն աւելի վատը
 կ'սպառնայ մեր հայրենեաց: Թերևս չեմ սխալիր, եթէ ստեմ, որ ոչ
 մի մարդ կարող չէիք գտնել որում ձեր զիտաւորութիւնն աւելի դատն
 դար քան թէ ինձ: Անդ սմին զղացմունքներուս դէմ չմեղանչելու հա-
 մար պարտիմ նաև յաւելուլ, որ ոչ որ ինձմէն աւելի բարիք չցանկար
 բանակին: Բայց կ'ուզեմ սահմանադրական ճամբով հասցնել զնա այս
 բարեաց և սորա համար բոլոր իմ դոյժ և ազդեցութիւնս 'ի դործ գնե-
 լու պատրաստ եմ: Ասան որոյ կ'աղաչեմ զձեզ — եթէ ունիք սէր առ
 հայրենիս, եթէ կ'ցանկար հոգ տանիլ ձեր յատուկ անձի ու յաջորդ

սերնդոց վրայ և ինձ և սպառի մը չնորհել — 'ի բնոց վանեցէք սրաեմնէդ այդ խորհուրդն և այսուհետև մի հաղորդէք ինձ այդպիսի բաներ՝ ոչ ձեր և ոչ այլոց անուամբ :»

Սոյն մտքով և սոյն հողով ներշնչուած էին և նորա հրատարական խօսքերը , որով խաղաղութիւն կ'աւետէր զօրքին : Այլիշէր նոցա փառաւոր քաջութիւնքը զոր գործած էին պատերազմական դաշտերու վրայ , կ'սպասէր գովասանօք թէ ինչպէս նախ տարբեր մասերէ բաղկացեալ հեպտէտէ տեղական նախապաշարմունքն մերկանալով հայրենասէր եղբայրներու մխարան և ներդաշնակ մարմին կազմած էին և վերջապէս յորդոր կ'տար որ խաղաղութեան մէջ սուրբ պահեն իւրեանց փառաւոր համբար : Այնպէր յուշածել որ ինչպիսիութիւնը , ուշիմութիւնն ու ջանասիրութիւնը — քաղաքային ու մասնաւոր կեանքի այս առաքինութիւնքը — նոյնպէս յարդի են , որպէս քաջութեան , տոկունութեան և համարձակ արիւթեան փայլուն յասկու թիւնքը պատերազմի մէջ : «Պաշտօնաւորք և զօրականք , կ'ըսէր նա , փոյթ տարէք հաշտ եղբայրսիրութեամբ սպրեւու քաղաքացւոց հետ և ամեն բան զոհեցէք մեր ազգային սահմանադրութիւնն կանպուն և զօրեղ պահելու համար . եթէ ոչ՝ ազգի պարծանքն ու սպառիւր կորած է այժմ և յախտան :»

Հացիկերոյ թիւ ժամանակ առանձին իմն հրածեշտ առնելով պաշտօնաւորներէն նա վերցուց իւր բաժակն և ասաց . «Յիրով և երախտազիտութեամբ հրատարական ողջոյն կ'տամ ձեզ՝ մաղթելով 'ի բոլոր սրտէ որ ձեր գալոց օրերն ևս նոյնպէս երջանիկ ու զուարթ լինէին , որպէս պատուաւոր ու փառաւոր էին ձեր անցեալ օրերը :» Անոց բաժակն ըմպելէն ետև աւելցուց . «Ձեմ կ'ընար մօտենալ ամեն մէկիդ բարեա . մնա ասելու . սակայն եթէ հաճիր մտաշիւր առ իս և պարզել ինձ աջը — յոյժ չնորհակալ կ'լինիմ :» Ամենախորին յուզմամբ ոտքի ելաւ Քնօքս զօրապետը , որ սպարապետի քով նստած էր , և տուաւ նորան իւր գողգոջուն աջը : Չգայմունքներու թափէն ընկճուած՝ Ուաշինգթոն խօսք մի անդամ չկոցաւ արտասանել և ընկաւ զօրապետի սարանոցի վրայ . այնուհետև մօտեցան և միւս պաշտօնաւորք , և ոչ մի աչք անարտօսք չմնաց այս բարեմնայի ժամանակ :

Ընդհանուր ժողովի մէջ կային ոմանք , որ պատմութեան զգուշաբար դէպքերն յիշելով երկիւղ կ'կրէին , թէ հաշտութեան յետոյ Ուաշինգթոն թերևս չէր կամենար առանց այլեայլութեան մերկանալ իւր զօրութիւնը : Բայց Ուաշինգթոն իւր պաշտօնը հանդիսաւոր նստի մէջ

վար դնելով ցոյց տուաւ , որ այն երկիւղն անտի էր : Այս առթիւ խօսած ճառի մէջ նա կ'ըսէր այլովքն հանդերձ . «Իմ տարակոյտներս անձնական կարողութիւններուս մասին կարող էին յետ կասիլ միայն մեր գործի արգարութեան վրայ ունեցած համոզմունքէս և երկինց աջակցութեան վրայ դրած յոյսէս : Այս պատերազմի փառաւոր վախճանը մեր բոլոր յոյսերն 'ի լրումն հանեց : Իմ գոհութիւնս առ նախախնամութիւնս Աստուծոյ և չնորհակալութիւնս առ այն քաղաքացիս , որք սիրով կ'օրնէին ինձ , աւելի ևս կ'աճին , երբ գործի բոլոր դժուարութիւնքն 'ի միտ կ'առնում :» Յետոյ նա կ'ըսէր . «Իմ հասարակային պաշտօնէութեան վերջնակիտին ժամանելով անհրաժեշտ պարտք կը համարիմ կնքել զայն աղօթքիւք առ Աստուած , որ նա օրհնութիւն չնորհէ մեր թանկագին հայրենեաց և բոլոր այն մարդոց , որք մեր կառավարութեան գործերն հողալու կոչուած են : Բանն զոր յանձնած էիք ինձ՝ վերջացաւ . կ'վերագառնամ արդ դէպի տուն՝ աղաչելով պատկառելի ակնբեդ — որ այսբան ժամանակ կ'առաջնորդէիք իմ քայլերս 7 ընդունիլ հրատարական ողջոյնս և արձակել զիս այն ամեն պաշտօններէ , որով պատուած էիք զիս մինչև այսօր :»

Այս ասելով Ուաշինգթոն իւր ողորապետութեան զուտղանը նախադահին տուաւ : Նախադահն պատասխանեց նորա ճառին և ասաց հանդերձ այլովք . «Ազատութեան գրօշակը նոր աշխարհի մէջ սարդելէն և թէ հարստահարողաց և թէ հարստահարելոց վնեմ՝ դաս մի տալէն ետև՝ դուք կ'թողնէք այդ պատերազմի դաշտն և ձեր հայրենակիցներու օրհնութիւնն հետեմիդ կ'տանէք : Սակայն մի կարծէք որ ձեր առաքինութեանց և արժանեաց փառքը ձեր զինուորական պաշտօնի հետ աւարտելու է . ոչ — հեռաւոր սերնդոց սիրան անդամ դարէ 'ի դար բոբբոբելու է այս փառքէն : Մեք ևս կ'միաւորենք մեր աղօթքը ձերինն հետ՝ թանկագին հայրենեաց բախտն Բարձրելոյն հովանաւորութեան տակ գնելով և կ'մաղթենք որ մեր քաղաքացիներու հողիքն ու սրտերը արժանի գանուին այն օգնութեան , զոր կ'չնորհէ մեզ Աստուած՝ զմեզ երջանիկ ազգ մի շինելու համար :»

Գեռ իւր մեկնելէն առաջ Ուաշինգթոն նամակ մի գրեց Շթոյսլըն զօրապետին , որով չնորհակալութիւն կ'յայտնէր թէ նորան և թէ նորա զերմանացի ազգակիցներուն , և 'ի նշան հաւատարիմ՝ սիրոյ կ'ինդրէր հաւաստի լինիլ , որ հանդամանքներու ներածին պէս չպիտի զանց առներ գործով իսկ վկայելու իւր բարեկամութիւնն առ նա :

Ուաշինգթոն մերժեց իւր թօշակը , միայն թէ արած վճարքը թող

տու աւ փոխարինել և այս առ թիւ մանրակրկիտ հաշիւ մը ներկայա-
ցուց, յորում ամեն մի ծախք մի առ մի նշանակուած էր:

Այսպէս վերադարձաւ 'ի Մօն-Վերնօն այն վեւեմ, իմաստուն և
բարի մարդը՝ իւր կեանքի մնացեալ ստրիքը հանդիստ միայնութեան
մէջ կնքելու համար: «Այժմ, կ'զրէր նա Վաֆայէ թին, օրուայ աղ-
մկէն և հասարակային գործոց խառնակ շփոթմունքէն հեռու՝ անձնա-
տուր կ'լինիմ այն քաղցր սարտաւորութեանց, որք կ'խորշին թէ փա-
ռասանչ զօրականէն և թէ այն նախարարներէն, որ աիւ ու գիշեր իւր
երկիրն բախտաւոր շինելու և հարեան պետութիւնքը խորտակելու
հոգսերով կ'մաշտի — ասես թէ երկրադուներ հերիք չէր ամեն մար-
դոց երջանիկ բնակութեան համար: Վեհասպետի ողորմած ժպտէն իւր
ճակատադիրն դուշակող գրանիկը չկրնար բնաւ դադարի կազմել այն
բարեբաստութեան վրայ որ վիճակուած է ինձ, ոչ որք չեմ նախան-
ձիր և ամենքին բարիք կ'ցանկամ: Այս նշանաբանիս հետեւելով կ'ու-
զեմ հեղիկ դէպի վայր իջեցընել կեանքիս գետը՝ մինչև որ հուսկ յետոյ
սպասերուս հասնիմ և հանդ չիմ նոցա մտա:»

Մօն-Վերնօնի մէջ իշխող առաքինութիւններէն մինն էր և հիւրա-
սիրութիւնը: «Գաժակ մի գլինի, կոոր մի գառն միս միշտ կայ քովս,
կ'զրէր Աւաշինգ թին Վաֆայէ թին. բարով թող գայ առ իս ով որ կա-
բող է գոհ լինել սովաւ, իսկ աւելի սպաստոյն կ'խաբուի:»

Պետութիւնն ու մասնաւոր անձինք 'ի զուր ջանացին վարձատրու-
թիւն մի բնդունել տալ Աւաշինգ թին: Այս միջոցին Աւաշինգ թինի խոր-
հրդով գետ մի նաւահանց շինելու համար կազմեալ բաժանորդական
ընկերութիւնը վաւերացում բնդունեց բնդ հանուր ժողովէն և տոյն առ-
թիւ խորհուրդ տեսնուեցաւ, որ 'ի նշան շտրհակալութեան փոխարէն
ինամոյց պարզ և մի բնձայուի նորան: Օրէնսդրական ժողովն որոշեց յի-
սուն հատ հարիւրական սթերլինի գնոյ արժէթուղթ յանձնել նորա
անօրէնութեանը: Գործին այնպիսի ընթացք մի արուած էր, որ եթէ
Աւաշինգ թին զայն մերժէր՝ օրէնսդրական ժողովի պատուոյն գէմ մե-
ղանչած պիտի երևէր. ուստի նա յայտնեց, թէ յօժար էր բնդունիլ
սարդը և, միայն թէ յօդուտ հասարակային բարօրութեան մտադիր էր
գործածել զայն, որ և կատարեց իսկ, զի յետոյ յայտնի եղաւ նորա
կտակէն, որ այն դումարը Միացեալ Նահանգներու մէջ համալսարան
մի հիմնելու թողած էր:

ԺԷ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Աւաշինգ թին արդէն չորս տարի խաղաղ կեանքի զուարճութիւնք կը
վայելէր զիւր մէջ, երբ հայրենիքն դարձեալ կոչեց զնա առանձին
իմն օգնութիւն մատուցանելու համօրէն ազգին: Միութեամբ ձայնից
նա ընտրուած էր — Նախողահ Միացեալ Նահանգաց: — Աւա-
շինգ թին բնաւ չէր հաւատար որ ընդունակ էր հոգալու այս բարձրա-
գոյն պաշտօնի սարտաւորութիւնքը: «Ինչ որ յաջողեցաւ ինձ որպէս
սպարապետի, կ'ըսէր նա, դեռ կարող չէ երաշխաւոր լինել, որ վար-
չութեան ասպարիզի վրայ ևս ձեռնհաս եմ գործելու ըստ արժա-
նւոյն:» Բայց ազնի ուրիշ կարծիք ունէր: Աւաշինգ թին անթիւ անհա-
մար յայտարարութիւններէն և հրովարտակներէն, զորս արձակած էր
պատերազմի ժամանակ, պարզ կ'երևէր որ նա չէ թէ միայն մեծ զօրա-
վար էր, այլև մեծ պետական մարդ: Եւ յատկապէս այժմ, երբ վե-
րանորոգեալ ազգային սահմանադրութիւնն առաջին փորձին ենթար-
կուիլ պէտք էր, ամենքն համոզուած էին որ միայն Աւաշինգ թինի ճար-
տար բազուկն բնդունակ էր պետութեան ղեկն վարելու: Ընկերները
համոզիչ խօսքերով կ'ըզոզէին զնա դարձեալ անդամ մի զոհել հայրե-
նեաց՝ զիւղական հանդիսար, և նա դանդաղելով կ'յօժարէր: «Այսօր
— գրուած է նորա յիշատակարանի մէջ 16 ապրիլի 1789 թուականի
ներքև — բարեաւ մնաս ասացի իմ մասնաւոր կեանքիս և տնային բախ-
տիս: Սիրտս այն աստիճանի ճնշեալ է վշտազին թախծով ու հոգսե-
րով, որ բառ մի անգամ չեմ գտներ զայն բացատրելու: Ա՛հ տես իմ
ինձ ուղղեալ հրաւերին և կ'երթամ Նիւ-Եօրք երկրիս ամենայն ինչ
լաւութիւն գործելու փափաքով, բայց չեմ կ'արձեր որ կարենամ 'ի
ըրուամ ամէլ նորա յոյսերը:»

Նորա ձամբորդութիւնը յաղթութեան հանդիսի կ'նմանէր. առան-
ձին իմն շքով պատուեցին զնա մանաւանդ Թրէնթինի բնակիչները, որք
այժմ միաբան ինդուլթեամբ Տեւալարի անցին երկոտասաներորդ տա-
րեդարձը կ'տօնէին: Ամբողջ վրայ խորհրդաւոր վեճադրով յաղթա-
11

նակի կամարներ շինուած էին և սպիտակ շորերով պճնեալ փոքրիկ աղ-
ջիկները ճամբու վրայ ծաղիկ ու փունջ կ'ցանէին, և ազդի ընտրեալն
այս ճամբով կ'անցնէր: Փառաւոր կերպիւ զարդարեալ նաւ մի, որ 'ի
նշան տասն և երեք նահանգաց՝ տասն և երեք նաւաստիներէ կ'վա-
րուէր, 'Եւ-Նօրքի նաւահանդիսոր կ'տանէր զնա: Ազդի ընդհանուր
սէրն ուրախ կ'առնէր զնա, բայց չէր կրնար վանել սրտէն այն տխրու-
թիւնը զոր կ'զգար հանդերձեալ գժուարութիւնքը մնաբերելով, և
այս տխրութիւնը յայտնի կ'երևէր նորա վշտահար գէմքէն և բոլոր
շարժմունքէն:

Պաշտօնամասի ճառին մեջնա կ'ըսէր. «Չեմ կրնար յանձն առնել իմ
նոր պաշտօնս՝ նախ և առաջ ջերմեանդ աղօթք չմատուցած առ Տէրն
ամենայնի, որ աղաց ժողովներուն կ'հասկէ և իւր նախախնամութեամբ
մարդկային հանձարի թերութիւնքը կ'լրացունէ. կ'հայցեմ 'ի նմանէ որ
խնայունէ իւր օրհնութիւնը Միացեալ Նահանգներու ժողովրդոց վրայ,
որ հովանի լինի գթաբար մեր նոր կառավարութեանը զոր ազդն ինք
իրեն առած է բարեբաստիկ լինելու յուսով, և վերջապէս լոյս շնոր-
հէ պաշտօնաւոր անձանց մտքերուն, որք այս կառավարութեան գոր-
ծերն հոգալու կոչուած են: Այնպիսի աղերս մի ուղղելով բարձրագոյն
Էին, առ միակ աղբիւրն բարեաց, վստահ եմ որ դուք ևս բովանդակ
ազդի հետ զգացմունքներուս բաժանորդ կ'լինիք:» Ի վերջոյ կ'ըսէր.
«Այցելիլ ճշմարտութիւններէն մինն է այս, թէ մարդկային աւարի-
նութիւնն ու բախար անլուծ յօգերով իրարու հետ կապուած են, թէ
մեր երջանկութիւնը մեր պարտքերու մէջ գրուած է և թէ վերջապէս
արդար ու մաքուր սկզբունքներով առաջնորդուող քաղաքականութիւնն
է որ ազդերու բարօրութիւնը կ'հիմնէ միշտ: Երկինք երբէք չեն
կրնար բախտաւոր շինել զաղց մի որ կարգի և արդարութեան մշտնջե-
նաւոր օրէնքներն առ ոչինչ կ'զնէ. միայն այս աւարինութեանց հետե-
ւելով կարելի է մեզ վառ պահել ազատութեան սուրբ հօրն, զոր մեք
ևս կոչուած ենք պաշտպանելու այսօր:» Եւ իւր ընկեր Վաֆայեթին
կ'զրէր. «Միաբանութիւն, ազնուութիւն, վաստակասիրութիւն և չա-
փաւորութիւն — աւասիկ սոքա են այն միջոցները, որով մարթ է մեզ
երջանիկ ազդ դառնալ. երջանկութեան այս շաւիշն այնպէս պարզ և
շիտակ է, որպէս լուսոյ ճառագայթը:» Այժմ ևս թուշակ չէր ընդու-
նէր և յոյժ ուրախ էր որ առանց վարձու կարող էր սպաս տանիլ իւր
երկրին:

Սրբազան երկիւղածութեամբ իւր պաշտօնի գործերուն ձեռնարկե-

ըով այժմ նա գուն կ'զործէր յաղթահարելու առջևն դիզուած անթիւ
խոհերն. պատերազմէն 'ի վեր ահազին պարտքեր կ'ծանրանային ազդի
վրայ, առևտուրն և արհեստները կենարար ազդեցութեան կ'մնային,
երկրի սահմանները հնգիկներու ասպատակով կ'նեղուէին:

Քրանսական յեղափոխութեան որոտընդոտս պայժման հետ նոր իմն
դժուարութիւնք 'ի յայտ եկան: Առաջինգ թն կ'տեսնէր որ Փարիզի պա-
տահաբքը նախնութեայ վատ կառավարութեան բնական հետեանքն է-
ին. սակայն և այնպէս՝ չնայելով իւր սիրոյն առ ջոկ ջոկ Փրանսացիս՝
խոհոյն համոզուեցաւ որ այս ազդի մեծագոյն մասը տակաւին չուներ ի-
նքօք ազատ վիճակի մը հասնելու համար պէտք եղած բարոյական վեր-
մութիւնը, և նոյն ժամայն մարդարեական սրտով գուշակեց Փրանսա-
կան շարժողութեանց եղիկի վախճանը: Ակնարկելով այս աղ-ի խօ-
լութեանց և արևուտըտ վրէժխնդրութեան գործերու վրայ, որով
մեղապարտ կ'կացուցանէին զինքեանք, նա կ'ըսէր. «Նախն վասնդ
սպառնացող խութ և խոչերը բազում են. նա կարող է ժայռի մը դար-
նուելով կործանուիլ և այնուհետև այս փոթորիկին բռնակալութիւն մի
կ'հետևի, որ քան զառաջինն չար պիտի լինի:» Քրանսական յեղափո-
խութեան մեջ երեցած առողջ պաշտպանները Ամերիկայի ազատութեան
համար մարտնչող Փրանսացիներու ձեռքով բերուած էին. բայց այս
պաշտպանները չէցան ընդ երկար յաջողութիւն գտնել և առիպուեցան
տեղի տալ այն զարհուրելի տագնապին, որ ազդի գազանային ապա-
կանութեանը լեռովին համապատասխան էր: Առաջինգ թն մինչև 'ի
խորս օրտի գըրգեցաւ Աուգուստին Թ.Պ.ին վիճակուած սրտահարէն.
Իւր կենքի մէջ նա երբէք այնպէս շանթահարուած և 'ի կոր ընկ-
ճուած չէր, կ'ըսէին նորա մերձաւորքն, ինչպէս որ այն չարբաստիկ
թագաւորի գլխատութեան յոյժն առնելիս:

Քրանսիոյ ծայրայեղութիւնքն Ամերիկայի մէջ ևս արձագանք գտան,
այս տեղ ևս Յակորիններու պաշտպաններով ընկերութիւնք կազմուե-
ցան: Սորա էին որ հրատարակեցին «Առաջինգ թնի թագման հան-
գէսն» վերնագրով պատկերը, ուր նա կէտէ-Քլիսի ներքև կանգնեալ
նկարուած էր. սոքա չէին ծածկեր բնաւ որ կ'ցանկային ոսնակոխ ա-
նել զԱռաջինգ թն և տապալել կանգուն վարչութիւնը:

Թշնամի կուտակեցութեանց մոլեղին խռովութեան մէջ Առաջինգ թն
նոյնպէս պինդ կանգնած էր, որպէս երբեմն Գեյլալարի վրայ, երբ
կատաղի մրրիկն ու կուտակեալ սառոյցները իւր նաւն խորտակելու
կ'սպառնային: Քրանսայի արևնահեղեղերան հետեանքներու շնորհիւ

Ամբիկայի ծայրայեղ դասու ազդեցութիւնն ևս հետզհետէ թուլացաւ և վերջապէս բոլորովին շիջաւ :

Յամին 1793 ժողովուրդն երկրորդ անգամ նախագահ ընտրեց Պաշինգթին : Կորա ութամսայ դորժուհեութիւնն անբաւ բարեք շնորհեց երկրին և օրինակ դարձաւ յաջորդ նախագահներուն , յորոյ ամենալաւերն աղջային օրէնքներու գործադրութեան մէջ միշտ հետեւած են Պաշինգթինի վարչութեան եղանակին :

Երբ երկրորդ քառամսակէն յետոյ Պաշինգթին խնայաւ որ երրորդ անգամ ևս մտադիր էին յանձնել իւրեան պետութեան զեբադոյն պաշտօնը՝ նա հրաւիրեց հայրենակիցները առաւել նոր ձեւ քերու մէջ դնել պետութեան զեկն և յայտնեց հրապարակային դրով , որ չէր ցանկար ընտրուիլ այսուհետեւ : Սոյն առթիւ հրաժեշտ կ'առնէր աղջէն և հետեւեալ ոսկի խօսքերն կ'աղղէր առ նա . « Կրօնն ու բարոյականութիւնը քաղաքային բարօրութեան անհրաժեշտ սիւներն են , որոյ վրայ կը հանդիսն իւրաքանչիւր մարդու պարտքերը , մարդկային երջանկութեան հզօր հաստարաններն են , զորս չէ թէ միայն բարեպաշտ հաստացողք , այլև խոհեմ քաղաքայեալք պարտին յարդել և մեծարել : Եթէ նոցա կարևորութիւնը մանրամասն զննել ուղեւայինք՝ հատորներ գրելու պէտք կ'լինէր : Ես միայն մեր հարց կ'առաջարկեմ . ո՞ւր կ'մնայ սեպհականութեան , պատուոյ և կեանքի արահովութիւնը , եթէ հանդիսի 'ի մեզ կրօնական պարտաւորութեան զգացմունքը , որ ճշմարտութիւնը յերևան հանելու միակ միջոցն է դատարաններու մէջ : Ամանք կ'ըսեն թէ բարոյականութիւնը կարող է և առանց կրօնի սեւել . սակայն այսպիսի կարծիք յայտնելէ առաջ պէտք էր նախ լաւ մը քննել զայն : Արքան և հզօր լինէր բարի դատախարակութեան ազդեցութիւնը քանի մը անհասանելու սրտին վրայ , բայց և այնպէս խեղճն ու փորձը չեն զօրեր ապացուցանելու որ աղջ մի կարող էր բարոյական մնալ առանց հաւատքի : » Յաւարտ բանից նա կ'ըսէր . « Իմ վարչութեանս տարիներու վրայ հողոյ աչօք յետս նայելով՝ խիղճն վրայ կը կոչեմ ինձ , որ երբէք զիտութեամբ չեմ սխալած . սակայն իմ թերութիւնքս լաւ կ'ճանաչեմ և կ'խոստովանիմ որ թերևս մի քանի բաներու մէջ վերլպած եմ : Ի՞նչ և լինէին իմ այս վերլպակներս՝ ջերմուանդ սրտով կ'աղաչեմ զՎարդին , որ նա չափաւորէ և հեռադընէ մեզմէն նոցա չար հետեւանքը : Չեզմէ հրաժեշտ առնելիս այս յոյն ևս իմ հետ կ'առնում , որ հայրենիքս ներող աչօք կ'նայի թերութիւններուս վրայ և քառասուն ու հինգ տարուայ ջերմուանդ ծառայութեանս մէջ արած

սխալանքս իմ տկարութեանը վերադրելով՝ մոռացութեան կ'տայ զանոնք , մնաւ անդ զի և ինքս յախտենական խաղաղութեան օթեաններն գնալու եմ ընդ փոյթ : »

Տակաւին երկու և կէս տարի հանդիստ բախա վայելեց նա իւր կալուածքի մէջ : 12 դեկտեմբերի 1799 ձիով շրջելիս փոթորիէ մը բռնուելով մտեցաւ : Գործ գրուած դարմաններն բնաւ չօգտեցին . հիւանդի շնչատութիւնը ծանրացաւ և նա ջինջ հայեացքով և հանդիստ ձայնով ասաց բժշկին . « Հիւանդութեանս սկզբէն 'ի վեր զիտէի որ չպիտի աղաթիմ . մահս ծանր լինելու է , բայց չեմ երկնչեր : Ընունչս երկար տեւել չլրնար : »

Երեկոյեան ինն ժամին նա անցաւ 'ի հանդիստ յախտենական :

Մահուան օրն էր 14 դեկտեմբերի 1799 , երբ վաթսունութամեայ հասակի մէջ էր :

Կտակի մէջ Պաշինգթին ազատութիւն կ'ընտրէր բոլոր ստրուկներուն՝ առանձին յիշատակութիւն անելով ձերբերու և հիւանդներու վերայ , և նշանաւոր գումար կ'ընտրուր մէկ համալսարանի և աղքատ տղայոց դպրոցի մը հիմնարկութեան համար :

ԺԸ

ՕՐՀՆԵԱՒ ԼԻՆԻ ՆՈՐԱ ՅԻՇԱՏԱԿԸ

Գողղոջուն ձայնով յայտնեց Ճօն-Մարշալ պատգամաւորաց ժողովոյն Պաշինգթինի մահը : Անկողիներու սրտի յուզմունքն այնպէս աւժիցին էր , որ պէտք եղաւ վերջընել նիստը : Ննջեցելոյ վերջին կամքին համեմատ նորա մարմինն առանց որ և է շքոյ և գամբանական ճառի իւր պարտիղի մէջ թաղեցին : Ազատ որմաշէնները (Ֆրանք մասն) , որոյ կարգի աղբիւ կանոններուն նա իւր ամբողջ կեանքին հետեւած էր անբարբաւ լուծեամբ , զամբիւղ մի սպիտակ վարդ ցանեցին դերեզմանի մէջ :

Երեսփոխանաց ժողովոյն դահերէցիի աթոռն սեով պատուեցաւ և անդամները սղոյ զգեստ հագան մինչև ի նոյն տարուայ նստերու վերջը : Արեւիշեալ Ճօն-Մարշալ սրտաուշներբող մի կարգաց 'ի յաւեժական բարբանութիւն Պաշինգթինի , և պատգամաւորք միաբան յօ-

ժարութեամբ ընդունեցին նորա առաջարկութիւնը յանձնաժողով մի կազմելու, որպէս զի սա խորհէր թէ ինչ կերպով կարելի էր աւելի լաւ — մեծարել Աւաշինգթնի յիշատակը — յիշատակն այն մարդու, որ առաջինն էր պատերազմի մէջ, առաջինն խաղաղութեան յանձնակէտ առաջինը հայրենակիցներու որդին մէջ:

Ամիսփոխք համառօտիւ ինչ որ երևելին Գերովինուս ասած է Աւաշինգթնի վրայ նորա բարուց խորիմաստ և ճարտար նկարագրութեան մէջ:

Ինչէր Աւաշինգթնի մէջ ընակող այն դաղանի զօրութեան պատճառը, որով կարող կ'ըլնէր իշխել մարդոց և հանդամանքներու վրայ: Պատճառն այս էր, որ զիտէր խոնարհիլ միտներու կարծեսց առջև և ըստ պատշաճի յարգել ամեն մարդոց իրաւունքն ու պահանջները, որ ծանր էր բարութեան և հաստատ խորհրդով, որ պարտուց զոչոյմանը խտրել կ'հետեւէր և որ վերջապէս կ'սրաշտէր իւր սրտի մէջ խղճի երկնային կայծը, զոր ՚ի մանկութենէ արդէն կանոն դրած էր իւր համար: — Խորին ասելով թիւն կ'ըզար Աւաշինգթն խաղի դէմ, զոր կ'անուանէր աղբիւր ամենայն չարեսաց, սպականիչ բնուորութեան և առողջութեան, որդի ժլատութեան, եղբայր անիրաւութեան, հայր կորստեան: — Ազգային բարօրութիւնն ամեն բանէ վեր դասելով՝ նա կ'ընդունէր զպատերազմը միայն որպէս խաղաղութեան հասնելու միջոց. ռազմական յաղթանակներն ինքն ըստ ինքեան դատարկ սնտոխք կ'երևէին նորա աչքին, եթէ նոքա ձեռք բերուած անկախութենէ ետե՛ս՝ նաև ժողովրդի աղատութեան և առողջ ու բարդուած զարգացման երաշխատութիւն չտային: — Նա կարող էր իրաւամբ ասել որ երբէք բարեկամութեան կամ ազգակցութեան աշուտանօք չէր զրդուած պաշտօններ բաժանելու ժամանակ, և մինչև անգամ՝ նոյն իսկ թշնամիք կ'խոստովանէին, որ այս նկատմամբ ոչ մի մարդ նորա չափ արդարութիւն չունէր: — Արդէս ակործելի է տեսնել, որ նա իւր փառաց ամենաբարձր աստիճաններու վրայ անգամ պատերազմի դաշտէն դէպի մշակութեան դաշտը վերադառնալու կարօտ կ'ըզար, որ կը տենչար հանդիստ առնուլ իւր այդեաց և թղենաց ստուերի տակ — իջնել հասարակային կեանքի բարձունքէն դէպի ընտանեկան զբօսանաց շրջանը, խորասուզուիլ ներքին կեանքի քաղցր միայնութեան մէջ, որոյ շնորհած վայելքն անցայտ են փառատենչ զինուորին և բազմատանջ պետական անձին: — Քրիստոնէական աշխարհը հաղիւ թէ կարող է որ և է զործունեայ մարդու կեանքի մէջ կրօնական բարեպաշտութեան

և խոնարհութեան երկրորդ օրինակ մի ցոյց տալ Աւաշինգթնին հասարար, որ արդարև սուրբ սրտիւ դուն կ'ըործէր նմանող լինիլ Փրկչին արդարութեան, մեղմութեան, եղբայրսիրութեան, հեղութեան և հոգւոյ հանդատութեան մէջ: — Աւր և զարձնէինք աչքերս նորա կեանքն ուշի ուշով զննելիս՝ ամենուրեք նորա բնաւորութեան պարզութիւնը կ'տեսնէր, կ'տեսնէր նորա կեանքի վսեմ անուութիւնը, որ զմեզ ևս առ բարին կ'ըրդէ: Առաքինութեան վրայ երկբայոգք ավիրերան եղան նորա առջև. նորա կեանքն իւր անշուք պարզութեամբ ամենայն ինչ սուտ փառք ու փայլ նսեմացուց և նորէն սուա պատմութեանը հասարակային անձինքն քննելու աւելի բարձր չափ մի, որ բռնակալութեան դարերու մէջ զրեթէ իսպառ կորած էր: Նարօլէճնի մը զործունէութեան ակնախտիզ ճառագայթներն թէև պահ մի խանդարեցին այս չափը, այլ չկրցան եղծանել զայն առ միշտ: — Այսպէս Գերովինուս:

Շնորհապարտ հայրենիքն այս մեծ, իմաստուն և բարի մարդոց պատկերն յաջորդ սերնդոց աչքի առջև յաւերժացնելու համար զանազան տեղեր ՚ի յիշատակ նորա մարմարեայ արձաններ կանդանց, նորա պատկերն այս օրս իսկ թէ պալատներու և թէ խողերու մէջ կ'երևի: Յոյժ չնչին է, կ'ըսէր ինձ ամերիկացի մը, այն մարդոց թիւն առ մեզ, որք իւրեանց տան մէջ պատուոյ տեղ մի չշնորհէին մեր մեծ բարերարի պատկերին, որ մեզ համար նոյնն եղած է, ինչ որ Նիդուրլին Սպարտացոց և Սոլոն Աթենացոց համար: Եթէ նա ալեւոր հնութեան մէջ ապրած լինէր և նորա մարերն ու զործերը նոյնպէս ազգի շահին նուիրուած լինէին, յեսնորդք անմահութեան պատկ կ'հետեւէին նորա ճակտին և յաթոռ աստուածութեան կ'ամբաստնային, իբրև աստուած մի կ'պաշտէին: — Եթէ Աւաշինգթնի պատկերը կենդանի մնայ Ամերիկացոց սրտի մէջ, որք նոր ժամանակիս մեծ հայրենասիրի օրինակին հետեւելով արդէն բովանդակ աշխարհի հիացման արժանի զործեր շինած են — այս ազգը մինչև ցարդ չերևակայած երջանկութեան պիտի հասնի: Յանկանք Ամերիկացոց մեծ ազգին որ նա յօգուտ իւր միշտ Աւաշինգթնի կեանքով իսկ բացուած ճամբու վրայ դիմէ և փափաքէրք որ նորա վսեմ օրինակը և միւս ազգերու համար հետեւելու օրինակ լինի, մանաւանդ այն մարդոց համար, որք — ինչ կառավարութեան տակ և ինչ կ'ուզէ լինէին՝ իշխան, նախագահ, նախարար, զօրապետ, պատգամաւոր — յատկապէս ժողովրդոց բարօրութեան վրայ հսկելու կոչուած են:

Սակայն մեր ամենաջերմ և սրտաղին փափաքներն մանուկ սերնդին կ'վերաբերին : Այլ մանկունք աղլի , պահպանեցէք ձեր սրտի սրբարանին մէջ այս վսեմ հայրենասիրի պատկերը , ջան դրէք նմանող լինիլ նորա սուրբինութեանց և ասպ թէ սովորեցէք նորամէն , թէ ինչպէս պէտք է սիրել զաղլն և ծառայել հայրենեանց :

Վ Ե Ր Զ

ՆԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

Գերմաներէն լեզուին փոքր ի շատէ հինուս ընթերցողք կարող են Ուաշինգթոնի վրայ արեւի ընդարձակ տեղեկութիւն ուսանալ հետեւեալ գիրքերէն .

V. Drugelin. Das Leben Georg Washingtons.

H. Elsner. Befreiungskampf der nordamerikanischen Freistaaten.

G. Gervinus. Geschichte des neunzehnten Jahrhunderts.

C. Neumann. Geschichte der Vereinigten Staaten.

W. Pütz. Erd- und Völkerkunde.

Fr. V. Raumer. Leben und Briefwechsel G. Washingtons.

Fr. Steger. Allgemeine Weltgeschichte.

Y. Venedey. Georg Washington.

W. Wachsmuth. Historische Darstellungen.

G. Zeiss. Lehrbuch der allgemeinen Weltgeschichte.

Բաց յայտնանէ Ուաշինգթոնի վրայ գրած են հետեւեալ մեծամասն գերմանացի պատմաբանները , որք են՝ Ելսներ , Վէպեր , Գուսպեր , Ուօթեր , Գրուբեր , Բէքեր , և այլն :

Գրուգլին . Գէորգ Ուաշինգթոնի կեանքը :

Էլսներ . Հիւսիսային Ամերիկայի Նահանգներու ազատութեան պատերազմը :

Գերվինուս . Իննետասներորդ դարու պատմութիւնը : Շատ երեւելի գործ : Փառք այն Հային , որ հայրենի թարգմանէ այս ակեղերահաշակ գործը :

Նոյման . Պատմութիւն Միացեալ Նահանգաց : Այս Նոյման , որ արդէն վախճանած է , շատ լաւ հայրենի գիտէր : Ունի գրած նա և Հայոց դրականութեան պատմութիւնը :

Փից . Երկրի և ազգերու գիտութիւնը : Պատմական մանկավարժի պատմական գործը , որ մեծ համբաւ կը վայելէ :

Ռաումեր . Գէորգ Ուաշինգթոնի կեանքն ու թղթակցութիւնը :

Շթէգեր . Տիեզերական պատմութիւն :

Վէնէդայ . Գէորգ Ուաշինգթոն :

Վաքսմուծ . Պատմական պատկերներ :

Չայս . Պատագիրք Տիեզերական պատմութեան :

Խօսք թարգմանչին	1
Ա. Մանկութեան օրեր	3
Բ. Երկրաչափ	11
Գ. Երեք տարի անտառներու մէջ	15
Դ. Պատրամուտք	19
Ե. Ուաշինգթոնի արաջին պատերազմները	23
Զ. Խաղաղութեան տարիքը	29
Է. Մինչև յընդհանուր ժողովը	38
Ը. Առաջին փորձը	45
Թ. Ուաշինգթոնի սպարապետ ընտրուիլը	47
Ժ. Ուաշինգթոն Պոսթօնի առջև	50
ԺԱ. Ազատութեան յայտարարութիւնը	54
ԺԲ. Ծանր ժամանակներ	57
ԺԳ. Տեւալարէն անոյնիլը : Թրէնթի և Փրինքընթոնի յաղթանակները	63
ԺԴ. Լաֆայեթ — Գօսթիւշքօ — Շթօյալն	67
ԺԵ. Մինչև հաշտութեան հաստատուիլը	71
ԺԶ. Բանակէն հրաժեշտ առնելը	75
ԺԷ. Վերջին ժամանակը	81
ԺԸ. Օրհնեալ լինի նորա յիշատակը	85
Ծանօթութիւն թարգմանչին	88

Վ Ր Ի Պ Ա Կ

Երև	Տող	Սիււ	Ուղէւ
4	6	կ'լինէին	կ'շինէին
8	5	կ'բռնէր	կ'բանէր
13	24	250 խոր	250 սոր խոր
»	25	վերանեան	վերորնեան
16	13	Արեղաց	Աարեղաց

ՀՀ Ազգային գրադարան



NL0341036

